


991 99-3

F 28



891.542-3

F-28

08 DEC 2011

Գ. Բաղդասարյան

ԷՍԲԻԶՆԵՐ

ՎԵՐԱԾԻՆ ՀՅՅԱՍՏԱՆԻՆ
 անդրանիկ Առեր
 ՏՈԳՐԱՆ ԾԱԶԱՐԾԱԾԻՑ
 13 ՆՈՅՄ. 1913 Ք. ԹԻՖԼԻՍ.

Թ Ի Փ Լ Ի Գ
 Տպարան «Կոպիտակ»
 1913



Handwritten text in blue ink, possibly a date or reference number.

80

1931

Faint mirrored text from the reverse side of the page.

ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐ

Ի՞նչպէս գտնել բնութեան մէջ գեղեցկութեան և ներդաշնակութեան կատարելագոյնը. ահա մի հարց, որ երկար ժամանակ տանջում էր իմ միտքը: Թափառում էի սարեր ու ձորեր, դաշտեր ու անտառներ և ամեն տեղ բացւում էին աչքիս առաջ միմեանցից գերազանց, սքանչելի պատկերներ: Նրանք գրաւում էին ինձ, բայց գեղեցկութեան այն վսեմագոյնը՝ որ անորոշ կերպով երևակայութեանս մէջ պտտւում էր, չէի գտնում բնութեան մէջ:

Մի խաղաղ առաւօտ, երբ արևը հորիզոնից նոր էր բարձրացել ու ժպիտ տարածել երկրի երեսին, մի խորհրդաւոր անկիւնում, փոքրիկ ու յստակ աղբիւրից ոչ-հեռու, մատաղահաս կաղնին իր մոյգ կանաչագոյն տերևները տաքացնում էր արևի ճառագայթներով: Իր երկար ստուերի տակ հիւրասիրել էր մի գիւղացի ալեորի: Ծերունին՝ ծխաքարչը բերանին, մոխրագոյն ծուխ էր դուրս փչում թանձր բեղերի միջից: Միքանի քայլ հեռու չորս գիւղացի երիտասարդներ՝ մանգաղ-

կտորները և իր շուրջը մեծ հրապարակ բաց անում՝ փայլուն շողեր արձակելով երկրի վրայ. երբեմն զգուշութեամբ սլանում էր միակ, սևագոյն ամպի մեծ կուտակի կողմը, փաթաթւում, թաղւում նրա թանձր փէշերի մէջ և մի ակընթարթում այս ու այն կողմ շամանդաղ տարածում: Բնութեան մէջ խաղաղութիւն էր տիրում:

Այդ միջոցին, մի ժայռի ստորոտին, ուր հոնի մանր ծառեր էին շարուել, կանաչապատ մակերևոյթի վրայ խարոյկ էր վաւուում: Նրա շուրջը նստոտած էին միջանի հոգի շինականներ, որոնց մէջ կային և՛ ծծի երեխայ, և՛ զառամեալ ծերունի: Նրանք ուխտաւորներ էին, որ ամբողջ օր ճանապարհորդելուց յետոյ իջել էին հանգիստ առնելու համար: Մայր կանգնած էր մի փոքր հեռու, իսկ եզները բարձրաձայն շունչ քաշելով պոկում-ծամում էին ծառի տերևները:

Մայրի կողքին մի մանկահասակ կին օրորոցն էր օրորում և անհամարձակ ձայնով նանիկ ասում: Խարոյկի մօտ նստած մի երիտասարդ տղամարդ հոնի ճիւղերից շամփուրներ էր պատրաստում խորովածի համար: Ծերունին պատմում էր մի ինչ-որ արկած իր վաղեմի կեանքից, իսկ իր վեց տարեկան թոռը՝ ժպիտն երեսին ուշադրութեամբ լսում էր:

Կրակը անտիճանաբար բոցավառում էր և իր շուրջը կարմրագոյն լոյս տարածում: Ծովի

բարձրանում էր դէպի երկինք և փոքր փոքր նօսրանալով հալւում էր գիշերային օդի մէջ: Երկնքում լուսինը ամպերի հետ էր գլորկախառնւում, իսկ երկրի վրայ լոյսերի և ստուերների խաղ էր կատարւում: Դաշտի ու հեռաւոր սարերի վրայ երբեմն գունատ ու քնքուշ շամանդաղ էր մաղւում, երբեմն ախուր ստուեր իջնում:

Ուղեցի այստեղ գտնել զեղեցկութեան ու ներդաշնակութեան կատարելագոյնը, բայց իզուր:

Յուսահատութեան մէջ էի: Եթէ բնութեան մէջ չեմ գտնում իմ որոնածը, սպաճում էի ես, ուրեմն նա գոյութիւն չունի երկրի երեսին: Թափառում էի շաբունակ: Մտնում էի անտառների մութ խորքերը, բարձրանում էի սառցապատ լեռների գագաթները վրայ, իջնում էի կիրճերի անդունդները, ութ խոնաւութիւնից առ մեն ինչ փառւում է, բայց ամէն տեղ էլ ներքին ճոշը լսելով հրապարակւում էի:

Բայց մի օր, մայիս ամսին, մի անուպատիկ տեսարան բացուեց աչքիս առաջ:

Կէսօրին մօտ էր: Արևը գունդապատկապատ տակ բարձրութիւնից գութեկան տաքութիւն էր արձակում: Աստեր ու թիֆթ, դաշտեր ու բլուրներ ներկուել էին կանաչ քնքուշ գոյնեքով:

բայց տարբեր տեսակի: Սրածայր լեռների գագաթների վրայից ձիւնը հեռացել էր:

Տեսարանի կենդրոնում, մի լեռնադաշտի վրայ, — ուր անթիւ ծաղիկների անհամար տեսակները խառնուելով իրար հետ՝ աննման խմբակներ էին կազմել, — նստած էին երեք երեխայ:

Ենթադրեցի, որ նրանցից ամենափոքրը երկու տարեկան է, իսկ մեծը չորս: Միջնակը հացի կտոր էր կրծում, բայց երբ նկատում էր բզեզներին՝ ծածկում էր իր փէշի տակ: Մեծը մի խոշոր ծաղկի կաթար թեքել, մօտեցրել էլ մի մանիշակագոյն փոքրիկ ծաղկի ու յորդորում էր համբուրել: Նա անշուշտ համարում էր նրանց մայր և որդի: Կապոյտ սպիտակ բծերով թիթեռնիկը դողդողալով նստում էր այս ու այն ծաղկի վրայ, թևիկները բարձրացնում, մօտեցնում էր իրար և միջանի վայրկեանից յետոյ նորից թռչում:

Փոքրիկը նկատելով այդ, իր թաթիկները տարածեց օդի մէջ՝ բռնելու նպատակով, և միջանի անգամ իզուր շարժելուց յետոյ իր բերանի մէջ կոխեց: Մեծը վերկացաւ տեղից: Միւսները ուզեցին հետևել նրան, բայց նա լուրջ կերպարանք ընդունելով պատուիրեց մնալ: Մըտաւ իրանից երկար ծաղիկների մէջ, մզեց նրանց աջ ու ձախ, ճանապարհ բաց արաւ ու անհետացաւ: Ուզեց փունջ կազմել, բայց չգիտէր ինչպէս, չէր կարողանում հնար գտնել: Իր փոք-

րիկ մատները մօտեցնում էր նախ մէկին, յետոյ միւսին, երրորդին, չորրորդին: Բազմատեսակ գոյները գրաւում էին նրա ուշադրութիւնը և նա աշխատում էր բոլորը քաղել:

Վերջապէս ցանկութիւնը յագեցնելուց յետոյ՝ ուրախ-ուրախ վերադարձաւ, ձեռքին բռնած երկու հատ կարմիր կակաչ: Մէկը տուաւ միջնակին, իսկ միւսը փոքրիկին: Փոքրիկը անմիջապէս պոկեց թերթիկները, իսկ դատարկ ցողունը դեռ մօտեցրեց իր բերանին և յետոյ առաջարկեց կողքի նստողին:

Մեծը նստեց իր առաջուայ տեղը և յայտնեց, որ հէքեաթ էր պատմելու: Բայց իսկոյն միտքը փոխեց և առաջարկեց միասին երգել:

Հնչեցրին մանկական ձայները, աշխատելով միմեանցից բարձր գոռալ:

Ձարմանալի բան. այս աններդաշնակ աղմուկը ոչ միայն անտանելի չէր, այլ հաճոյք էր պատճառում ինձ:

Շուտով ձանձրացան երգելուց և միաժամանակ լռեցին ժպիտն երեսներին: Այդ վայրկեանին յիշեցի հինաւուրց ճշմարտութիւնը՝ թէ մանկական ժպիտի նման դուրեկան բան չկայ երկնքի տակ:

Մանուկները նստած էին ծաղիկների վրայ, նրանց շրջապատում էին դարձեալ ծաղիկներ:

Ծաղիկ և երեխայ — այդ միևնոյն բանն է, մտածեցի ես:

Ծիծեռնակները սլանում էին օդի մէջ, սովորական արագութեամբ, երբեմն անցնելով երեխաների գլուխների վրայով ու յանկարծակի շփոթելով նրանց, այս ու այն տեղ պտոյտներ էին գործում և անհետանում բլուրների քամակին: Թեթև գեփիւնը սկսեց խաղալ ծաղիկներին հետ և իրարանցում գցեց նրանց մէջ: Նրանք իրանց գլխիկները թեքեցին, մօտեցրին մանուկների երեսներին ու երևի շնջացին նրանց համբոյրի մասին, որովհետև այդ միջոցին նրանք համբուրուեցին: Մի փոքրիկ, կարմրագոյն միջատ բարձրանում էր միջնակի կրճի վրայ: Երեխաները նկատելով այդ՝ ուզեցին բռնել, բայց երբ նա իր թևիկները բաց առաւ ու թռաւ, նրանք ծիծաղ բարձրացրին:


Այս անբիծ ծիծաղը ձայնակցեց ծաղիկների սրբուրացին և բնութեան մէջ ըսպէսպէս կազմուեց մի անսովոր համերգ, որի չափազանց քնքուշ ու ախորժելի հնչիւնները լսելուն արժանացայ ես սռաջին և գուցէ վերջին անգամ:

Երեխաները վերկացան տեղներից և ձեռք ձեռքի տուած սկսեցին քայլել: Ընթանում էին առաջ ծաղիկների բանակների միջով, որոնք անխռով պռուկում էին մանուկների փոքրիկ տիկների տակ, ճանապարհ բաց անում նրանց համար և նորից զգուշութեամբ գլխիկները բարձրացնում:

Այս տեսարանը կաշկանդել էր ինձ: Մնացել էի հիացած այս գեղեցկութեան ու ներդաշնակութեան առաջ:

Ահա աշխարհիս սքանչելի ստեղծագործութիւնների կատարելագոյնը, պսակը:

1896, Մանգլիս



ՁԵՌՆԱԾՈՒ ԱԲԷԼԸ

Ա

Ո՞վ չէ յիշում ձեռնածու Աբէլին, որ քսան-երեսուն տարի առաջ մեծ հռչակ էր վայելում ամբողջ Անդրկովկասում: Հասարակ դասակարգը դեռ մինչև այսօր էլ հազար տեսակ առասպելներ ու հէքեաթներ է պատմում նրա հրաշագործութիւններից:

Եւ իսկապէս Աբէլը շատ ընդունակ մարդ էր: Իբրև ձեռնածու վերին աստիճանի ճարպիկ էր, իբրև զուարճախօս՝ աննման և իբրև ամբոխ ուրախացնող ու ծիծաղեցնող՝ հազուագիւտ: Ո՛չ մի հարսանիք կամ հիւրասիրութիւն կատարեալ չէր համարում, եթէ Աբէլը բացակայ էր լինում: Ամենքը նրան սիրում էին, թէպէտև վախենում էին նրանից, մանաւանդ կանայք ու պատանիները:

Ո՞վ կը համարձակուէր նրան վիրաւորել, չէ՞ որ Աբէլը ընդունակ էր իսկոյն «աղօթել» և յանդուգն մարդուն որևէ անասուն (գլխաւորապէս էջ) դարձնել:

Շատ շատերը պատմում էին և մինչև օրս էլ կրկնում են, իբրև ականատեսներ, թէ այս ինչ մարդուն, այս ու այս թուականին Աբէլը էջ դարձրեց: Ո՛չ մի մտավաճառ կամ գինեվաճառ փող չէր ընդունում նրա ձեռքից: Ստիպուած պէտք է երգուէր, սուրբերի անուներ յիշէր ու հաւատացնէր, որ փողը ո՛չ սատանայական է և ո՛չ կախարդական: Ուր որ կանգ առնէր՝ լինէր փողոց, հրապարակ թէ եկեղեցու գաւիթ, նրան ըոպէսպէս շրջապատում էր ամբոխը և աչքերը լայն բաց արած՝ անհամբեր սպասում թէ Աբէլը մի բանով կը զուարճանցնէ, կը հիացնէ: Իբրև ամբոխի սիրելի՝ նա իր հաւասարը չունէր:

Նա հայ էր, բայց կովկասեան բազմաթիւ ազգերը հաւասար կերպով յափշտակուած էին նրանով: Նա այդ շատ լաւ գիտէր և իրան բողաւոր էր համարում: Նրա արհեստը ձեռնածութիւնն էր, որին նուիրուած էր հոգով ու սրտով: Նա ներկարար էլ էր, բայց այդ բանն ևս կապում էր ձեռնածութեան ու ճարպիկութեան գաղափարի հետ: Բարձրանում էր եկեղեցիների գմբէթների վրայ, կարկատում, ներկում էր, ուղղում էր ծռած կամ զրասուած խաչը և այլն: Հազիւ թէ գտնուի Անդրկովկասում մի բարձր եկեղեցի, որի գագաթի վրայից Աբէլը փչած շինի իր փողը: Երբ թիֆլիզում յանկարծ հնչում էր մի ինչ-որ տարօրինակ ե-

դանակ, իսկոյն բոլոր տներից դուրս էին թափ-
 ւում մեծ ու փոքր և իրանց ձեռքին ունեցած կի-
 սատ գործերը երեսի վրայ թողած՝ աչքներն
 ուղղում էին այս ու այն եկեղեցու կողմը, ու-
 ընցից մէկի գմբէթի ծայրին տեսնում էին Ա-
 բէլին գլխի վրայ տնկուած և ոտները օդի մէջ
 պարտացնելիս: Կանայք անմիջապէս գունատ-
 ւում էին, իրանց աչքերը ծածկում, իսկ պառաւնե-
 րը երեսներին խաչ էին հանում ու աղօթում: Ա-
 մենքը, առանց բացառութեան, զարմանք էին
 յայտնում նրա աներկիւղութեան վրայ, իսկ
 ցածր դասակարգը նրա մէջ տեսնում էր գեր-
 բնական ոյժ, ի հարկէ, շնորհուած եթէ ոչ Աս-
 տուծուց, գոնէ սատանայից: «Առիւծասիրտ և
 քաջ Աբէլ» — այսպէս էր սկսում մի երգ, որ
 մի ժամանակ տարածուած էր ամբոխի մէջ և
 որի հեղինակը, ինչպէս ասում էին, պէտք է
 լինէր **Եջմիածնի արեղաններից մէկը: Անմտա-**
հալի է այդ երգի հեանեալ կտորը: «Յի՛նչ ամե-
նայն բան պատմեմ, սարսափ կը տանէ լսողաց»:
 Արեղան անշուշտ ապշել է, **տկանատես լինելով**
 Աբէլի քաջագործութիւններին, որ կատարել է
 Մայր Աթոռի տաճարի գմբէթի վրայ:

Բ

Աշնան հանգարտ օրերից մէկն էր: Ամբողջ
 շաբաթ շարունակ անձրևելուց յետոյ, արևը՝
 մառախուղի ծալքերը պատառելով, երևան էր

հանել պայծառ դէմքը և կարծես իր յաղ-
 թական ոյժի լիակատար զօրութիւնն ապացու-
 ցանելու համար մտադրուել էր ամեն տեղ ցա-
 մաքացնել:

Անդրկովկասեան փոքր քաղաքներից մէկը
 գուարթացել էր: Կտուրների վրայից թափան-
 ցիկ գոլորշի էր բարձրանում: Բնակիչները մըր-
 ջիւնների նման իրանց բներից դուրս էին թա-
 փուել ու շտապով այս ու այն կողմն էին դի-
 մում: Տնակների առաջ նկատուում էին լուացքի
 գոյնգոյն շարքերը: Օդի մէջ տարածուած էր
 աշնան մրգերի հոտը:

Քաղաքի հրապարակի մի ծայրին, ուր գե-
 տինն արդէն ցամաքել էր, հաւաքուել էր մեծ
 բազմութիւն: Ամեն կողմից շտապով գալիս էին
 մարդիկ ու խոնուում ամբոխի մէջ: Պատանի-
 ներն ու երեխաները շնչասպառ վազում էին՝
 սրը գլխաբաց, սրը մի հատ կօշիկով, և բազմու-
 թիւնը **հզեւաբ մէջ էին խցկուում: Զուռնան վը-**
շում էր մի ուրախ եղանակ և «դճօլին» խո-
րամանկ ժպիտն երեսին, մի հատ աչքով մէկի
հետ հանաքներ էր անում և ուժգին զարկում
«դճօլին»:

Բազմութիւնը մի փոքր յետ քաշուեց: Մէջ-
 տեղ բարձրացրին փայտէ մի երկար սանդուղ,
 որի ծայրը դէմ տուին մի տան կտուրին: Սան-
 դուղի վրայ բարձրացաւ մի մարդ ու նստեց
 կտուրի վրայ: Հագին ունէր կարմիր, կարճ փե-

շերով բաճկոն, ոսկեփայլ կոճակներով: Դա Աբէլն էր: Ոտներին կապեց ահագին երկարութեամբ փայտէ ձողեր: Այնուհետեւ հագաւ սպիտակ գոյնի վարտիք, որի երկարութիւնը ճիշտ հաւասար էր փայտէ ոտներին: Ամբոխի մէջ տիրում էր խորհրդաւոր լռութիւն: Բոլորի աչքերը բարձրացած՝ անհամբեր սպասում էին խաղին: Աբէլը՝ մեծ գգուշութեամբ իր գործն աւարտելուց յետոյ, շարժուեց իր տեղից ու կանգնեց տարօրինակ ոտների վրայ: Նրա դէմքին ժպիտ չկար: Ամբոխը՝ կարծես վաղօրօք պայմանաւորուած, մի խլացուցիչ գոռում-գոչուն բարձրացրեց: Նա՛ անուշադիր թողնելով մարդկանց ուրախ աղաղակը, նայեց Սուրբ-Կարապետ եկեղեցու կողմը, երեք անգամ երեսը խաչակնքեց ու շրթունքները շարժեց: Յանկարծ շուռ եկաւ, մի հսկայական քայլ արաւ, պտըտուեց մի ոտի վրայ, օրօրուեց և «օգնեցէք» աղաղակելով՝ սկսեց ձեռքերով կարծես բան որոնել օդի մէջ:

Ամբոխը լեղապատառ եղաւ: Բոլորերեան վագեցին հեռու և երեխաները ճիշտ արձակեցին ու լաց եղան: Աբէլը ի սրտէ ծիծաղեց նրանց միամտութեան վրայ, թեքը լայն բաց արաւ ու սկսեց պարել: Պարում էր համարձակ, ճարպիկ ու կանոնաւոր: Ժամանակ առժամանակ միքանի քայլ էր անում հանգստանալու համար և նորից պարում: Նրա քայլը հաւասար էր հինգ արշինի,

գուցէ և աւելի: Երբ նկատեց, որ ամբոխի հիացումը մի աստիճան իջաւ, ձեռքի փեղքը իրար շփեց, արտասանեց միքանի անհասկանալի բառեր և նրա ձեռքերի մէջ երևացին մօտ տաս հատ զանազան մեծութեան գնդակներ, որոնց միասին սկսեց խաղացնել օդի մէջ:

Բազմութիւնը ապշած նայում էր և սպասում թէ անա՛ այս բոպէին բոլոր գնդակները պէտք է ձեռքերից վայր թափուեն. բայց սրբան մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ պարզ տեսան թէ ինչպէս մի-մի հատ անհետանալով կարծես հալուեցան, մարեցան: Մարդիկ աղաղակում էին, հրճւում էին, իրար բռնելով հարցնում էին թէ արդեօք լա՛ւ տեսան հրաշքը: Ծերունիները իրանց տպաւորութիւնն արտայայտելու համար կամ իրանց երեսն էին խաչակնքում, կամ մի կողմ թքում, փնթփնթալով՝ «Փն, անիծէ քեզ երկնային Թագաւորը»:

Աբէլը իրար ետևից բազմաթիւ «հրաշքներ» ցոյց տուաւ և ապա բացականչեց.

— Ով է ձեր մէջ քաջ տղամարդ, թող ձեռքը բարձրացնի և ես իսկոյն էջ դարձնեմ նրան:

Ամբոխի մէջ իրարանցում ընկաւ. ոմանք կուչ եկան, ոմանք երեսը հակառակ կողմ դարձնելով ձեռքները թագցրին զրպանների մէջ: Ձեռնածուն բաւականութիւն ստանալով իր արած տպաւորութիւնից, նորից արտասանեց.

— Հարկաւոր չէ, հարկաւոր չէ, վախկոտ-



ներ: ինչից էք վախում, ես էլ ձեզ նման մարդ եմ... Եթէ ձեզանից մէկը ուշաթափուի, ես ուշքի կը բերեմ, եթէ մինչև անգամ մեռնի՝ կը կենդանացնեմ:

Վերջին խօսքերն արտասանելիս ծիծաղեց, յետոյ նայեց եկեղեցու կողմը և մըմնջաց՝ «մեղայ Աստծու, մեղայ Աստծու»:

Այդ վայրկեանին բազմութեան կենդրոնից քիչ դուրս երկու երեխայ՝ պատառոտած հագուստով իրար աչքերին նայեցին խորհրդաւոր կերպով: Ոչ ոք այդ չնկատեց:

Աբէլը այժմ հանեց իր գլխի վրայից տարօրինակ, մոխրագոյն գլխարկը և մի ճարպիկ շարժուածքով ձևը փոխեց, դարձեալ նոր ձևի դարձրեց և այսպէս միմեանց ետևից համարեա երեսուն տեսակ գլխարկ շինեց: Այդ գործողութեան հետ զուգընթաց պատմում էր ձեռնածուն թէ ինքն ինչ երկիրներ է այցելել և ինչ մարդկանց հանդիպել այս և այս տեսակ գլխարկներով: Բայց պատմում էր այնքան սրամիտ, այնքան գրաւիչ, որ ամբոխն ի սրտէ թէ ծիծաղում էր և թէ գմայլում:

Գ

Մութ գիշեր էր: Հիւսիսային կողմից փչում էր քամին: Ծառերից թափում էին չորացած տերևները և պտոյտ տալով գետնի երեսին, վերջապէս կղզիանում էին որևէ փոսի մէջ կամ անկիւնում: Փոքրիկ քաղաքն ընկղմուած էր խա-

ւարի մէջ: Թէպէտ այս ուշայն տեղ ճրագի լոյս էր դողդողում, սակայն կարելի չէր գուշակել թէ որ տնակի կամ խրճիթի մէջն է:

Աբէլը իր «հունարները» ցոյց տալուց յօգնած՝ փակուել էր իր սենեակի մէջ, որ մեծ նմանութիւն ունէր ճգնաւորական խուցի և իր համեստ ընթրիքն աւարտելով՝ մի առ մի մտաբերում էր թէ օրը ինչով սկսուեց և ինչով վերջացաւ: Այն համոզմունքի էր գալիս, որ իր դերը յաջողութեամբ կատարել էր և իրան երջանիկ համարելով, ժպտում էր, մինչև անգամ երբեմն ծիծաղում: Ժամանակ առժամանակ նրա ականջին էր հասնում մի ինչ-որ փսփսոց, բայց նա ենթադրելով, թէ քամու ազդեցութիւնից է, անուշադիր էր թողնում: Պատրաստուեց քնելու: Ճանապարհորդական թեթև անկողինն ուղղեց՝ քթի տակ երգելով ասիական մի եղանակ: Վերմակը, որ կարուած էր չթերի եռանկիւնի կտորներից, թափ տուեց, բարձի տակ դրեց իր սև արխալուխը, որի գրպանի մէջ էր նոյն օրուան աշխատանքը և յօրանջելով նստեց իր անկողնու վրայ՝ պառկելու դիտաւորութեամբ: Զայները շարունակում էին: Աբէլը ականջները սրեց և շուտով համոզուեց, որ իր դռան մօտ մարդիկ են կանգնած:

— Ո՞վ էք, բարկացած ձայնով կանչեց նա: Պատասխան չեղաւ:

— Ո՞վ էք, հարցնում եմ, կրկնեց ձեռնածուն:

—Մենք ենք, — լսուեց մի անհամարձակ պատասխան:

— Դուք ո՞վ էք:

— Կարօն և Կոստօն:

— Ի՞նչ կարօ և Կոստօ:

— Վարդանի տղերքը:

— Ի՞նչ Վարդան, ի՞նչ էք ասում:

— Խարազ Վարդանի, որ մի ժամանակ մեռաւ... մեռաւ և թաղեցին:

Աբէլը զայրացած էր, որ իրան չթողեցին հանգիստ անկողին մտնել: Սակայն ձայներից նկատելով, որ երեխաների հետ գործ ունի, հետաքրքրուեց և դուռը բաց արաւ:

— Հն, ի՞նչ էք ուզում:

Երեխաները կպան իրար ու մնացին լուռ:

— Կարելի է քաղցած էք: Զայ էք ուզում:

— Արի գնանք մեր տուն, — մանկան յատուկ աղերսանքով արտասանեց մեծը, որին կարելի էր տասը տարեկան համարել:

— Ի՞նչ կայ ձեր տանը:

— Գնանք մի բոպէ, բիձա ջան, — կրկնեց երեխան, — մի բոպէ:

— Դէ, ասացէք՝ ո՞վ էք, ի՞նչ էք ուզում. ի՞նչ կայ ձեր տանը, — գոռաց զայրացած Աբէլը և զրպանից մեքենաբար լուցկի հանեց:

Խօսող երեխան հազիւ լսելի կերպով հեկեկաց, փոքրը հետևեց նրան, բայց աւելի բարձր ձայնով: Գլուխները քաշ գցած և դանդաղ քայ-

լերով հեռացան այդտեղից և անհետացան խաւարի մէջ: Աբէլը մնաց դռան մէջտեղ արձանացած: Չգիտէր ինչ անէր:

— Գիտէի, որ օրս պէտք է փկս վերջանար, երեկոյեան տէրտէրի հանդիպեցի, — փնթփնթաց նա և յիշոցներ տալով՝ յայտնի չէ թէ ում, անմիջապէս հագաւ իր դեղնագոյն չուխան և իր անբաժան ծանր ձեռնափայտն առնելով՝ շտապով դուրս եկաւ սենեակից: Այդ ձեռնափայտի մասին Աբէլը պատմում էր թէ՛ երեսուն տեսակ ընդունակութիւն ունի և այդ բանը մի առ մի բացատրում էր զարմանալի սրտմիտ կերպով:

Շուտով հասաւ մանուկներին: Նրանք ձեռք ձեռքի տուած անշտապ քայլում էին և աղիողորմ լաց լինում:

— Ինչո՞ւ էք լալիս, կարօ, Կոստօ... Ինչո՞ւ ինձ չսպասեցիք: — Բոսեց Աբէլը մեղմ ձայնով: չէ՛ որ ես ասացի թէ գալիս եմ...

Երեխաները վայրկենապէս լուցկի ու իրանց հագուստի թևերով սկսեցին աչքները սրբել: Քայլերնին արագացրին, մինչև անգամ փորձում էին թռչկոտելով գնալ: Աբէլը հետևում էր նրանց, բայց խօսք չէր ասում: Նա համոզուած էր, որ այդ փոքրիկներին տանը պատժել են, և այնպիսի կոպիտ կերպով, որ այդ մութ գիշերին, այդ ցուրտ եղանակին տանից դուրս են արել:

— Լաւութիւն արած եմ ամենքին, — մտածում էր նա, — բայց փոքրերին երբէք այս ան-

գամ էլ սրանց բարերար կը դառնամ, բան չկայ...
Կ'ասեմ՝ անֆերիմ, լաւ ծնողներ էք եղել... Ինչո՞վ
են մեղաւոր այս մանուկները, որ աշխարհ են
եկել... Մեղաւորը դուք էք, այսպէս է թէ
ոչ... Երբ որ ծնեցիք, պէտք է պահէք էլ ինչ
պէս հարկն է... Լաւ մարդը այս ցուրտ եղա-
նակին, այսպէս մութ գիշերին մինչև անգամ
շանը տանից չի դուրս անիլ... Խելքի եկէք,
ախմարին՛ք, Աստուծոն փառք տուէք, որ ծնող-
ներ էք անուանուում...

Այսպէս էր մտածում, երբ նրա ոտների
տակ գլորուեց երեխաներից մէկը — փոքրը, որի
ոտից դուրս էր պրծել կօշիկը: Աբէլը լուցկի
վառեց, կօշիկը իսկոյն գտան և շարունակեցին
ճանապարհը:

— Ի՞նչ արհեստի է ձեր հայրը — հարցրեց
ձեռնածուն:

— Մենք հայր չունինք, — պատասխանեց
մեծը:

— Ունէինք, բայց մեռաւ ու թաղեցին, —
աւելացրեց փոքրը:

— Հա՛, հա՛, արդէն ասացիք, իսկ ես մո-
ռացայ:

Հասանք տուն: Երեխաները վազեցին առաջ,
շտապով դուռը բաց արին: Աբէլը ներս մտաւ:
Այդ մի գետնափոր տնակ էր, մի սենեակից բաղ-
կացած, խիստ ցածրիկ առաստաղով և սևացած
պատերով: Աջակողմեան պատի տակ դրուած էր

մի կարճ թախար, որի վրայ պառկած էր մէ-
կը, ցնցոտիների մէջ փաթաթուած: Աբէլը
զգաց մի ծանր հոտ: Նա այդ կիսախաւար սե-
նեակի մէջ, վայրկենական մի հայեացքով նկա-
րեց ծայրայեղ աղքատութիւնը: Կեղտոտ ու
միանգամայն զզգուած անկողինը նրա մէջ ա-
ռաջացրեց բացի խղճահարութիւնից, նաև զրգ-
ոււանք: Նա միանգամայն ապշել էր: Անկողնի
մօտ նստած էին երկու կին, որոնք դուռը բաց-
ուելու միջոցին՝ գլուխին՝ բարձրացրին ու
նորից քաշ քցեցին:

Նրանք լուռ էին և անշարժ:

Մեծ երեխան վազեց անկողնի մօտ, վեր-
վակը բարձրացրեց ու դիմեց Աբէլին ասելով.

— Բիճա-ջան, արի՛ կենդանացրու:

— Կենդանացրու՛ մայրիկիս, բիճա-ջան, —
կրկնեց փոքրը:

Նրանց անմեղ աչքերի մէջ երևում էր յոյս
և աղերսանք: Կանայք վերկացան ու քաշուեցին
մութ անկիւնի կողմը: Աբէլի մարմնով սարսուռ
անցաւ: Նրա լեզուն պապանձուել էր: Նա շփոթ-
ուել էր միանգամայն: Նա չէր կարողանում
մտածել անգամ:

— Կենդանացրու, բիճա-ջան, ջեզ մատաղ,
— աղաչում էր մեծը:

Փոքրը յայտնի չէ թէ ո՞ր անկիւնից դուրս
բերաւ մի մաղ, որ համարեա լի էր ընկոյզնե-
րով, և մօտեցնելով Աբէլին՝ ասաց.

— Ահա այս բոլորը քեզ կը տամ, կենդանացրո՞ւ մայրիկիս:

Աբէլին այնպէս թուաց, որ իր սիրտը լուռ ու անձայն լալիս է: Շրթունքները հուպ էր տրւել պինդ ու ճակատը անթիւ կնճիռներով ծածկել:

Փոքրիկը հանեց իր գրպանից նաև երեք հատ խաղալու վէզ, որոնցից մէկը կարմիր գոյնով էր ներկուած, իսկ միւսը արծիճով լցուած և Աբէլի ափի մէջ ածելով արտասանեց.

— Կենդանացրո՞ւ:

Ձեռնածուն, իր համար անսպասելի կերպով, բարձրաձայն հեկեկաց, աչքերից արտասուք թափեց ու առանց խօսք ասելու վազեց դէպի դուրս և անհետացաւ խաւարի մէջ: Զով օդը նրան մի փոքր ուշքի բերեց. նա ազահաբար շունչ քաշեց, դտաւ ճանապարհը և սկսեց քայլել դէպի իր բնակարանի կողմը: Նա այսպիսի ցաւ ամբողջ յիսունուհինգ տարուան ընթացքում առաջին անգամն էր զգում: Կանգ առաւ փողոցի մէջտեղ և տշխատեց մտաբերել թէ որ կողմից եկաւ, որ կողմն է գտնուում իր բնակարանը: Յանկարծ նա զգաց, որ իր փէշերից ու ոտքերից քաշքշում են: Զարհուրելով նկատեց որ նոյն երեխաներն են, որոնք այլևս չէին աղերսում. յուսահատական լացը խեղդում էր նրանց: Ձեռնածուն նստեց գետնի վրայ և գրկելով մանուկներին ու համբուրելով ճակատ-

ները՝ սկսեց մխիթարել ու խրատել նրանց: Աշխատեց հաւատացնել, որ ինքը անկարող է մեռածին կենդանացնել: Աստուած միայն կարող է այդ անել, եթէ կամենայ...

— Ո՛չ, ո՛չ, դու կարող ես, դու այսօր անացիր որ կարող ես, — պնդում էին երեխաները, ամուր բռնելով Աբէլի փէշերից:

— Կենդանացրո՞ւ, կենդանացրո՞ւ, նորից աղերսեց փոքրիկը, — ապա թէ ոչ հողի տակ կը թաղեն ու մենք՝ էլ մայրիկ չենք ունենալ:

Աբէլը համարեաւ անգիտակցաբար հանեց իր գրպանից ունեցած բոլոր փողը և ածելով երեխաների գրպանները, մի ակնթարթում հաւաքեց իր փէշերը և մեքենաբար դուրս պրծնելով մանուկների ձեռքից, վազեց, որքան ոյժը ներում էր: Նրա ականջին էր հասնում յուսակտուր լացի ձայնը, բայց նա ականջները խցեց ու շարունակեց վազ տալ:

Նա չմտաւ իր բնակարանը, մինչև անգամ չնայեց այն կողմը: Այս ու այն կողմից շներ դուրս պրծան, հաջացին, հետևեցին միջանի բոպէ, բայց երկիւղ կրելով ձեռնածուի հաստ ձեռնափայտից, կրկին վերադարձան իրանց տղերը:

Աբէլը շատ շուտ դուրս եկաւ այդ փոքրիկ քաղաքի միջից դէպի ընդարձակ դաշտը, որտեղով անցնում էր Թիֆլիզ տանող ճանապարհը:

ԱԶՆՈՒԱԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Որ Կս. ամուրի ծերացայ, դրանում մեղա-
 ընը մի ոչխար էր. այն, ոչխար, մի մեծ դօշ:
 Կարմրում եմ, երբ մտաբերում եմ, որ մի
 յիմար անասուն խանգարեց ինձ ամուսնանալու
 և այսպէս անհամ, անշնորհք պառակեցի:
 Մեր գիւղում առաջին մարդն էի թէ իբրև
 հարուստ-կալուածատէր և թէ ազնուական ու
 քաղաքակրթուած: Քոյրս ու միքանի մօտիկ
 ազգականներս քաղաքումն էին ապրում. նրանք
 ինձ համար մի լաւ հարսնացու էին ընտրել:
 Գրում էին ինձ՝ «հարուստ վաճառականի աղ-
 ջիկ է, գեղեցկուհի, լաւ դաստիարակուած,
 տասնութ տարեկան» և այլն: Ինձ մնում էր ու-
 ռախանալ և համաձայնուել: Արդէն գրել էի
 քրոջս, որ նշան տայ և ես էլ գործերս կարգի
 բերելուց յետոյ կը ճանապարհուեմ:
 Տասնութ տարեկան օրիորդը, ի հարկէ, լաւ
 կը լինի, մտածում էի ես, ուրեմն աւելորդ էր
 վաղօրօք տեսնել, ինչպէս սովորաբար ընդու-
 նուած է: Բայց ինչ, դիտաւորութիւնս միան-
 դամայն ոչնչացաւ, ազգականներին աշխատանքն

էլ իզուր կորաւ և, որ գլխաւորն է՝ սրբան թուփ
 ու մուր կերայ: Մեր գիւղում, իմ փառաւոր տանից ոչ շատ
 հեռու, բնակուած էր շինական Բաւիթը՝ իմ
 վաղեմի ճորտը: Նա ունէր մի շատ սիրուն աղ-
 ջիկ, որ նշանադրուած էր նոյն գիւղի քահանա-
 յի որդու հետ: Այդ երիտասարդը գիւղացիներէ
 մէջ առաջնակարգ և աչքի ընկնող անձնաւորու-
 թիւն էր: Ես նրան արհամարհում էի, իսկ նա
 ինձ ատում էր: Մեր մէջ հողային վէճ կար:
 Պէտք չէ ուրանալ խելօք ու աշխատանք տը-
 դայ էր: Ո՛վ է տեսել քահանայի որդին խելօք,
 նակայն նա երևի բացառութիւն էր կազմում:
 Մի օր թունդ խօսակցութիւն ունեցայ Վա-
 սօ-ի հետ (այսպէս էին կանչում նրան) և նրա
 կողմի վարմունքի համար սպառնացի վրէժ-
 խնդիր լինել:
 Գնահ ձեր հաւերին վախեցրու, ծաղրելով
 պատասխանեց նա:
 Առանց երկար մտածելու մտքիս զրի նրա
 նշանածին մի կերպ գրկել ու համբուրել: Սրա-
 նից մեծ անպատուութիւն ու պատիժ անկարող
 էի նրան հասցնել: Ասենք՝ վէճից առաջ էլ մտա-
 դիր էի այդ սիրուն աղջկայ այտերից առաջին
 համբոյրը քաղել:
 Քանի հանդիպում էի, թէև շատ սակաւ էր
 պատահում այդ, մի-մի սիրային ակնարկ էի
 ուղղում նրա հասցէին և նա իսկոյն բռնկում-

կարմրում էր: Անկասկած դուր էր գալիս նրան այդ, բայց ամօթխածութիւնից ստիպուած ծածկում էր ինձանից: Եւ անբնական կը լինէր ուրիշ կերպ ենթադրել, որովհետեւ զեղջկուհիների աչքում ազնուականը կատարեալ արարած է մարդկային ցեղի մէջ: Ուրեմն կասկած չկար, որ եթէ յարմար բոպէ պատահէր և ես նրան զրկիս մէջ առնէի, նա իրան երջանիկ պէտք է համարէր:

Յամենայն դէպս, ամեն տեսակ տարակուսանքներից ազատ լինելու համար, մի անգամ երբ նա իրանց բակում կուտ էր շաղ տալիս հաւերի համար, շտապով անցայ նրա մօտով և կիսաձայն արտասանեցի՝ «աղջիկ, համբուրելու եմ քեզ, չխրտնես»:

Թէև չտեսայ թէ ինչ տպաւորութիւն գործեցին նրա վրայ խօսքերս, սակայն համոզուած էի, որ մեծ զուարճութիւն պատճառեցին նրան:

Բայց մի շատ դժուար խնդիր կար: Ո՞րտեղ պէտք է ձանկէի նրան: Գիշեր-ցերեկ տանն էին պահում, թոյլ չէին տալիս բակից հեռանալու: Նոյնիսկ արգիլել էին դրացի ընկերուհիներին այցելել: Այդպէս էր պատուիրել փեսացուն: Հարսանիքը բնականաբար այդեքողից յետոյ պէտք է լինէր և այդ էլ հեռու չէր: Ուրեմն պէտք է շտապէի: Շատ էի մտածում, գանազան խորամանկ նախագծեր էի կազմում, բայց բոլորն էլ անյաշող:

Միքանի անգամ փորձեցի խորհրդակցել թիկնապահիս հետ, այն ազնիւ ու հաւատարիմ ծերունու հետ, որի ձեռքին էի մեծացել,—բայց դարձեալ իզուր: Նա այնպիսի խակ-խակ ու վայրենի միջոցներ էր առաջարկում, որ ստիպում էի զայրանալ, նոյնիսկ հայհոյել: Մի անգամ էլ փորձ փորձեցի հանաքի ձևով մեր տնտեսուհի պառաւ Մարիամից խորհուրդ հարցնել: Նա փոխանակ ինձ պատասխանելու՝ անէծք ու հայհոյանք էր, որ ուղղեց՝ աղջկայ հասցէին:

—Ախար նա ի՞նչ մեղաւոր է, այ պառաւ, հարցրի ես:—Ի՞նչ փեսա է տուել քեզ:

Մարիամը լսել անգամ չէր ուզում: Աղջկան լաւ, սրտալի հայհոյելուց յետոյ անցաւ նրա ծնողներին, պապին ու տատին: Քանի ես ծիծաղում էի, այնքան նա զայրանում էր: Ո՞րքան փոշմանեցի այդպիսի թեթևամտութեանս համար: Պառաւը այդ բոլորից վերջը գնացել էր Դաւիթի տուն և չգիտեմ ինչ պատրուակով ասագին դալմաղալ քցել:

Անցնում էին օրերը, ուրեմն ժամանակ կորցնել չէր կարելի, մի կերպ պէտք է վերջացնէի այս բանը, որ ինձ համար անհրաժեշտ էր: Չէ՞-որ մի ուժեղ զէնք էր հարկաւոր ձեռք բերել Վասօ-ի լեզուն ընդմիջտ կարճացնելու համար: Կատարելապէս համոզուեցի, որ մարդու հետ խորհրդակցելն ավելորդ է, նոյնիսկ փեսակար: Պէտք է ինքս իմ սեփական խելքով վճռէի՝ այսպէս թէ

այնպէս: Վերջապէս որոշեցի՝ դիմել մի յանդուգն քայլի: Այդ տեսակ քայլը առաջինն ու վերջինը եղաւ երկար կեանքիս մէջ:

Սեպտեմբերի մութ ու մառախլապատ գիշերներէից մէկն էր: Իսկապէս ժամի 8-ն էր, բայց, ինչպէս յայտնի է, գիւղում գիշերը շուտ է սկսուում: Թէև թիկնապահիս հետ միասին արդէն պատրաստութիւն էինք տեսել, այնուամենայնիւ դարձեալ յիշեցրի նրան շատ ոսկորներ հաւաքել:

Այդ բանը անհրաժեշտ էր՝ Դաւիթի շանը կաշառելու համար: Նա իր բակում այնպիսի մի գամփու էր պահում, որի լուկ տեսքից անգամ կարելի էր ստրաստիել: Եթէ ինձ յաջողուէր այդ երկիւղալի պահապանին գրաւել՝ նպատակիս հասած պէտք է համարէի ինձ: Ծառաս ինձ համոզեց, որ ամեն տեսակ շանը կարելի է գրաւել ոսկորներով, ճիշտ այնպէս, ինչպէս ամեն մի կնոջ՝ զարդարանքներով:

Այս նկատողութիւնը յիշեցրեց ինձ՝ հետո տանել որևէ զարդարանք գեղջկուհու համար և, առանց տատանուելու, արկիլիցս հանեցի մի էփանագին արծաթեայ մատանի: Հազայ գողերի սիրած գոյնի շորեր, այսինքն սև, կապեցի մի պարզ դաշոյն և դուրս եկայ տանից:

— Միխա, ձայն տուի թիկնապահիս, — պատրաստ ես:

— Պատրաստ եմ, տէր իմ, խուրջինս լցրել եմ ոսկորներով ու հացով, կարող ես միամիտ կենալ:

Փորձառու մարդ էր Միխան, շան վերաբերմամբ հիանալի խորհուրդներ տուաւ ինձ:

Ահա և Դաւիթի բակը: Գամփու, որ պահած էր տան շէմքից ոչ-հեռու, ծանր ու բարակ գլուխը բարձրացրեց, աչքերը ուղղեց մեր կողմը և շատ ծոյլ կերպով, կարծես ակամայից, փոքր ինչ հաջաց: Ծերուհին շտապեց հացի կտոր նետել: Շունը վերկացաւ իր տեղից, ծանրաքայլ մօտեցաւ հացին, մի ակնթարթում կուլ տուեց ու սպասողական դիրք ընդունեց պոչը ժած տալով: Միխան նորից նետեց աւելի խոշոր կտոր: Շունը այդ էլ կերաւ և մի զարմացական հայեացք քցեց մեզ վրայ: Դարձեալ մի պատառ հաց, և այսպէս իրար ետևից սկսեցին տեղալ հացի ու ոսկորների կտորները:

Երբ գազանը բոլորովին կաշառուած մօտեցաւ մեզ և սկսեց լուրջ կերպով գործ տեսնել տաւարի ոսկորների հետ ատամներով ու թաթերով, թիկնապահս շնչաց՝ «գէ, գնա»: Զգոյշ քայլերով անցայ բակը, հասայ շէմքին ու կանգ առայ:

Տեսակը բաղկացած էր մի ընդարձակ սրահից ու մի փոքրիկ սենեակից: Երկուսն էլ անշուք ու կեղտոտ: Դռները բաց էին. տեսայ թէ ինչպէս սրահի կենդրոնում մեծ խարոյկ էր վառ-

ւում և շուրջը նստոտել էին ընտանիքի անդամները: Բարևոք համարեցի պառկել կրծքիս վրայ՝ աննըկատելի լինելու համար, և սողալով անցնել փոքրիկ սենեակը: Դռները մօտ կապած էր երկայն թոկով մի մեծ ոչխար ոլորուն եղջիւրներով: Նա հանգիստ պառկած որոճում էր և սկզբում ուշք չդարձրեց վրաս:

Չորեցի, ձեռքերիս վրայ հասաատուեցի ու մեծ զգուշութեամբ սկսեցի չորեքթաթ առաջանալ: Ոչխարը, տեսնելով ինձ իր կողքին, վեր ցատկեց տեղից—վախեցաւ:

Մի րոպէ կանգ առայ զգուշութեան համար, որպէսզի չխրանեցնեմ անասունին: Այդ ինձ յաջողուեց: Դաւիթը միս էր կտրտում խորովածի համար և խօսում էր բարկացած ձայնով: Կինը համաձայն չէր մարդու հետ, բայց չհասկացայ թէ ինչ բանի մասին էր վէճը:

«Կնոջ մազը երկար և խելքը կարճ կը լինի», արտասանեց գեղջուկը և մտի անպէտք կտորը շպոտեց իմ կողմը: Նրա ետևից դուրս վազեց կատուն և իր փայլող աչքերով ուշադրութեամբ դիտեց ինձ, վերցրեց կտորն ու հեռացաւ:

«Կատուն մատնիչ չէ», մտածեցի: Դաւիթը իւրոտ ձեռքերը քսմսեց իր արեխներին և վերկացաւ տեղից: Ես երկիւղից բոլորովին շփոթուեցի, մի ակնթարթում հազար տեսակ մտքեր անցան գլխովս, բայց շուտով հանդարտուեցի: Նա իր վրայից չուխան հանեց, ծալեց ու դրաւ

գետնին ու վրան նստեց: Աղջիկը գուլպա էր գործում և խօսակցութեանը չէր մասնակցում: Կրակի լոյսը խաղում էր նրա կարմիր այտերի վրայ. նա շատ գեղեցիկ էր այդ վայրկեանին:

Դարձեալ մի րոպէ և ես պէտք է գտնուէի մութ սենեակում, ուր որոշել էի ծածկուել մի անկիւնում: Յոյս ունէի, որ գեղջուկին որևէ բանի համար կը մտնի այնտեղ. իմ միակ ցանկութիւնս էլ այդ էր:

Միխան իր դերը աննման էր կատարում: Ամեն ինչ կարգին էր, մնում էր ինձ միքանի քայլ էլ փոխել և արդէն նպատակիս հասած պէտք է լինէի: «Իէ, յառաջ», ասացի ինքս ինձ ու շարժուեցի տեղիցս: Ոչխարը յետ քաշուեց, կարծես ճանապարհ էր ուզում ինձ տալ: Բոլորովին ուշք չդարձրի նրա վրայ ու շարունակեցի ճանապարհս առաջուայ նման չորեքթաթ: Մնացել էր աննշան տարածութիւն, որպէսզի սենեակի մէջտեղ գտնուէի: Ոչխարը շարունակում էր յետ-յետ քաշուել: Վերջին քայլերս մի փոքր արագացնելուս պէս անասունը մի թռիչք գործեց և մի սարսափելի հարուած իջաւ ձուկատիս...

Ինչ պատահեց այնուհետև՝ չեմ յիշում: Երբ ուշքի եկայ, պառկած էի մահճակալիս վրայ և գլուխս պինդ կապած էր: Ինձ շրջապատել էին բարեկամներս ու մերձաւորներս և տխուր դէմքերով նայում էին վրաս: Կողքիս նստած էր

քաղաքից եկած իմ ծանօթ բժիշկը: Կամաց-կամաց սկսեցի մտաբերել երազի նման դժբաղդ իրողութիւնը: Սօսելու սչ տրամադրութիւն ունէի և ոչ կարողութիւն... Ինձ թւում էր թէ գլուխս երկու կէս է եղած ու նորից իրար կպցրած, ինչպէս կօտրած կուժ:

Փնօք Աստծու, անողջացայ: Առաջին անգամ կարող եղայ դուրս գալ պատշգամբ և միքանի ըոպէ ազատ շունչ քաշել: Արդէն ճմեռ էր, չորս կողմը ծածկուած էր ձիւնով: Մաքուր ու ցուրտ օդը միտքս թարմացրեց և ընկայ մտածմունքների մէջ:

Ամուսնանալուս հարցը կատարելապէս խանգարուած էր, ամբողջ գիւղի մէջ խայտառակուած էի, նիւթական անագին վնաս էի ունեցել: Բայց այս բոլորը ոչինչ էի համարում, երբ մտաբերում էի ճակատս, որ երկու տեղից ճղուած էր:

Յման դատապարտուած էի այդ անշնչելի ու ամօթալի նշանը կրելու: Այս տեսակ մտատանջութիւնը պաշարել էր ինձ ու մաշում էր սիրտս, երբ նկատեցի երեխաների մի մեծ խումբ, որ ադմուկ բարձրացնելով անցնում էր տանս առջևից: Նրանց առաջնորդում էր Վասօն, որխերիմ թշնամիս և իր ետևից քարշ տալիս ոչխարին: Եղջիւրները ոսկեզօծել էր, մորթին ծածկել էր վարդագոյն բծերով ու վրից կապել զան-

գակիկներ: Այդ իր յաղթանակի նշանն էր և ինձ խայտառակելու մի լաւ միջոց:

Միմիայն գաւառացի ազնուականը կը հասկանայ, թէ ինչ ցաւ է ինձ համար պատժուած լինել այս աստիճան մուրտառ կերպով:

1900, Փարիզ



ՀԻԱՍԹԱՓՈՒՄՆ

Ա.

Արսէնն ու Նինան սիրահարուած էին իրար վրայ: Առաջինը նոր էր աւարտել գիմնազիայի ուսման շրջանը, իսկ երկրորդը տակաւին շարունակում էր իգական դպրոցներից մէկում: Երկուսն էլ շահէլ, երկուսն էլ ազնիւ, ուրեմն կասկած չկայ, որ նրանց սէրը մաքուր ու սնարատ էր: Ամբողջ մի տարի, ինչպէս իրանք պարծանքով ասում էին, ճանաչում էին իրար: Սկզբում հաւանեցին միմեանց, յետոյ յարգեցին, վերջը սիրեցին:

Արսէնն այս պայմանները անհրաժեշտ էր համարում յաւիտենական սիրոյ համար: Նինան էլ միանգամայն համաձայն էր հետը: «Հրապոյ-րը անցողական է, և միամիտ մարդիկ, այս յիմար զգացմունքը իսկական սէր կարծելով, ամուսնական կապեր են հաստատում և վերջը երջանկութեան փոխարէն հանդիպում են կատարեալ դժոխքի», այսպէս էին դատում երկուսն էլ: Երիտասարդը երևանցի էր, իսկ օրիորդը գորեցի, ուրեմն ամեն կողմից իրար հակապատկեր. սակայն սիրոյ համար ի՞նչ նշանակու-

թիւն ունին բարեյաջող թէ՛ անբարեյաջող պայմանները: Նրանց սրտերն այնքան ամուր էին իրար կապուած, որ մահից զատ՝ ոչ մի ոյժ չէր կարող քանդել, ու այնպիսի երանելի դրութեան էին հասել, որ սկսել էին սիրել ամենքին և ամեն բան անխտիր: Արսէնը՝ Աստուած գիտէ թէ ինչո՞ւ, ամեն օր յիշում էր մի փորձառու մարդու խօսքը, թէ «սիրահարուած մարդը դառնում է բարի և յիմար» և արհամարհանքով արտասանում էր՝ «իդիօտ»: Նինան էլ կրկնում էր նոյնը:

Այս երկու սիրահարների գաղանիքը յայտնի չէր ոչ ոքի և մտադիր էին ապագայումն էլ մարդու չստել:

Ժամը հասել էր: Արսէնը հետևեալ առաւօտ մեկնելու էր արտասահման—Փարիզ, իր ուսումը շարունակելու բարձրագոյն մի դպրոցում: Երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիզի Ալեքսանդրեան պարտէզի մի մութ անկիւնում սիրահարները, վերջին անգամ գրկախառնուելով, նորից երգուեցին հաւատարիմ մնալ միմեանց:

—Յանձնում եմ քեզ Աստծուն, արտասանեց Նինան յուզուած ձայնով և սրբեց աչքերը:

—Իսկ քեզ՝ ես յանձնում եմ քեզ, պատասխանեց Արսէնը:

Միմեանց դէմքին կրկին նայեցին տխուր ժպիտով ու շտապով գիմեցին հակառակ կողմեր:

Այսպէս էին որոշել. երիտասարդը չորս տարի պէտք է մնար Փարիզում (մի բարերարի հաշուով), ուսումնաւարտէր, վերադառնար և անմիջապէս ամուսնանային: Օրիորդին պակասում էր ընդամենը երկու տարի՝ վկայական ձեռք բերելու համար:

Արսէնի համար գոյութիւն չունէր իր հարսնացուի օժիտի հարցը: Նինան երբէք չէր մտածում իր աղքատ փեսացուի նիւթական վիճակի մասին ապագայում: Նրանց սէրը պատանեկական էր, ուրեմն մաքուր, ինչպէս նոր եկած ձիւնը:

Օրիորդը ամբողջ գիշեր արտասուում էր իր անկողնի մէջ: Քունը մօտ չէր գալիս նրա աչքերին: Միքանի անգամ մօմը վառեց, հանեց իր աննմանի լուսանկար պատկերը, նայեց, հետը խօսեց, համբուրեց ու նորից դրեց առանձին գրպանի մէջ, ուր բացի նրանից ուրիշ բան չէր պահում: Քանի-քանի անգամ նրա շրթունքները կամացուկ շշնջացին. «Մնաս բարով, սիրելիս»: Ծնողները հարևան սենեակում հանդարտ քնած էին, բոլորովին չենթադրելով, թէ իրենց դուստրը այդ միջոցին հալումաշ է լինում: Բայց ո՞ր ծնողներին է յայտնի, թէ իրանց անչափահաս զաւակները սիրոյ կրակից այրւում են:

Այս ամենավսեմ զգացմունքը, որ այցելում է լոկ անարատ հոգիներին պատանեկական

հասակում, երբ պէտք է մարդիկ դադարեն հալածելուց, ինչպէս յանցանք:

Անվերջ մտածելուց զլուխը թուլացաւ, աչքերը ցաւեցին ու մէջքի վրայ մնաց պառկած անշարժ: Իրան մի փոքր մխիթարելու համար վճռեց առաւօտ կանուխ գնալ երկաթուղու կայարան իր սիրեցեալին կրկին անգամ տեսնելու: Թիւրիմացութեան տեղիք չտալու համար՝ նրանք վճռել էին այսպիսի բան չանել, սակայն այս մանկահասակ աղջկայ սէրը այնքան վառ էր և անզուսպ, որ որոշեց այս տեսակ յանդուգն քայլ անել: Հազար տեսակ պատրուակով նա կարող էր ուսումնարանի փոխարէն կայարան գնալ:

Միբային արկածների նկատմամբ կանայք տղամարդկանցից անհամեմատ հնարագէտ ու խորամանկ են:

Այս հարցը վճռելուց յետոյ Նինան զգաց մի դուրեկան թեթևութիւն: Քաղաքային ժամացոյցը լսեց հինգ անգամ: Գնացքը շարժուելու էր իննին, ուրեմն ժամանակ շատ կար: Գլուխը նորից դրեց բարձի վրայ, աչքերն ուղղեց լուսամուտին, ուր վարագոյրի տակից աղօտ լոյս էր նշմարւում ու հանպիստ սրտով սկսեց սպասել:

Յանկարծ շփոթուած վեր թռաւ անկողնի միջից, ոտաբոբիկ վագեց պատուհանի կողմը, վարագոյրը բարձրացրեց ու սրտալի հեկեկաց: Իզուր իր փոքրիկ ժամացոյցը ականջին մօտե-

ցրեց, նա կանոնաւոր բանում էր: Ժամի իննը իսկոյն պէտք է լրանար:

Արսէնը իր էփանագին, բայց նոր պայուսակը ձեռքին, առանց ընկերների ու ծանօթների ուղեկցութեան, գնաց կայարան: Չուզեց մօտիկ մարդկանց մնաս բարով ասել և իրաւունք ունէր: Նինայի վերջին համբոյրը առանձին քնքշութեամբ շոյում էր նրա շրթունքները և թւում էր, որ մի այլ համբոյր կարող է ջնջել դրան: Վագօնը մտնելուց անմիջապէս յետոյ իր գրպանից հանեց մի փոքրիկ տարօրինակ մատանի, որ բարակ վարդագոյն թղթի մէջ էր պահուած ու անցկացրեց ձախ ձեռքի փոքրիկ մատին: Դա Նինայի մագերից էր հիւսուած:

Երբ գնացքը քաղաքի սահմանից դուրս եկաւ, Արսէնը լուսամտից աշխատեց գտնել իր անգին ընկերուհու տունը և մի վայրկեան աչքերը երկնքին ուղղելով, շշնջաց խորին ջերմեռանգութեամբ. «Աստուած, պահպանիր նրան և մի գրկիր ինձ նրա սիրուց»: Տարօրինակ բան: Չէ որ նա վաղուց, այսինքն հինգերորդ դասարանից, դադարել էր աղօթելուց: Երբ քաղաքը անհետացաւ, սկսեց նամակներ շարադրել՝ ճանապարհից ուղարկելու համար: Այդ բանը հեշտ չէր: Նամակները պէտք է լինէին բարոյագիտական և փիլիսոփայական, միևնոյն ժամանակ քաղցրահնչիւն, ինչպէս բանաստեղծութիւն: Այս

պատիժը անգիտակցաբար Նինան էր հասցրել նրան, մի անգամ ասելով՝ «Ընկերուհիս իր մի ծանօթ երիտասարդից հիանալի նամակ ստացաւ. այդ մի հասարակ, սովորական բան չէր»: Այսպէս, տասը օրուայ ճանապարհորդութիւնը տանջանքներով անցկացրեց, բայց և յաջողուեց երեւելի մտքեր յայտնել: Նրան խիստ զբաղեցնում, դժայլեցնում էր Փարիզի իր հասցէն կազմել Փրանսերէն լեզուով՝ «Փարիզ. Հանքաբանական բարձրագոյն դպրոցի ուսանող Արսէն Վէքիլեան»: Ի՞նչ բարձրահնչիւն և ախորժալի բառեր են և Նինան գրելիս սրչափ պէտք է հպարտանայ:

Մարդուս կեանքի մէջ բաղդաւոր օրեր շատ կան, որոնցից միմիայն երկու օր է աննման. — բարձրագոյն դպրոցում ուսանող ընդունուելու և սիրած օրիորդից համաձայնութիւն ստանալու օրերը: Իսկ ուսման շրջանն աւարտելու վկայականը շատ նման է պսակի վկայականի: Այդտեղ է իլլիւզիայի վախճանը:

Երիտասարդը երբ հասաւ Փարիզ, առանց ժամանակ կորցնելու, փոզոցից փոզոց ընկաւ և շուտով սենեակ վարձեց Լատինական քաղաքամասի մի փոքրիկ հրապարակի վրայ, մի շատ աննշան հիւրանոցի եօթերորդ յարկում, ուղղակի կառուրի տակ: Դեռ պայուսակը չբացած՝ իր հասցէն աւելացրեց նամակի վերջում, որ վաղօրօք մատիտով գրել-պատրաստել էր վագօնի մէջ, և իսկոյն ուղարկեց:

Նամակները պատասխանը թէև ժամանակին ստացաւ, սակայն այդ ժամանակամիջոցը նրա հոգին հանեց: Այնուհետև, համաձայն պայմանի, շարաթական երեք անգամ ինքն էր գրում և երկու անգամ ստանում:

Միքանի ամիս իրար ետևից գլորուեցին: Ամեն բան կարգին էր: Վարձեց մի ուսուցիչ՝ լեզու սովորելու համար, և սկսեց պարապել աշխոյժով և երևանցուն յատուկ յամառութեամբ: Իր հարսնացուի գրութիւնները, որ անգիր սերտել էր՝ կատարեալ անդորրութիւն էին պատճառում նրան: Միմիայն մի նախադասութիւն, որ կարգաց վերջին նամակում, փոքր ինչ անհանգստացրեց նրան. «Դժուար է շարունակ ահ ու երկիւղով գրել»: Ի՞նչ կայ այստեղ կասկածելի: Բայց նրա սրտի մէջ մի տեսակ բիծ գոյացաւ:

Անցել էր մի տարի: Արսէնն ընդունուել էր հանքաբանական դպրոցում, արդէն սկսել էր յաճախել, բայց նրա սիրտը կոտրած էր: Նինայից սակաւ էր ստանում նամակներ և այն էլ կարճ, կիսատ, մի տեսակ շինծու, անբնական: Այդ հոգ չէր լինի, եթէ վերջին գրութիւնը յուսահատական չլինէր: «Համաձայնիր, սիրելիս, որ վիճակս աննկարագրելի է. մեր գաղանփքն արդէն բացուել է ծնողներիս համար և ես գտնուում եմ խիստ հսկողութեան տակ: Ամեն մի խօսքս, ամեն մի քայլս կասկած է յարու-

ցանում: Մինչև երբ պէտք է տանջուեմ, կեանքս կեանքի նման չէ: Մի՞թէ չի կարելի առժամանակ ընդհատել նամակագրութիւնը. սրանով ի՞նչ կը փշանայ, — կարծում եմ ոչինչ, բայց վիճակս կը բարւոքուի հարիւր, հազար, տասը հազար անգամ: Մի՞թէ դու այնքան քարասիրտ կը լինիս, որ կ'ուզես զրկել ինձ այս բանից: Մենք միմեանց շատ գրեցինք, դրանից ի՞նչ դուրս եկաւ. — ոչինչ: Հիմա էլ փորձենք ուրիշ կերպ: Դու եղիր հանգիստ և պարապիր, ինչպէս հարկն է, իսկ ես խոստանում եմ, երբ յարմար միջոց գտնեմ, կը գրեմ: Վերջապէս ապացուցիր, որ դու տղամարդ ես, որ դու ունիս կամքի ոյժ և ամուր բնաւորութիւն: Մի՞թէ կը մերժես»:

Այս տողերը կարդալուց յետոյ Արսէնը մնաց միևնոյն տեղը անշարժ, յետոյ մեքենաբար բաց արաւ լուսամուտը, դուրս հանեց գլուխը և մի քանի անգամ իրար ետևից յոգւոց քաշեց: Ճակատը այրւում, տրաքւում էր: Յանկարծ շուռ եկաւ և սկսեց արագ-արագ յետ ու առաջ քայլել իր նեղ խուցի մէջ. կանգ առաւ մի վայրկեան սենեակի մէջտեղ, աչքը տնկեց սեղանի վրայ դրած գրքին, որ կէս ժամ առաջ վերջացրել էր, դողդոջուն մատներով արագութեամբ թերթեց, և երբ հասաւ իր ցանկացած երեսին, ցուցամատը ման ածեց տողերի վրայ և եղունգով ուժգին ճնշելով Դերիւշեստա անունը, հաւաքեց բերանում թանձրացած թուքը և վրան

արձակեց: Դա Վիկտոր Հիւզոյի «Ծովի աշխատաւորներ» գիրքն էր, որ յափշտակել էր Արսէնին: Անսպասելի կերպով դուրս ցայտեցին նրա բերանից անարգական խօսքեր կանանց հասցէին: Կանգնեց պահարանի առջև, բռունցքները սեղմեց ու յուզուած ձայնով խօսեց. «Դու, սուտաբուժ, արդեօք արժանի՞ էիր իմ կաթոգին սիրուն. դու, դաւաճան, ա՛յս էր խօսքդ: Ահա դու ինչի՞ ես արժանի»: Այս ասելով գլուխը կռացրեց, կամացուկ թքեց իր առջև ու ոտով տրորեց: Մտից հանեց մատանին, ձգեց արհամարհանքով մի կողմը, յետ դարձաւ մռնչալով, նստեց աթոռի վրայ, հանեց ծոցի զրպանից Նինայի լուսանկարը և քցելով սեղանի վրայ, ձեռքը մեկնեց թանաքամանի կողմը՝ ամբողջ թանաքը երեսին ածելու մտքով: Բայց տեսնելով նրա հեղ աչքերն ու անմեղ ժպիտը, բազուկները թուլացան, գլուխը յետ նետեց ու սրտի խորքից հեկեկաց:

Այդ բանը մի փոքր թարմացրեց նրան: Ազատ շունչ քաշելով, դուրս եկաւ սենեակից ու գնաց Լուկսեմբուրգի մուզէյը: Մի բողբոջից յետոյ գտնուում էր «Ժիլիատ»-ի արձանի առաջ և գմայլուած դիտում էր: Մարմարիոնը կամացկամաց կենդանանում էր: Արսէնը պարզ տեսնում էր ինչպէս մեծահոգի երիտասարդը, ահագին տանջանքների դէմ մաքառելուց յետոյ, ընկել էր ծովային ամենասարսափելի կենդանու

ձանկը, որ արիւնաբամ էր անուժ նրան: Ահա ժիլիատը դանակը ձեռքին վերջին ոյժերը հաւաւաքել է և մի ակնթարթից յետոյ ուժգին կը զարնէ այդ հրէշի գլխին: Ո՛րքան կը ցանկար Արսէնը գրկել այդ հերոսին ու ճակատից համբուրել:

«Խեղճ իդիալիստ», մրմնջաց Արսէնը, ինչո՞ւ չգիտէիր, որ սրտիդ սիրած Դերիւշետան ընդունակ չէ քո անձնուրաց, վսեմ հոգին հասկանալու»:

Պահապանն առաջարկեց դուրս գալ: Արսէնը հիմա միայն նկատեց, որ բազմութիւնը հեռացել է ու ինքն է միմիայն մնացել դահլիճի մէջ: Երիտասարդը գնաց իր Փրանսերէն լեզուի ուսուցչի մօտ և իր գալանիքը կարճառօտ պատմելուց յետոյ, դրեց նրա առջև նամակը և հարցրեց. «Ի՞նչ էք հասկանում այս բանից»:

— Շատ պարզ է, պատասխանեց թիւրքահայը, կը նկատեմ, որ օրիորդը կը սիրէ ձեզի:

— Ո՛չ, նա այլևս ինձ չի սիրում:

— Խենթացէ՛ր էք ինչ է, բարեկամս. չէ՞ք տեսներ ինչ անօրինակ ջերմութիւն կը վազէ սա խօսքերէն՝ «մի՞թէ դու այնքան քարասիրտ կը լինիր»: Է՛հ է, վա՛ղ անցէք...

— Դուք կարծում էք:

— Ի՞նչ կ'ըսէք, բարեկամս, մի՞թէ չէք ըմբռներ: Հոգեբանութենէն քիչ մը կը հասկնամ, մանաւանդ կանանց հոգեբանութենէն:

Արսէնը հանգստացաւ, մռայլ ամպերն անհետացան նրա սրտի վրայից: Խիստ գոհ էր որ իր գաղտնիքը բաց արաւ գոնէ մէկի մօտ:

— Անշափ ուրախ եմ, որ ցաւս պատմեցի ձեզ, — ասաց Արսէնը, — դուք ինձ դարմանեցիք: Յուսով եմ, մէկ դուք կը գիտենաք և մէկ էլ Աստուած:

— Անհոգ եղէք, բարեկամս:

Արսէնն առաջարկեց կաֆէ գնալ իրար հետ մի բան խմելու: Շարունակելով խօսակցութիւնը միևնոյն հարցի մասին, դուրս եկան տանից և դիմեցին Կաֆէ Սուֆլէի կողմը:

Բ

Այս դէպքից յետոյ անցել էր չորս տարի: Ուսանողը յաջողութեամբ աւարտել էր հանքաբանական դպրոցը և պատրաստուում էր մեկնելու Կովկաս: Ամբողջ հինգ տարի մնաց Փարիզի մէջ: Այդ ժամանակամիջոցում անկարելի եղաւ գէթ մի անգամ այցելել հայրենիք, ուր սպասում էր իր սիրոյ առարկան: Նիւթական պայմաններն էին արգելք լինում: Իր բարերարից ստացած չնչին գումարը հազիւ բաւականում էր իր համեստ կեանքի և գրքերի համար: Հինգ տարի այդ երևելի մայրաքաղաքում տանջուելու (ապրել բոլոր անտեղի է գործածել) ընթացքում ոչ մի նամակ, ոչ մի տեղեկութիւն չստացաւ

Նինայից: Նրա հին նամակները, որ գեղեցիկ կազմի մէջ էր դրել, համարեա ամեն օր կարդում էր ծայրէջծայր, ուսումնասիրում էր, կըշուում էր իւրաքանչիւր բառ կամ նախադասութիւն, աշխատում էր հոգեբանօրէն վերլուծել և միշտ յանգում էր միևնոյն վճռի. «Նա ինձ սիրում է»: Իր գաղտնիքը այժմ յայտնել էր էլի միքանի հոգու, որոնք նոյնպէս նամակների հիմար վրայ պնդում էին, որ օրիորդի սրտի մէջ գտնուող այդ տեսակ հրաբուխ անկարող էր մարել:

Ընկերները բարոյական մեծ աջակցութիւն ցոյց տուին խեղճ սիրահարին, հակառակ դէպքում հազիւ թէ կարողանար լուրջ կերպով ուսման հետևել: Նա համոզուած էր, այսինքն համոզում էր իրան, որ Նինայի զգացմունքներն անփոփոխ են, սակայն նրա կրծքի տակ, շատ հեռուոր խորշում, մի ինչ-որ բան էր նստած, որ կրծում-մաշում էր: Երբեմն աշխատում էր փրկիսփայ դառնալ և լոկ ուղեղով դատել. «Ի՞նչ հիման վրայ ազնիւ օրիորդը ընդունակ կը լինի դրժել մի անգամ սիրած երիտասարդին, որի հրաբորբոք սէրը անկասկածելի է իր համար»: Սրա պատասխանը լինում էր՝ «անհնարին է»:

Այս հարց ու պատասխանը Արսէնին զբաղեցրել, պահպանել էր ամբողջ հինգ տարի:

Վերջապէս յունիս ամսի վերջերին, կրկին նոյն պայուսակը ձեռքին, ճանապարհուեց դէպի

հայրենիք: Ո՛վ Փարիզում միքանի տարի ապրել է, չի կարող առանց արտասուքի հեռանալ այդ տեղից: Արսէնը արտասուեց, երբ քաղաքի ամենաբարձր շինութիւնները ծածկուեցին նրա աչքից:

Մատանին կրկին զարգարում էր նրա մատը: Ձէր կարողանում մոռանալ իր անիրաւ վարձուները այդ անգին ու միակնուէրի նկատմամբ: Մտադիր էր Նինայի հետ տեսնուելուն պէս խոստովանել իր յանցանքը, ներումն խնդրել և այդպէս խիղճը մաքրել:

Դեռ մեկնելուց մի տարի առաջ սկսեց պլտրել մի գեղեցիկ և յարմար նուէր օրիորդի համար և վերջացրեց նրանով, որ մի արկղիկ մանիշակագոյն թղթեր ու ծրարներ գնեց N ոսկեգօծ տառով: Անցած ապրիլի 1-ին Նինան լրացրել էր քսաններկու տարին: Այդ բանը շատ անհանգիստ էր անում Արսէնին, որովհետև ամուսնանալու համար հասակն առել էր, իսկ ինքը, աղքատ ու անպաշտօն, երբ պէտք է կարգին մարդ դառնայ՝ հարսնացուի ծնողների համաձայնութիւնը ձեռք բերելու համար:

Ո՛րքան մօտենում էր հայրենիքին, այնքան հոգսերը բարդւում էին իրար վրայ և մի տեսակ երկիւղ էր պաշարում նրան: Ինչից էր վախում, չէր կարող բացատրել: Արդէն որոշել էր, դեռ թիֆլիզ չհասած, Գորի այցելել, որովհետև իրան յայտնի էր, որ Ամասեանները տա-

րուայ այս ամիսներին այդտեղ են լինում իրանց սեփական տան մէջ:

Գնացքը կանգ առաւ Գորի կայարանի մօտ և Արսէնը դուրս եկաւ տխուր, որովհետև վերջին գիշերը վատ երագ էր տեսել: Անյաջող հանգամանքները նրա բնաւորութիւնը փոխեցին. առաջուայ անհաւատ երիտասարդն այժմս երագներին էլ հաւատ էր ընծայում: Նստեց կառքի մէջ և հրամայեց տանել որևէ հիւրանոց: Ճանապարհին հարցրեց կառապանին Ամասեանների մասին:

— Մականունն (աւելորդ անուն) ասա, աղա՛ւ:

— Չգիտեմ:

— Հիւրանոցում կ'ասեն, ես չեմ իմացել այդպիսի ազգանուն:

Հիւրանոցում, դեռ շրերը չփոխած, կանչեց սպասաւորին ու նոյն հարցն առաջարկեց: Ծառան նոյնպէս մականուն հարցրեց, յետոյ իսկոյն վազ տալով գնաց և տեղեկութիւն բերաւ, որ այդ ազգանունով մարդիկ կան այստեղ: Կէս ժամ չանցած ճարպիկ իմերէլ ծառան սրտատրոփ ներս ընկաւ Արսէնի սենեակն ու աւետեց՝ «Կնեանգ կոտէն գալիս է... Նա ամենքին ճանաչում է... իսկոյն կ'ասի ձեզ, թէ ինչ տեղ են ապրում ձեր ուղած մարդիկ»:

— Ո՛վ է դա:

— Այստեղի գլխաւոր պրիստաւն է, եղաւ պատասխանը:

Արսէնը մի փոքր շփոթուեց:

Ներս մտաւ համարձակ քայլերով մի վա-
յելչակազմ, մօտ երեսունուերկու տարեկան սի-
րուն տղամարդ պաշտօնական զգեստով:

— Դուք էիք կամենում տեսնել Ամասեան-
ներին, հարցրեց նա ռուսերէն, ժպտալով:

— Այո, կ'ուզէի իմանալ այստեղ են թէ
թիֆլիզում:

— Իսկապէս ո՞վ է ձեզ հարկաւոր, նրանք
չատ են:

— Այդ միևնոյն է... բայց կը ցանկայի օ-
րիորդ Նինային հանդիպել, — յուզուած, բայց
վճռողաբար արտասանեց Արսէնը:

— Այդ դժուար չէ, բայց նախ և առաջ
պատիւ ունիմ ներկայանալու՝ իշխան Նացա-
րիձէ:

Արսէնի համար անսպասելի էր այդ: Նա
եկել էր Գորի ծածուկ և հիմա ստիպուած էր
իր անունը ասել: Դիմեց խորամանկութեան,
անուանելով իրան Մոնթեան:

— Լսած եմ: Ասացէք խնդրեմ՝ սրտեղից էք
ձանաչում օրիորդ Նինիչկային:

— Թիֆլիզից... հինգ տարի առաջ ես նրա
ուսուցիչն եմ եղել, կարմրելով նորից կեղծեց նա:

— Այո, այո, հասկանում եմ: Դուք այսօր
իմ հիւրն էք, այս բոպէիս կ'երթանք տուն և
օրիորդ Նինիչկային էլ կը հրաւիրենք, նա կ'նոջս
ընկերուհին է:

Այս բոլորը իշխանը ասում էր բարձրաձայն
ծիծաղելով:

— Ամենայն սիրով, պատասխանեց երիտա-
սարդը և ուրախութիւնից ձեռքի ափերը շփեց,
չնայած որ պաշտօնեայի վարմունքը Նինայի
անուան նկատմամբ նախանձ և տարօրինակ կաս-
կած էր յարուցանում նրա մէջ:

Խօսելով դուրս եկան հիւրանոցից և դիմե-
ցին քաղաքի կենդրոնի կողմը:

— Ասացէք խնդրեմ՝ սրտեղից էք գալիս, ի
միջի այլոց հարցրեց Նացարիձէն:

Արսէնն սպասում էր այս հարցին և պա-
տասխանն էլ պատրաստել էր:

— Օղեսսայից:

— Ինքս պէտք է ասէի, որ երևի Օղեսսայի
ուսանող էք: Իսկ և իսկ այնտեղի լեզուով էք
խօսում: Ես էլ մտադիր էի ձեր համալսարանի
իրաւաբանական ֆակուլտետը մտնել, բայց...

— Ինչո՞ւ միտքներդ փոխեցիք:

— Գիմնազիայի վեցերորդ դասարանից դուրս
եկայ, այսինքն դուրս արեցին, ծիծաղելով ա-
ւելացրեց իշխանը:

— Երևի միևնոյն դասարանում երկու տա-
րի մնացիք:

— Ո՛չ, ստորո՞վն ձեծեցի: Ընդհակառակն,
ամեն տարի պարգևով էի փոխում դասարանը:

Հասան տուն: Իշխանը իր հիւրին ներս
հրաւիրեց դահլիճ, որ բաւական մաքուր և շնորհ-

քով կահաւորած էր, նստեցրեց բազկաթոռի վրայ ու ինքը մտաւ հարևան սենեակը, որտեղից երեխայի լացի ձայն էր լսուում: Շուտով վերադարձաւ, ամանով քաղցրաւենիք ձեռքին և առաջարկեց ուտել, ասելով՝ սալորի մուրաբա է: Յետոյ լուրջ կերպով պատմեց, որ երեխային նոր են ծծից կտրել և այդ պատճառով գիշերցերեկ ճշում է: Վերջը ձայնը ցածրացնելով, աւելացրեց, որ կինը չիմանալով, որ կրկին յղի է, շարունակում էր փոքրիկին կերակրել և այդ բանից հիւանդացաւ, բայց, փնռք Աստուծոյ, հիմա լաւ է:

Նացարիձէն յանկարծ փոխեց տխուր խօսակցութիւնը, սկսեց կատակներ անել ու հրհռալ, գուշակելով Արսէնին, որ նա էլ շուտով շատ պէտք է ծիծաղի:

— Կինս շուտով դուրս կը գայ, կը ծանօթանաք ու կը խնդրէք, որ օրիորդ Նինային հրավիրէ:

— Ի՞նչ էք ասում, ես երբէք չեմ յանդգնի իշխանուհուն նեղութիւն պատճառելու, եթէ բարի կը գտնուէք ու դուք կը խնդրէք...

— Շատ ճշմարիտ էք ասում, ծիծաղելով պատասխանեց Նացարիձէն և իսկոյն կանչեց. «Իշխանուհի, սպասում ենք ձեզ, մի բան ենք ձեզ վանից խնդրելու, բարեհաճեցէք դուրս գալ»:

Անմիջապէս դուռը բացուեց ու երևաց մի շատ ջանել կին, գունատ դէմքով ու խիտ մա-

գերով: Աչքերը կարճատեսների նման կիսով չափ ծածկելով մի վայրկեան դիտեց հիւրի դէմքն ու յանկարծ ձեռքը զարկելով իր ճակատին յետ գցեց գլուխը, կարծես գնդակ դիպաւ այնտեղին: Մի անորոշ, խուլ ձայն լսուեց նրա բերանից և նա մնաց դռանը յենուած անշարժ:

Արսէնն զգաց թէ ինչպէս իր գլխին տաք ջուր ածեցին, որ արագութեամբ անցաւ ամբողջ մարմնի վրայով: Նա բարձրացել էր իշխանուհուն բարևելու համար, բայց այնպէս վայր ընկաւ բազկաթոռի վրայ, որ կարծես կրճքին ուժգին հրեցին: Բերանում ունեցած քաղցրաւենին զարմանալու չափ դառնացաւ: Լեզուն վայրկեանաբար ցամաքեց և դէմքին իջաւ մեռելային գոյն...

Իշխանը գլուխը կորցրած ու աչքերը լայն բաց արած—մեքենաբար արտասանեց.

Вотъ те и на!

1901, Փարիզ:



Ս. ՂԱԶԱՐԻ ԿՂԶԻՆ 1884 ԹՈՒԻՆ

Տրդատ Լիսեցին *) և ես տասը տարի շարունակ ընկերներ էինք: Մտերմացել էինք իրար հետ 1876 թուականից, երբ միաժամանակ սովորում էինք Թիֆլիզի նկարչական ուսումնարանում: Պետերբուրգ գնացինք և Ակադեմիա մտանք համարեա նոյնպէս միաժամանակ և վերջը Իտալիայի երկնքի տակ աւելի ամրացաւ մեր բարեկամութիւնը:

Ճլօրենցիայում բաւականաչափ աշխատելուց յետոյ, մի երեկոյ, զուարճալի խօսակցութեան միջոցին, խօսք բացուեց վենետիկի մասին, և իսկոյն վճռեցինք տեղափոխուել այնտեղ:

Միւս օրն առաւօտեան երկաթուղու գնացքը մեզ արդէն տանում էր դէպի հրաշալի քաղաքը:

Ափսոս Տրդատ, ափսոս տաղանդ: Դեռ չծաղկած՝ թառամեց, ոչնչացաւ: Հայրը պատուիրել էր և պահանջում էր ճարտարապետ դառնալ, իսկ նա ստեղծուած էր ժանրիստ լինելու:

*) Այսպէս էր ստորագրում հանգուցեալ Տրդատ Լիսեցեանը:

Դրութիւնը անելանելի էր: Հօրը չափազանց յարգելուց հետևում էր ճարտարապետութեան, իսկ նկարչութեան վրայ սիրահարուած լինելուց ստիպուած՝ անկարող էր հրաժարուել վերջինից: Եւ այսպէս, միաժամանակ ուսումնասիրում էր երկու իրար հակառակ մասնագիտութիւն և շօշափելի առաջադիմութիւն ցոյց տալիս:

Մեծ յոյսեր ունէի աշխոյժ երիտասարդ ընկերոջս վրայ, բայց մեծ յոյսերը երբ ես իրագործուում: Նրան վիճակուած էր քսանուերեք տարեկան հասակում օտար հողի տակ հանգչելու:

Հասանք վենետիկ: Այս արտիստիկ, օրիգինալ քաղաքը ապշեցրեց մեզ: Եւրոպական բոլոր քաղաքները փոքրիշատէ միմեանց նման են, բայց սա մի տարօրինակ բացառութիւն է կազմում:

Առաջին օրնեթ այցելեցինք գեղարուեստական մուզէյները, ուր պատահմամբ ծանօթացանք հ. Յովսէփ Մարգարեանի հետ: Նա մեզ տարաւ Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանը և ծանօթացրեց հ. Գաբրիէլ Նահապետեանի և հ. Համազասպ Սաֆարեանի հետ: Սրանք ամենքը կովկասցիներ էին, ուրեմն հեշտութեամբ պէտք է հասկանայինք իրար: Մեր խօսակցութեան նիւթը գլխաւորապէս հ. Արիշանն էր: Այդ երիտասարդ վարդապետները ոգևորուած ու

յափշտակուած պատմում էին նրա մասին իրանց գիտեցածը:

Վենետիկն ընդհանուր կերպով պարտելուց յետոյ՝ մի պայծառ յունիսեան առաւօտ նստեցինք գօնդօլ և դիմեցինք դէպի ս. Ղազարի կղզին, որ հեռուից նկատուում էր իր միակերպ, կարմրագոյն շինութիւններով:

Նաւավարը շատախօս էր. նա շարունակ պատմում էր հայ վարդապետների մասին հազար տեսակ բաներ, որոնցից մեծ մասը չէինք հասկանում և այս պատճառով ի սրտէ ծիծաղում էինք: Իտալացին ենթադրելով, որ իր պատմութիւնն է մեզ ծիծաղ պատճառում, կըրկնապատիկ ոգևորւում էր:

Հասանք կղզին: Հիւրընկալ վարդապետը, որի անունը մոռացել եմ, ուրախութեամբ մեզ ընդունեց: Սովորական և ընդունուած կարճ խօսակցութիւնից յետոյ, յայտնեցինք իրան մեր ցանկութիւնը: Ս. Ղազարի կղզին և Ալիշանը մեզ համար միևնոյն բանն էր, ուստի ամենից առաջ ուզում էինք հ. Ղևոնդին տեսնել:

Հիւրընկալը՝ «Իսկոյն» ասելով հեռացաւ: Մենք մնացինք միայնակ մի մաքուր սենեակի մէջ:

— Գուշակիր, ինչ տեսակ մարդ է Ալիշանը, հարցրեց Տրդատը:

— Միջահասակ, սպիտակ մօրուքով և լուրջ դէմքով, պատասխանեցի ես:

— Իսկ իմ կարծիքով նրա արտաքին տեսքը այսպէս է:— Այս ասելով իր մազերն ուղղեց, յօնքերը կլիտեց, նստեց աթոռի վրայ, որ սեղանի մօտ դրուած էր և ճակատը ափի մէջ առաւ:

Նա ունէր և դերասանական ընդունակութիւն: Մեծ ճարտիկութեամբ ներկայացնում էր զանազան տիպեր:

— Ո՛չ, ասացի ես, դա խիստ է. իմ կարծիքով նա բարի է:

— Ուրեմն այսպէս...

Նա արդէն ձեռք փոխել էր, և ես պատրաստուում էի կրկին նկատողութիւն անելու, երբ ներս մտաւ արագ քայլերով մի փարաջաւոր կարճահասակ նիհար ծերունի, որ շատ նման էր մանր պաշտօն ունեցող հոգևորականի: Բարև տալուց յետոյ բռնեց մեր ձեռքերից ու տարաւ դրադարանը: Ըստ երևոյթին նրա ցանկութիւնն էր մեզ զբաղեցնել մինչև հ. Ալիշանի դուրս գալը: Յոյց տալով միջանի տամեակ ձեռագիր հայերէն գրքեր, հարկաւոր բացատրութիւններ տուաւ: Վերջը աւելացրեց, որ այս կողմից Ս. Էջմիածնի գրադարանը անհամեմատ հարուստ է:

Ժամանակն անցնում էր, իսկ հ. Ալիշանը չկար: Մեր համբերութիւնը հատաւ. չէ՞ որ շատ երիտասարդ էինք:

Տրդատը բռնելով ինձ հասկացնում էր, որ ես խօսեմ:

—Բայց մենք ուզում էինք նախ և առաջ
Ղևոնդ վարդապետին տեսնել...

Սուքս չաւարտած, ծերունին առաւ ձեռքս
ու իր ետևից քարշ տալով տարաւ մի ընդար-
ձակ սեղանի մօտ, ուր դարսած էին նոր տպա-
գրուող գրքի թերթեր ու պատկերներ:

Ընկերս, որ տաքարիւն տղայ էր, զայրացել
էր ծերունու վարմունքից ու այլևս չէր ուզում
նրան լսել:

—Սա Այրարատն է, որ այժմ տպագրւում
է, ասաց հոգևորականը.— Ինչպէս էք հաւանում
նկարները:

—Հիանալի է, պատասխանեցի ես.— սա հ.
Ալիշանի աշխատութիւնն է...

—Այո, մենք ամենքս կ'աշխատենք:

—Мы пахали,— փնթփնթաց Տրդատը և հե-
ռացաւ մեր մօտից:

Վարդապետը բան չկասկածելով, առաջուայ
պէս ոգևորուած ցոյց էր տալիս զանազան բա-
ներ:

Ընկերս բոլորովին առանձնացաւ: Նա կանգ-
նել էր մօտ տաս քայլ մեզանից հեռու ու աշ-
խատում էր ձեռքով նախատել ինձ, իրան չհե-
տևելու համար:

Հոգևորականը տարաւ ինձ թանգարանը: Նա
այնտեղ նկատեց, որ Տրդատը մեզ հետ չէ:

—Ո՞ւր է ընկերդ:

Ես Տրդատի նման քաջ ու համարձակ չէի,

ես ամաչկոտ էի: Մի փոքր շփոթուեցի ու ինչ-
որ յիմար պատասխան տուի:

Այդ միջոցին Լիսիցեանը ներս վազեց թան-
գարանը, բոլորովին այլայլուած, մօտեցաւ ծե-
րունուն, առաւ նրա աջ ձեռքն ու սեղմեց իր
շրթունքներին:

—Ի՞նչ կ'ընես, տղաս, զարմացած արտա-
սանեց վարդապետն ու կարմրեց:

—Ինչո՞ւ չասացիք, ինչո՞ւ չասացիք... Նե-
րեցէք... յուզուած ձայնով խօսեց Տրդատը:

Ինձ համար էլ սլարգուեց, որ նա ինքը հ.
Ալիշանն էր:

Մեր խօսակցութիւնը աւելի կենդանութիւն
ստացաւ: Ղևոնդ վարդապետը իր բարի ու ան-
մեղ աչքերով դիմում էր մերթ ինձ, մերթ ըն-
կերիս ու իրան հետաքրքրող հարցեր սուաջար-
կում:

Ի միջի այլոց հարցրի իրան, թէ ինչո՞ւ
չայաստան չէ գնում ճանապարհորդելու:

—Երուսաղէմ *) կերթամ, ժպտալով պա-
տասխանեց նա:

Զնայած նրա սիրալիր առաջարկութեան,
մենք չմնացինք վանքում ճաշելու և շատ դու-
րեկան տպաւորութեան տակ մեկնեցինք այն-
տեղից:

*) Վերին Երուսաղէմ:

—Ի՞նչպէս հաւանեցիր, Տրդատ, հ. Ալիշանին, հարցրի ես նստելով գօնդօլի մէջ:

—Առաջին անգամ եմ տեսնում այդ աստիճան բարի ու խոնարհ աչքեր:

—Մանկական անմեղութիւն է զրուած նրա դէմքի վրայ, աւելացրի ես:

Այն օրից յետոյ անցել է տասնևեօթը տարի: Հ. Ղևոնդ Ալիշանը այլևս չկայ: Նա գերեզման իջաւ իր մարդկային պարտքը լիովին կատարելուց յետոյ: Երջանիկ մարդ:

1902, Թիֆլիզ:



Մ Ի Հ Ա Մ Բ Ո Յ Ր

Թիֆլիզցի վանիչկա Մուրադեանը Պետերբուրգի համալսարանի ուսանող էր, գեղեցիկ դէմքով ու շնորհալի կազմուածքով մի երիտասարդ: Գիտէր լաւ պարել և գեղեցիկ հագնուել: Նա պատկանում էր այժմեան ուսանողութեան մեծամասնութեան շարքին, որոնց արտաքինը ցոյց է տալիս, թէ նրանք դերձակներին ու վարսավիրներին (парик-махеръ) չարչարում են անխղճօրէն:

Մուրադեանը երրորդ լսարանը յաջողութեամբ փոխելուց յետոյ վերադարձել էր հայրենիք հանգստանալու: Նրա հարուստ ծնողները բազմաթիւ զաւակների տէր էին, ուրեմն անկասկած Ֆրանսուհի դաստիարակչուհի պէտք է ունենային: Բախտի բերմամբ, այս անգամ այդ Ֆրանսուհին իսկական Ֆրանսուհի էր: Չէ որ Թիֆլիզի՝ անգլիուհի, գերմանուհի և ֆրանսուհի դաստիարակչուհիների մեծ մասը հրէուհիներն են կազմում:

Աւելորդ է ասել, որ mademoiselle Marie-ն մի քնքուշ արարած էր, ճաշակով հագնուող և

նուրբ ձևերով: Նա իբրև հարազատ պարիզուհի քնքշակազմ և արագաշարժ էր: Նրա խոշոր, կապուտին տուող աչքերը խիստ ներդաշնակուժ էին գունատ դէմքին ու թուխ մազերին: Սօսում էր չափազանց արագ և դուրեկան ձայնով:

Տիկին Մուրադեանը—Վանիչկայի մայրը, այդ փառասէր կինը, կրկնապատիկ ուժիկի շնորհով խլեց այդ ֆրանսուհուն իր մօտիկ ազգականներին, որոնք բերել էին նրան Փարիզից: Նրանք էլ, ի հարկէ, վրէժ առան. քառասուն ուրբով գրաւեցին ու վարձեցին Մուրադեանների խոհարարին:

Երիտասարդ ուսանողի վրայ մեծ տպաւորութիւն գործեց օրիորդ Մարին: Բայց տպաւորութիւն գործեց ոչ թէ այն պատճառով որ եւրոպայից եկած բոլոր դաստիարակչուհիները իրարից վատթար տգեղներ են և Մարին նրանց թագուհի կարող էր համարուել, այլ իբրև առհասարակ գեղեցիկ կին՝ նրա նուրբ ճաշակին կատարեալ բաւարարութիւն էր տալիս: «Կնոջ գեղեցկութիւն հասկանալն ամեն մարդու բան չէ», կրկնում էր յաճախ Վանիչկէն իր ընկերների շրջանում, երբ խօսք էր բացուում գեղեցկութեան մասին: Ընկերներն իզուր չէին անուանում նրան էքսպերտ:

Հայ ուսանողների մէջ Վանիչկայի չափ ամսական ստացող ոչ ոք չկար, բայց ամենքից շատ

պարտք էլ նա ունէր: Ի՞նչպէս անէր խեղճը, որ ծայրը ծայրին հասցնէր: Նեակի և Մարսկոյ փողոցների անկիւնում բնակարանները թանգ են, այնտեղից համալսարանը մօտիկ չէ, ուրեմն կառք պէտք է վարձել, ճաշ, հագուստ, թատրոն և այլն և այլն նոյնպէս փող արժեն: Զարմանում էր, թէ ինքը հարիւր ուրբի ծախսելով հազիւ հազ համեստ կերպով ապրում էր, հապա ի՞նչ էին անում 25—30 ուրբի ստացողները, ի՞նչ էին եօլա-գնում:

Ընկերները, յայտնի չէ՝ նախանձից դըրդուած, թէ հէնց այնպէս, զանազան անեկզօտներ էին պատմում Վանիչկայի կեանքից: Ի միջի այլոց հաւատացնում էին, որ մի անգամ ինչ-որ թիւրիմացութեան պատճառով ոստիկանութիւնը խուզարկել էր նրա բնակարանը, բայց փոխանակ նշանակութիւն ունեցող բան գտնելու, զանազան սրուակներ էին հաւաքել տարել՝ որը շրթունքների պօմադայով, որը մազերն օծելու, բեղերը սրելու նիւթերով և այլն:

Պատմում էին նոյնպէս որ մի անգամ ուսանողական ժողովում երբ խօսք էր բացուել Գարիբալդիի մասին, Վանիչկէն առաջին անգամ լսելով այդ անունը, հարցրել էր՝ «ո՞վ է Գարիբալդին»: Իբրև մի անհամ անեկզօտ այն էլ էին պատմում, որ իբր թէ նա իր ազգանունից զատ հայերէն գրել չգիտէ, նոյնիսկ տառերը չի ճա-

նօթանալ երիտասարդների հետ և երբ այդ աջողուում էր՝ խօսում էր բերանի ջուրը գնալով:

Մարին ու Սիւզանը շատ մօտ էին իրար: Թէ զբօսնում և թէ թատրոն էին յաճախում միշտ միասին: Այդ զոյգը, իբրև երկու հակառակ բևեռներ, յայտնի էր ամբողջ քաղաքին: Ոմանք ասում էին, թէ Մարին դիտմամբ է անում այդ կրկնակի գեղեցիկ երևալու համար, ոմանք էլ պնդում էին, թէ Սիւզանի խորամանկութիւնն է այդպէս անողը, որովհետև այլապէս «ոչ մի սատանայ նրան չի մօտենալ»:

Պառաւ օրիորդը ցանկացել էր Վանիչկայի հետ ծանօթանալ, սաստիկ դուր էր եկել նրա մշտաժպիտ աչքերը: Գիշեր-ցերեկ անհանդիստ էր անում Մարիին այդ բանի առիթով, բայց նա չէր կատարում նրա անզուսպ ցանկութիւնը: Սիւզանը վերջիվերջոյ ենթադրում էր, որ իր ընկերուհին խանդից դրդուած չի ծանօթացնում: Սխալուում էր: Վանիչկէն նախագգուչացրել էր Մարիին չծանօթացնել իրան այդ «հրէշի» հետ:

Գեղեցիկ ֆրանսուհին գրաւել էր ուսանող Մուրադեանին: Այն աստիճան յափշտակուել էր խեղճ երիտասարդը, որ քունը կորցրել էր: Ամեն մի քայլափոխում աշխատում էր հասկացնել օրիորդին, որ ոտով գլխով սիրահարուած է, սակայն բան չէր դուրս գալիս: Մարիի աչքում Վանիչկէն մի թեթևօրիկ արարած էր, որին

սիրելի դժուար է: Այս հանգամանքը հասկանում էր նա, հետևապէս կրկնապատիկ բորբոքում էր և նրա ինքնասիրութիւնը տանջում: Ինչպէս չտանջուէր, երբ հաստատ համոզուած էր, որ ինքն ամբողջ քաղաքի մէջ առաջին փեսացու կարող էր համարուել, իսկ մի ինչ-որ չքաւոր դասակարգին պատկանող հասարակ վարժուհի, հազարաւոր վերստ հեռաւորութիւնից եկած մի կտոր հաց վաստակելու համար, միանգամայն անտարբեր է դէպի իրան:

Ասում են սէրը տանջանք է: Այդ սխալ է: Երբ սէրը սիրով է վարձատրուում, այն ժամանակ ոչ թէ բացակայում է տանջանք, այլ նոյնիսկ առաջ է գալիս ձանձրոյթ: Բայց երբ սէրը հանդիպում է անտարբերութեան, ահա այդ դէպքում են լինում անքուն գիշերներ, բարոյական չարչարանք:

Վանիչկէն սիրահարուած չէր, նա յափշտակուած էր, ուրեմն աւելի վատ նրա համար, որովհետև միմիայն անմիտ յափշտակութիւնն է, որ մարդուս բորբոքեցնում, խելագարեցնում է: Օրերը յաշորդում էին իրար, ժամանակն անցնում էր, իսկ երիտասարդի դրութիւնը գնալով վատանում էր: Ուտելու սովորական լաւ ախորժակը կորցրել էր և քունը խանգարուել. նրա դուռը ղեմքը դալկացել էր: Մայրը և տան միւս անդամները նկատում էին այդ, բայց պատճառը ոչ ոքին յայտնի չէր: Քաջ գիտէր մի-

միայն Մարին, որ սրտանց ցաւում էր այդ անախորժ հանգամանքի համար: Ուսանող Մուրադեանը, չնայած իր քսան և երեք տարեկան հասակին, առաջին անգամ էր այդպէս ուժգին գրաւուել և երկի այդ էր պատճառը, որ նրան անտանելի էր թւում իր դրութիւնը: Լինում էին վայրկեաններ, երբ ինքնասպանութեան վրայ էր մտածում, բայց ի հարկէ իսկոյն ուղքի էր գալիս, վեր էր կենում տեղից, այնպիսի շարժուածքներ և քայլեր էր անում, որ կարծես ուզում էր համոզուել, թէ ինքը ուժեղ արարած է և ոչ թոյլ, անպէտք: Կանգնում էր մեծ հայելիի առջև, խոժոռացնում էր գէմքը և զննում ինքն իրան ոտից մինչև գլուխը:

Վերջապէս մի շար միտք յղացաւ: Նա ըզգում էր, որ եթէ այս դրութեամբ վերադառնայ Պետերբուրգ, ոչ միայն իր հոգեկան տանջանքը պէտք է կրկնապատկուի, այլև ջգրուց ու բարկութիւնից պէտք է հալ ու մաշ լինի: Ուրեմն մի կերպ պէտք է գոհացումն ստանալ: Վճռեց համբուրել, լոկ մի անգամ համբուրել: Նրա կարծիքով այդ էր միակ դարմանը: Բայց ինչպէս: Ահա այս հարցն անդադար զբաղեցնում էր նրա միտքը: Համոզուած էր, որ մի համբոյրը նրան կը փրկի, կ'ազատէ հոգեմաշ դրութիւնից և ուրախ սրտով կը վերադառնայ մայրաքաղաք, ուր սեպտեմբերի մէկից ուսումը պէտք է սկսուէր:

Օգոստոսը նոր էր սկսուել, ուրեմն քսան

օրից աւելի ժամանակ ունէր այս դժուար հարցը լուծելու համար: Մի առաւօտ տեսնուեց իր մօտիկ ազգական և հասակակից Բագրատի հետ, որ յայտնի էր իր սիրահարական արկածներով, յատկապէս իր ցաւը յայտնելու և խորհրդակցելու: Բագրատը, իբրև փորձուած մարդ, առաջարկեց հեռանալ քաղաքից մի քանի օրով, գնալ թէկուզ Մանգլիս իր շղերը կարգի բերելու, իսկ յետոյ ծառերի տակ զբօսնելու միջոցին կարող է մի հանճարեղ միտք ծագել անխուսափելի դիտաւորութիւնը իրագործելու համար: Ի միջի այլոց պատմեց իր կեանքից մի դէպք, թէ ինչ ձևով մի անգամ համբուրեց մի ջահէլ տիկնոջ. «Միասին զբօսնելու ժամանակ փողպատոս յետ արի և կրկին սկսեցի կապել: Դիտմամբ շարչարուելուց յետոյ, քթիս տակ փնթփնթացի, որ իբր թէ սովոր չեմ առանց հայելիի կապել: Տիկնոյն, ի հարկէ, առաջարկեց իր օգնութիւնը և կապելու միջոցին շատ յարմար եղաւ համբուրել»:

Վանիչկէն այնչափ հաւանեց այս հնարագիտութիւնը, որ ձեռքերը շփեց: Հետեւեալ օրն ևեթ գնաց Մանգլիս, ուր մնաց հինգ օր: Վերջին օրը անտառի մէջ զբօսնելիս սկսեց մտածել, թէ ինչպէս անէ, որ իր նպատակին հասնէ առանց անախորժութիւնների: Բագրատի պատմածը շատ լաւ բան է, բայց երկիւղ ունէր հետեանքից, այսինքն օրիորդը կարող է զայրանալ և ղալմա-

ղալ գցել: Արդեօք աւելի լաւ չի՞ լինի անկեղ-
ծօրէն յայտնել նրան իր այս չնչին ցանկութիւ-
նը և խնդրել թոյլաւութիւն լոկ մի համբոյրի
համար: Իսկ եթէ բարկանմոյ, անպատուէ՞, ա-
մաչեցնէ՞: Այդ էլ չեղաւ:

Ման գալով անցաւ անտառի ծայրը, որտե-
ղից երևում է ուսարնակ գիւղը պարտէզներով
շրջապատուած և միքանի լեռնային շերտեր խիտ
անտառներով ծածկուած: Այնտեղ կանգ առաւ
մի ահագին մայրի ծառի տակ, որի ուղղահա-
յեաց կարմրագոյն բունը և մշտադալար փշոտ
սաղարթները ախորժելի կերպով նկարւում էին
կապոյտ երկնքի վրայ և սկսեց դիտել հեռուն:
Մեքենաբար նստեց, մէջքը դէմ տուեց ծառի
բունին, չորացած խոտի ցօղունը ցցեց ատամ-
ների արանքը և կրկին սկսեց մտածել. «Եթէ
այստեղ լինէր այս բոպէիս»... հազիւ լսելի
ձայնով արտասանեց և նայեց իր շուրջը: Յան-
կարծ նկատեց իր սպիտակ համազգեստի վրայ
մի հատ մըջիւն, որ բարձրանում էր դէպի կուրծ-
քը. կարծես ճանապարհը կորցրել էր. նա եր-
բեմն աջ կողմն էր դիմում, երբեմն ձախ: Վա-
նիչկէն Աստծու անունը յիշեց և վճռեց. եթէ
վերջիվերջոյ աջ կողմ թեքուի՝ այն, եթէ ձախ՝
նչ: Մըջիւնը մի վայրկեան յետ դարձաւ, յետոյ
մի պտոյտ գործեց և արագընթաց դիմեց դէ-
պի աջ: Երիտասարդը սրտալի շունչ քաշեց,

վերցրեց մըջիւնը և թողեց խոտերի մէջ, վեր-
ջացած համարելով գործողութիւնը:

Չարմանալի բան. ինչո՞ւ մարդ անաջող սի-
րոյ ժամանակ սնապաշտ է դառնում: Մուրա-
ղեանը բոլորովին հանգստացաւ, արդէն կիսով
չափ նպատակին հասած համարեց իրան և ու-
րախ-ուրախ վերագարձաւ անտառից իր ճանա-
պարհորդական իրերը կարգի բերելու: Բայց և
այնպէս հարկաւոր էր դարձեալ մտածել, թէ
ինչ հնարքով կարող է մի համբոյր քաղել Մա-
րիի շրթունքից: Նա յիշեց մի յանդուգն բան-
օրիորդի սենեակի բանալին տեղիցը հանել, որ-
պէսզի նա անկարող լինի դուռը փակել, և այդ-
պէս քնած միջոցին աննկատելի կերպով մտնել
սենեակը և... Բայց ո՞չ, այդ անկարելի է: Հա-
պա եթէ օրիորդը գուշակէ այդ խորամանկու-
թիւնը և մութ սենեակում Վանիչկի երեսին մի
լաւ ապտակ հասցնէ: Միշտ հետևանքի մասին
պէտք է մտածել: Ամեն ինչ մոռացած, նրա
մտածելու միակ առարկան այդ հարցն էր և
հարկաւոր էր այդ գիշեր անպատճառ վճռել: Ու-
րեմն վճիռը պէտք է կայանար Մանգլիսում, իսկ
իրագործուէր Թիֆլիզում: Գլուխը յօգնեցնելուց
յետոյ յոյսը դրեց երազի վրայ և պառկեց քնե-
լու: Չէ՞ որ շատ անգամ մարդիկ երազում բա-
ներ են սովորում: Մինչև անգամ իր կեանքից
յիշեց մի դէպք. երազում տեսել էր, երբ գիմ-
նազիօնի աշակերտ էր, թէ ինչ խնդիր պէտք է

ստանար երկրաչափութիւնից միւս օրը քննութեանը:

Վանիչկէն հասաւ Թիֆլիզ: Կառապանին արձակելուց յետոյ դուռը բաց արաւ: Դռան բանալին միշտ հետն էր ունենում: Գիշերուայ ժամը մէկն էր, ամբողջ տունը քնած էր, այնպէս որ նրա գալը ոչ ոք չիմացաւ: Պատշգամբի վրայով անցնելիս նախ Մարիի սենեակի առջևից պէտք է անցնէր, յետոյ երեխաների, ծնողների, իսկ ամենից վերջը իր սենեակն էր:

Յանկարծ ապշած մնաց: Պարզ նկատեց, որ օրիորդի սենեակի դուռը այդ վայրկեանին զգուշութեամբ բացուեց: Մի այնպիսի սառսուռ անցաւ նրա մարմնի միջով, որ սկսեց դողալ: Տարօրինակ, մի անձանօթ երկիւղ պատեց նրան ու մնաց արձանացած: Այս ինչ է նշանակում, երազ խօ չէ: Ո՛չ, իրականութիւն է, շատ լաւ զգում է, որ ինքը կանգնած է Մարիի սենեակի առաջ, որ յատկապէս իրա համար բացուեց: Աւելի հաստատ համոզուելու համար կծեց իր լեզուն: Այո, սա կատարեալ իրականութիւն է: Իսկոյն յիշեց մըջիւնին և ժպտաց, ատամները իրար զարկելով:

Ուզում էր տեղից շարժուել, բայց չէր կարողանում, չէր համարձակում: Վայրկենաբար անհետացաւ նրա սրտից այն բորբոքուած սէրը, որ հալումաշ էր արել մինչև այդ օրը: Ահա կիսով

չափ բաց է նրա առջև գեղեցիկ օրիորդի սենեակի դուռը, ներսը մութ է, շուրջը տիրում է կատարեալ լուսթիւն, նայող, տեսնող չկայ, սակայն նա դողում է ամբողջ մարմնով: Յայտնի չէ որտեղից մօտեցաւ մի կատու և քսուեց նրա ոտներին: Ահից քիչ մնաց ճիչ արձակէր:

Վերջապէս մեքենաբար ոտը բարձրացրեց՝ քայլ անելու դէպի սենեակը, բայց կրկին մնաց իր տեղում. անիծեալ կօշիկները ճրճուում էին: Առանց երկար մտածելու կօշիկները հանեց ու թողեց դռան մօտ, իսկ ինքը վճռեց մտնել ներս: Թէև համբոյրի ցանկութիւնը այլևս չկար, բայց հասկանում էր, որ այդ առաջ էր եկել երկիւղից: Գիտէր նոյնպէս, որ եթէ այս բաղդաւոր առիթը ձեռքից բաց թողնէ, յանցանքի չափ սխալ գործած կը լինի:

Դողն անցաւ, տեղ տալով քրտինքի, որ ձաւատից վազում էր ցած: Նայեց իր շուրջը՝ մի անգամ էլ համոզուելու, որ վկայ չկայ և վրձրեց մտնել սենեակը, յամենայն դէպս նախօրօք թեթև զարկելով մատի ծայրով դուռը: Ներսից լսեց մի թոյլ ձայն, կարծես բարձր տեղից շարժուեց: Այս մի հարց ու պատասխան էր, այն անխօս լեզուով, որ սիրահարուածները քաջ հասկանում են:

Լուսնի երկրորդ կէսը շփուում էր ամպերի հետ, որոնք մերթ սպիտակ ու նօսր, մերթ գորշ ու թանձր գոյներով յաջորդում էին իրար՝

լոյս ու ստուէր խաղացնելով երկրի վրայ: Այնպիսի լուռթիւն էր տիրում ամեն տեղ, որ Վանիչկէն ուղղում էր իր սրտի բաբախումը և ժամացոյցի ճկճկոցը մի կերպ լռեցնել՝ քնածներին չզարթեցնելու համար: Նա արդէն որոշեց մտնել օրիորդի սենեակը և սկսեց զգուշութեամբ քայլերը փոխել: Գիտէր մահճակալի տեղը, այնպէս որ մութը չէր խանգարիլ գտնելու, մանաւանդ որ ամարային սպիտակ վերմակը պարզ երևում էր:

Ահա արդէն կանգնած է անկողնի մօտ: Բեղերն ուղղեց դողացող մատներով՝ շրթունքներն ազատելու համար, և կամացուկ կռացաւ դէպի բարձր, որի վրայ աղօտ նշմարում էր օրիորդի դէմքը թուխ մազերով շրջապատուած: Առաջ մի աննկատելի համբոյր դրոշմեց մազերին և իսկոյն գլուխը բարձրացրեց: «Վերջացած բան է, մտածեց նա, օրիորդը իմ համբոյրից քաշուելու չէ»: Այժմ համարձակ իր ձեռքերը բարձի աջ ու ձախ կողմը դարսեց և զարմանալի քրնքշութեամբ համբուրեց շրթունքներից: Կրկին ուղեց գլուխը բարձրացնել, բայց ո՞վ զարմանք, վերմակի տակից ազատուելով երկու փափուկ թևեր, նրա վզով փաթաթուեցին: Երկու սիրահարներ սկսեցին անթիւ համբոյրներով ծածկել միմեանց այտերը, աչքերը, վիզը...

Չանդը հնչեց: Օ՛, անիծուի. ո՞վ է եկողը: Կրկին հնչեց միքանի անգամ իրար ետևից և

զրկախառնուած սիրահարները լսեցին, թէ ինչպէս ծառան գնաց դուռը բանալու: Երիտասարդը անմիջապէս վազեց ու ծածկեց սենեակի դուռը և իսկոյն վերադարձաւ անկողնի մօտ, ականջները սրելով:

Եկողը թեթև քայլերով ու մետաքսեայ զգեստը շխշխացնելով մօտեցաւ սենեակի դուռներին և երեք անգամ դարկեց նրան: Եւ որովհետև դուռը բանալիով փակուած չէր, ինքը բաց արաւ: Սիրահարը գլուխը կորցրած տարուբերուեց, մի պտոյտ գործեց ու առանց վայրկեան կորցնելու ճարպիկութեամբ մտաւ մահճակալի տակ: Այնտեղ մի ինչ-որ աման շուռ եկաւ, սակայն ստիպուած մնաց անշարժ, հազիւ տեղաւորուելով այնտեղ: Անծանօթը լուցկի վառեց ու քնքուշ ձայնով արտասանեց. Pardon, M-lle Suzanne, j'ai trop retardé*):

Բանից երևաց որ Վանիչկի բացակայութեան միջոցին օրիորդ Մարին էլ գնացել էր Բօրժօմ երեք օրով հիւր և խնդրել էր Սիւզանին առժամանակ իրան փոխարինել:

*) Ներողութիւն, օրիորդ Սիւզան, ես շատ ուշացայ:

1903, Մանգլիս:



ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ա.

Ես նոյնպէս, իբրև բուն ասիացի, օտար երկիրներ պարտելուց յետոյ, վերջապէս հարկաւոր համարեցի գնալ աեսնել նաև մեր երկրի մի անկիւնը, Ղարաբաղի հռչակաւոր լեռնային բնութիւնը, որի գովասանքը շատ էի լսել նրա հարազատ գաւակներէից: Զարմանալի մարդիկ են զարաբաղցիք, բոլորովին նման չեն ուրիշ գաւառացի հայերի: Իմ կարծիքով, նրանց տիպը նկարագրելու համար պէտք է գործածել լոկ երկու բառ՝ հոգուով բանաստեղծ, արտաքուստ կոպիտ: Շատ անգամ մտածել էի, որ այս տարօրինակ ժողովուրդը, որի կէսը երաժիշտ է, պէտք է ունենայ և տարօրինակ հայրենիք:

Ի հարկէ, նախ և առաջ տեսայ մայրաքաղաքը՝ Շուշին: Լաւ դիտելու համար ընտրեցի գլխաւոր բարձրաւանդակը, ուր գտնուում է գերեզմանատունը: Մեռելների այս խաղաղ աշխարհը կուշ է եկել մի հսկայական ժայռի տակ, որ բարձրից կախուած՝ երկիւղ է տարածում

իր շուրջը: Գերեզման փորող ծերունին, քլունդը մի կողմ դնելով, պատմեց ինձ, որ մի քանի տարի առաջ այդ ժայռերից մի ահագին կտոր վայր ընկաւ և իր հետ գլորեց ձորը շատ գերեզմանաքարեր: Այստեղ զգացի առաջին անգամ բնութեան կոպտութիւնը:

—Ո՞ւմ համար ես փորում փոսը, հարցրի ես Համլէտի նման:

—Մի երիտասարդի համար, որ զինուորութիւնից հիւանդ վերադարձաւ ու մեռաւ:

—Մեղքդ չի՞ գալիս, ծերուկ, որ ջահէլի համար գերեզման ես փորում:

—Հը՛մ,—եղաւ պատասխանը: Թիով մի փոքր հող հանելուց յետոյ քրտինքը սրբեց ու մէջքն ուղղեց:—Ոչ թէ մեղք է, այլ վարձք է... մեղք այն ժամանակ կը լինէր, եթէ մնար երկրի երեսին ու թռչունների կերակուր դառնար:

—Սովորաբար քանի արշին խորութեամբ է փորում գերեզմանը:

—Տղամարդու համար մինչև գօտին, իսկ կնոջ համար մինչև ծծերը... է է... մեռած մարդու համար գերեզման փորել մեղք է. ոչ թէ մեղք, այլ վարձք է:

Քլունդը նորից վերցրեց ու պատրաստուեց շարունակելու գործը, երբ մի մարդ, որ քիչ հեռու պառկած էր մահարձանից տարածուած ստուերի մէջ, խօսեց.

—Պօղոսից լսել եմ որ թէ տղամարդու և

Թէ կնոջ համար երկու արշին խորութեամբ պէտք է փորուի:

— Հը՛մ... Աստուած հոգին լուսաւորէ, բայց նա ի՞նչ գերեզման փորող էր, նա փինաչի էր, փինաչի... Մեղք չէ, այլ վարձք է:

— Քանի տարի է ինչ այս գործով ես պարապում, հարցրի ես:

— Վաղուց է... Ես ժամկոչ էլ եմ... Ո՛չ, աղա, մեղք չէ, վարձք է:

Բ

Այդ բարձրաւանդակից սկսեցի դիտել թէ քաղաքը և թէ շրջակայքը, որ ներկայացնում է ընդարձակ լեռնային տարածութիւն: Շուշին ինձ յիշեցրեց ծննդավայրս—Սղնախ, ուր անց եմ կացրել մանկութիւնս: Միբուն եմ այդ գեղազրական անկիւնը, բայց ի՞նչ օգուտ. նա՛մարդ սիրահարի նման հեռացել եմ ընդմիշտ: Այս երկու քաղաքները իրանց դիրքով, նեղ ու զառիվայր փողոցներով, անշուք աներով, իրանց փոքրիկ պարտէզներով և վերջապէս անտանելի սալայատակներով ու բազմաթիւ էշերով ապշելու չափ նման են իրար:

Հանգստարանից իջնելիս մի աղբիւրի մօտով անցայ, ուր մի քանի թուրք կանայք ու երեխաներ իրանց աւանակների հետ հետաքրքրական խումբ էին կազմել: Այդտեղ կանգ ա-

ռայ մի ըոպէ ու հետաքրքրուեցի իմանալ, թէ ի՞նչ աղբիւր է դա: Մի բաւական լաւ հագնուած թուրք, որ պատահմամբ բարձրանում էր ձիով, բացատրեց ինձ, որ դա Թամիրեանի աղբիւրն է: Իսկոյն յիշեցի, որ այդ անունով երիտասարդին անցեալ տարի սպանեցին:

— Սպանուածի ի՞նչ...

— Հէնց ինքը սպանուածն է բերել այս աղբիւրը, շտապով պատասխանեց թուրքը, որի հետ հետևեալ օրը ծանօթացայ և իմացայ, որ նրա անունը Սուլէյման-խան է:

— Ինչո՞ւ սպանեցին, յայտ...

— Յայտնի է, ընդհատեց խօսքս,— որովհետև աղբիւրը բերեց:

Այս ասելով գլխարկը շարժեց ու մտրակելով ձիուն սլացաւ:

Միւս օրը ճանապարհուեցի դէպի Գօրիս: Զանգեզուրի գաւառը հետաքրքրում էր ինձ. յոյս ունէի որ և է նոր բան տեսնելու, թարմ նիւթ գտնելու մասնագիտութեանս վերաբերեալ: Նոյն սարերն ու ձորերը, նոյն ժայռերն ու փրփրադէզ գետակները, նոյն թփերն ու անտառները, որ շատ անգամ տեսել էի մեր հրաշալի կովկասի միւս կողմերում, օրինակի համար՝ Գուգարաց աշխարհում:

Գօրիսում իջայ հիւրանոց փոքր ինչ հան-

գըստանալու, որպէսզի միւս առաւօտ կանուխ շարունակեմ ճանապարհս:

Ես ծառայ ուղարկեցի հին ծանօթիս գըտնելու, իսկ հիւրանոցի սպասաւորին յանձնեցի կօշիկներս սրբելու: Անիրաւը տարաւ ու տարաւ: Ուրիշ բան չունէի հագնելու, ուստի ստիպուած մահճակալիս վրայ մնացի ծալապատակ նստած: Շատ բղաւեցի, շատ շարժարեցի էլեքտրական հնչակը, սակայն անօգուտ: Կօշիկներին համար այնքան չէի նեղանալ, եթէ ծարաւ չլինէի:

Վերջապէս վերադարձաւ ծառան ու ազատեց ինձ նեղ գրութիւնիցս: Նա ու հիւրանոցի սպասաւորը իրար հայհոյելով միասին ներս բերին կօշիկներս:

Տրամադրուած էի սարսափելի կերպով բարկանալու այդ աստիճան անուշադրութեան համար:

— Այ տղայ— այսպէս սկսեցի:

— Հն ջան, — եղաւ պատասխանը: Բարկանալու արամազրութիւնս բոլորովին ոչնչացրեց փուճը, որի շիւ աչքերով շեշտակի նայում էր երեսին:

— Ի՞նչ ես հրամայում, սղա:

— Ոչինչ, սամօվար պատրաստիր:

— Աչքիս վրայ:

Փոթորիկը սրանով վերջացաւ:

Հարկաւոր է մի փոքրիկ բան պատմել ու յետոյ շարունակել խօսքս:

Այն օրից, որ ինքս ինձ յիշում եմ, մօտս գտնուում է մի մարդ: Ո՛չ նա է ինձանից հեռանում, ո՛չ ես եմ նրան արձակում, որովհետև մենք չենք կարող այդպիսի բան անել: Նա ինձ համար երբեմն ծառայ է, երբեմն թիկնապահ, երբեմն տան պահապան, իսկ միշտ ճանապարհակիցս: Ես նրան հաւատում եմ ամեն բան, տունս, տեղս, ունեցած-չունեցածս, բայց չեմ հաւատում «խուրդա» փող: Նա այդ բանի թըշնամի է, իսկոյն տանում է գինետուն: Վաղուց նրա անունը դրել եմ Սանխօ-Պանչօ:

Ի հարկէ այս անգամ էլ Սանխօն հետս էր: Խորհրդակցել էինք նրա հետ ու որոշել միւս օրը կանուխ ձի հեծնել ու շարունակել ճանապարհը դէպի Ղափան՝ յատկապէս այցելելու Դայմադղու գիւղը, որի շրջակայքը, ինչպէս լսել էի, շատ գեղազրական է:

Հետեւեալ առաւօտը հիւրանոցի շիւ ծառան մեզ համար վարձել էր մի թամբած ձի և մի փալանած ջորի: Սաքուլը (այսպէս է ծառայիս անունը) յօնքերը կիտած՝ ստիպուած էր ջորի նստել, բայց նստելուց առաջ, առանց խօսք ասելու, մի լաւ ապտակ հասցրեց ջորի վարձողին:

Լեռներով շրջապատուած մի տափարակի վրայ տարածուած Գօրիս գիւղաքաղաքից դուրս եկանք մի թուրք ուղեցոյցի առաջնորդութեամբ: Ինձ հետևում էր Սաքուլը փնթփնթալով ու յիշողներ տալով մերթ ջորիին, մերթ նրա աի-

րոջը: Գիւղի դատարկաշրջիկները կանգնել էին ու նայում մեզ, որոնց համար մենք երևի նորութիւն էինք: Երբ բոլորովին հեռացանք գիւղից և դուրս եկանք քարքարոտ ճանապարհի վրայ, որի մի կողմը ժայռեր էին, իսկ միւս կողմը ծառերով լի ձորեր, և երբ թուրքը թողեց մեզ ու վերադարձաւ, սկսեցի զննել ձիւ: Դա գեղջուկի սովորական լղար ձի էր, ոսկորները դուրս ցցուած ու կաշին տրորուած: Յետոյ աչքերս դարձրի յետ ու տեսայ մի տեսարան, որ միւսնոյն ժամանակ և՛ տխուր էր, և՛ ծիծաղաշարժ: Խեղճ Սաքուլը ոտները լայն տարածել էր փալանի վրայ, թողել էր սանձը ու ձեռքերի վրայ յենուել կռացել էր:

«Ահա իսկ և իսկ Սանխո-Պանչո», մտածեցի ես ու բարձրաձայն ծիծաղեցի:

— Այստեղ ծիծաղելու բան չկայ, — սառն կերպով արտասանեց Սաքուլը:

Արեգակը աստիճանաբար այրում էր երկիրը: Զեփիւռի նշան չկար, երկինքը թափանցիկ կապուտակ էր, որի վրայով չէր սահում ամպի ոչ մի կտոր: Այլ կողմի ապառաժները փոքր առ փոքր բարձրանում էին, իսկ ձախ կողմի ձորը լի բուսականութեամբ և սպիտակին տուող փրփրադէզ գետակով խորանում էր: Այս ու այն սրածայր ժայռեր, որոնք կարծես արհեստական րկեպով տաշուած լինէին: Կեռասի բազմաթիւ

ծառերը, որոնց միմիայն ծայրերի վրայ մնացել էին կարմիր պտուղներ, կողոպտուած մարդկանց սպաւորութիւն էին անում: Մի պարտէզի պարսպի ետեից դուրս վազեց առանց վարտիկի մի երեխայ, նայեց երեսիս, յօնքերը կիտեց ու իր կարմիր շապկի փէշերով աչքերը ծածկեց, մերկացնելով փքուած փորը: Մի սաղաւթախիտ ծառի տակին, որ համարեա ամբողջ ճանապարհն էր բռնել, կանգ առանք մի բոպէ, փոքր ինչ հովանալու համար: Բարձր ձիւղերի միջից մի անհանգիստ կաշաղակ շապով թռաւ, չմոռանալով սպիտակ բիծ դրոշմել սև գլխարկիս վրայ: Մեր մօտով անցան միքանի գիւղացի՝ չափազանց բեռնաւորուած ջորիներով: Համեստութեամբ բարեկուց յետոյ՝ իրար հետ քշփչացին ու որոշեցին, որ մեր ձին ու ջորին փողորատչի Յարութիւնին են պատկանում:

Տհաճութեամբ թողեցինք ծառը և շարունակեցինք ճանապարհը: Գնում էինք վստահ ու աներկիւղ, որովհետև անկարելի էր մոլորուել, բայց երբ հասանք սարի գագաթին, ուր ճանապարհը երկու մասի էր բաժանուում, ընկանք տարակուսանքի մէջ:

Անցորդն անպակաս էր, ուրեմն կարելի էր հարցնել, բայց դժբաղդաբար Դայմադաղուրի մասին կարծես տեղեկութիւն չունէին: Վերջապէս մի կարճահասակ գիւղացի օգնութեան հասաւ:

—Քեասպարի շինած ուսումարանն ես հրցընում։

— Այո։

— Ըարհէնց ասան, էլի։ Այս ասելով մանրա-
կրկիտ կերպով բացատրեց ճանապարհը, որից
սակայն բան չհասկացայ։ Այսքան միայն իմա-
ցայ, որ աջ կողմ պէտք է ծռէինք։

Մեզ շրջապատում էին լեռնային տեսա-
րաններ, որոնք անընդհատ փոփոխւում էին։
Սարեր ու ձորեր, ընդհանրապէս իրար նման,
լեռնադաշտեր և վարելահողեր միմեանց յաջոր-
դելով մէկը միւսի ետեից երևան էին գալիս։
Շուտով մտանք մի մեծ անտառ, ուր մեզ հա-
սաւ մի ձիաւոր, որ, ինչպէս վերջը իմացայ,
գիւղի վաճառական էր և գնում էր պարտքեր
հաւաքելու։ Նա մեզ առաջարկեց հանդիստ առ-
նել փոքրիկ առուակի մօտ և յետոյ միասին շա-
րունակել ճանապարհը։ Թունդ արեից յետոյ,
ծառերի տակին մըսելու չափ հովացայ։ Այդ
մարդը շատախօս էր և հետաքրքիր՝ ուզում էր
միանգամից ամեն բան իմանալ։ Կարծես բաւա-
րարութիւն էի տալիս նրա հարցերին։ Ի միջի
այլոց հարցրեց.

— Լոնդոն շհարը մեծ ա։

— Այո, շատ մեծ է։

— Ի՞նչքան մեծ կը լինի։

— Թիֆլիզ տեսն՞ ես։

— Թիֆլիզ չեմ տեսել, բայց միևնոյն է...

Ղալա տեսել եմ... Շուշի, էլի։

— Երեք հարիւր անգամ Շուշուց մեծ կը
լինի։

— Երեք հարիւր անգամ, անտարբեր կեր-
պով արտասանեց նա ու խօսակցութիւնը փո-
խեց, միքանի անգամ փորձ անելով իմանալ ով
լինելու։

Նստեցինք ձի ու շարունակեցինք ճանա-
պարհը։ Անտառը աստիճանաբար խտանում ու
մեծանում էր։ Վիթխարի ծառերը անագին բու-
ներով բարձրացել էին և կամար կազմել, ծած-
կելով երկնքի կապուտակը։ Սիրտս ճվլուեց։ Ինձ
թուաց թէ արդէն երեկոյ է, որին շուտով կը
յաջորդէ գիշերը։ Մի վայրկեան երևակայեցի
մութ գիշեր այս վայրենի տեղում ու սարսա-
փեցի։

Վաճառականը վախկոտ էր եղել։ Նա տխուր
ձայնով յայտնեց, որ ղաչաղներ կան այս ան-
տառի մէջ։ Աշխատում էր, որքան հնարաւոր է,
ցածր ձայնով խօսել և ընթացքն արագացնել։
Սաքուլը իր ջորիով չէր կարողանում մեզ հե-
տևել, ուստի հայհոյանք էր, որ ուղարկում էր՝
ում հարկն էր։ Երկու ժամաչափ ընթանում էինք
արագաքայլ՝ աւելի և աւելի ընկղմուելով ան-
թափանցելի անտառի մէջ։ Վերջապէս հեռուն,
ուր ճանապարհը ծուռում էր, նմարուեց փայ-
լուն մի շերտ։ Նա մի ազատ շունչ քաշեցի։ Կար-
ծեմ վաճառականը նոյնպէս շատ լաւ զգաց իրան։
Նրա լեզուն նորից բացուեց և ձայնը խրոխտա-

ցաւ: Երբ անտառից դուրս եկանք և երբ մենք իրարից պէտք է բաժանուէինք, նա իր մտրակի կոթով ցոյց տուեց մեր զնալու ճանապարհը: Միմեանց բարի ճանապարհ մաղթելուց յետոյ, նա իր ձիուն մտրակեց, յետոյ դարձաւ զէպի մեզ ու հեզնօրէն արտասանեց.

— Է՛յ, սւտա, Լոնդոն շհարը քանի անգամ մեծ կը լինի Ղալից... հա՛ հա՛ հա՛...

Իսկոյն հասկացայ, որ այդ վաճառականի հարցին՝ իմ ով լինելուս մասին, Սաքուլը ըստ իր հին սովորութեան պատասխանել էր «նազըբար»:

9.

Մի թուրքաբնակ փոքրիկ գիւղում ցոյց տուեցին Դալմազաղուի ճանապարհը. բայց ի՞նչ, Աստուած ճանապարհ համարէ: Քարեր ու փոսեր, զառիվայր ու փշոտ թփեր: Գնում ենք ետևներիցս քարշ տալով խեղճ անասուններին, որոնք տհաճութեամբ փոխում են քայլերնին: Թէ՛ քանի տեղ գլորուեցինք ու ջարդուեցինք, այդ մասին չարժէ խօսել: այսքանը միայն կ'ասեմ, որ մեծ համբերութիւն ունեցող բազմափորձ Սաքուլս մի աւելորդ անգամ էլ իր ջորիի հետ միասին տապալուելուց յետոյ հարցրեց.

— Ո՞վ խորհուրդ տուեց քեզ այս անտէր կողմը ճանապարհորդելու:

Ես անուշը տուի:

— Անաստուած մարդ... Հազար մանէթ, հազար մանէթ, ո՛չ աւել, ո՛չ պակաս:

— Ի՞նչ ես վնթփնթում, տօ, հարցրի ես:

— Ոչինչ, ասում եմ անաստուած մարդ:

Հազար մանէթ խօսք արտասանելով ուզում էր ասել, որ եթէ միւս անդամ կրկին կը համաձայնուի այս կողմերը գալու, այն պայմանով միայն, եթէ կանխիկ կը վճարեն իրան հազար մանէթ:

Հասանք մի ձոր, ուր կանաչազարդ ափերի միջով, քարքարոտ յատակի վրայով վազում էր մի փոքրիկ գետակ: Շաւիղներ շատ կային և մենք չգիտէինք թէ ո՞ր կողմը պէտք է զնալ: Առաջներս բարձրանում էին անտառապատ լեռներ, որոնք մեզ բաժանում էին Դայմադաղուից: Այս բանը մենք գիտէինք, սակայն դա քիչ էր: Արևը թեքուել էր զէպի հորիզոնը և սպառնում էր շուտով ծածկուել սարերի ետև: Բոպէն չափազանց տխուր էր:

Սաքուլը հեծաւ ջորի, շտապով անցաւ գետակի միւս ափը և առանց յետ նայելու արտասանեց.

— Մայրս նրա համար խօ չի մեծացրել ինձ, որ Ղարաբաղում գայլերն ուտեն:

Այս անգամ ստիպուած էի հետևելու նրան: Շաւիղներից մէկն ընտրեց նա և մենք սկսեցինք բարձրանալ խիտ անտառներով պատած լեռան

վրայ: Տաղտկալի բոպէսներ իրար յաջորդեցին՝ ճնշելով մեր սրտերը: Շուրջը տիրում էր լուսթիւն: Արևի ոչ մի ճառագայթ չէր կարողանում թափանցել անտառի մէջ, ուստի տարածուած էր աղջամուզ: Մենք մտրակում էինք խեղճ անասուններին՝ շուտով դուրս գալու դիտաւորութեամբ այս թախծալից ծառաստանից: Վզներս երկարացրած աշխատում էինք նրանցից առաջ անցնել, բայց նրանք քայլում էին բոլորովին անվրդով: Յանկարծ մեր դիմացի կողմից սրընթաց գալիս են երկու թուրք ձիաւորներ: Երբ մօտեցան մեզ, կանգ առան և առաջարկեցին իրանց ծառայութիւնը: Ես շնորհակալութիւն յայտնեցի և բաժանուեցինք իրարից: Իրաժամբ չհարցրի ճանապարհը, այնպէս ձեռքի, իբր թէ այդպիսի բանի կարօտութիւն չունինք:

Ո՞րչափ փափագում էի լուսով հասնել գիւղը:

— Լաւ բան է գէնք ունենալը, ասաց Սաբուլը:

Ես նրան բացատրեցի, որ դա աւելորդ է, որովհետև ոչ մի դէպքում ընդունակ չեմ մարդ սպանելու:

«Իսկ եթէ մութը կոխի և մենք ստիպուած լինինք գիշերելու այս վայրենի անտառի մէջ», մտածեցի ես, բայց բան չասացի Սաբուլին:

Շարունակ բարձրանում էինք այն սարի վրայ, որ մի ժամ առաջ հեռուից տեսնելու միջոցին ձիւլ թամբի նմանեցրինք: Տխուր մտածմունքի

մէջ էի, երբ սարից մի քար գլորուեց և կանգ առաւ մեր առջև մի փոսի մէջ: Դժուար չէր գուշակել մարդու գոյութիւնն այդտեղ: Աչքերս լայն բաց արած նայում էի վայր ընկնող քարի կողմը և մարդ էի որոնում: Ուղղահայեաց ժայռի գագաթին կանգնած էր մի պառաւ այծ: Սատանան գիտէ թէ ինչպէս էր նա բարձրացել այնտեղ: Մի բոպէից յետոյ աչքիս ընկաւ և մի պառաւ մարդ մորթէ ահագին գլխարկով ու սպիտակ մօրուքով: Լաւ գննելուց յետոյ համոզուեցի, որ հայ է, որովհետև գէնք չունէր:

— Ո՞ւր է գնում այս ճանապարհը, հարցրի ես:

— Դուք ի՞նչ մարդիկ էք, որ հարցնում էք ճանապարհը, արտասանեց այնպիսի ձևով, որ կարծես ուզում էր ցոյց տալ իրան քաջ մարդ և այդ լեռների տէր լինելը:

— Ո՞րտեղ է Գասպարի շինած ուսումնարանը:

— Դուք ո՞վ էք, որ հարցնում էք Գասպարի շինած ուսումնարանը:

Ծերունին ինձ գուլարճացրեց: Կանգ առայ մի վայրկեան և սկսեցի հետը խօսել: Նրա կանգնելու ձևը, ձեռքերի շարժումը, խօսելու եղանակը յիշեցնում էին ունևոր թուրք բէգին, բայց նրան պատկանում էր ընդամենը մի այծ:

— Գնում եմ նրանց տունը հիւր. ասա, այս է ճանապարհը:

— Դէ որ եղպէս է, գնացէք դրուստ, ճանապարհը լաւ ա, վախենալու բան չկայ...

Գասպարին լաւ ճանաչում եմ... Սարի գլուխը որ կհասնէք, ձախ կողմը չգնաք, աջ կողմը գնացէք... Մանկութիւնից ճանաչում եմ... Անցեալ տարի մի լաւ ուլաղ բերեց...

Խաւարը կամաց-կամաց աւելանում էր, թաւշի տեսք տալով թարմ բուսականութեան: «Ի՛նչ լաւ կը լինէր, եթէ անտառները և կիրճերը մէջ էլ այնպէս ուշ մթնէր, ինչպէս այդ լինում է դաշտերում», անցաւ մտքովս:

Սաքուլը պատրաստում էր ծերուկին հայհոյելու, բայց ես զսպեցի նրան: Զորին իր փալանով սաստիկ շարձարեւ էր նրան, այն աստիճան, որ երբ իջնում էր, անդամալոյծի էր նմանւում՝ ո՛չ կարողանում էր ման գալ, ո՛չ կրկին բարձրանալ նստել, մանաւանդ որ ասպանդակներ չունէր:

Անասուններին ծեծելու հակառակ եմ, բայց այս անգամ ձիուս սկսեցի մարակել, որպէսզի անտառից շուտով դուրս գայինք: Սաքուլը ոտով էր հեռուում իր ջորիին՝ մերթ ճիպտով հարուածելով, մերթ երկու ձեռքով բռնելով: Ամեն կողմից անմեղ անասունը անտարբեր էր մնում, կարծես իրան չէր վերաբերում:

Երկնքի մէջ դեռ նշմարւում էր լուսաւոր կիսաշրջան, ուր սարերի քամակին արևը մի ժամ առաջ ծածկուել էր: Հողմը ժամանակ-առժամ մանակ վշվշալով անցնում գնում էր, մի-մի դերին տերև խաղացնելով օդի մէջ:

— Ծառերը փոքրանում են, նկատեց Սաքուլը, — անտառը վերջանալու մօտ է:

Նա իբրև հին որսորդ, բնութեան միջանկ կանոններ լաւ գիտէր:

— Ա՛խ, սրտեղ ես, հրացանս, հառաչեց նա... Հնչու, տիրաթաղ, ընթրիքի խօ չես հրաւիրուած այստեղ, որ կանգնում ես:

Վերջապէս հասանք սարի գագաթին, ուր բոլորովին վերջացաւ անտառը:

Դ

Մեր առջև տարածուած էր կրկին լեռնային բնութիւն: Վիթխարի ժայռերը տարբեր ձևի գագաթներով ու մռայլ տեսքով նկարւում էին երկնքի վրայ: Ստորոտները ծածկուել էին խումբ-խումբ անտառներով, վարելահողերով, գիւղերով, որտեղ այս ու այն ձորակում նշմարւում էր կապոյտ ծուխ: Զորի մէջ մի շքեղ անկիւնում նկատուում էր անսովոր շինութիւն, մոյգ կարմիր կտուրով:

— Այդ ի՛նչ ահագին բան է, հարցրեց Սաքուլը:

— Հէնց այնտեղ ենք գնալու, պատասխանեցի ես:

Տարակոյս չկար, որ այդ էր Գասպարի շինած ուսումնարանը:

Անտառից դուրս գալուն պէս ազատ շունչ

քաշեցի: Երևի բանտից ազատուելու միջոցին մարդ նոյն բանն է զգում: Ժայռոտ ճանապարհը, անտանելի պտոյտներով իջնում էր գլխիվայր:

Ես նոյնպէս ստիպուած էի ձիուցս իջնել. անկարելի էր նստած մնալ: Գնում էի ոտներս ջարդելով և ետևիցս քարշ տալիս ձիուս, որ եթէ վարժուած չլինէր, անպատճառ պէտք է գլորուէր դէպի անդունդները:

Երկինքը բաւականաչափ խաւարեց: Փոքրիկ գիւղը, որ հեռու չէր մեզանից, հազիւ հազ էր որոշուում: Այնտեղից արդէն լուում էր գամփռի հաշոց և ծծկեր երեխայի լաց: Այս բոլորը փարատում էր սրտիս վրայ ծածկուած ծանր տպաւորութիւնը: Մենք գնում էինք մարդկանց մօտ:

Գիւղացի Յարութիւնի տանը լաւ ընդունելութիւն գտայ: Կարծես հին ծանօթ և ցանկալի հիւր լինէի նրանց համար:

Իաշտի աշխատանքից նոր վերադարձած աղամարդիկ՝ գլուխները գոյնզգոյն թաշկինակներով կապած, շրջապատեցին ինձ ու սիրալիր կերպով հարցուփորձ արին առողջութեանս մասին: Սկսեցի խօսել, պատմել հազար տեսակ բաներ: Լսում էին մեծ հետաքրքրութեամբ և երբեմն-երբեմն սրամիտ հարցեր առաջարկում: Ի միջի այլոց նրանք ինձանից իմացան, թէ օրական քանի մարդ է մեռնում ամբողջ երկրագնաի վրայ:

Այս բարի մարդիկ մեզ լաւ կերակրելուց յետոյ առաջնորդեցին ինձ դէպի մաքուր սենեակ, ուր հանգիստ պէտք է տայի յոգնած մարմնիս: Բոլորից ջահել մի գիւղացի, որ խօսակցութեան ժամանակ միմիայն լուռ լսում էր, ինձ բարի գիշեր մաղթելու միջոցին ներողութիւն խնդրելով հարցրեց՝ թէ հոգեհան Գաբրիէլ հրեշտակապետը որ մի հատ է, ի՞նչպէս է հասնում ամեն տեղ...

Իայմադաղու գիւղի գեղեցիկ շրջակայքը դիտելուց յետոյ այցելեցի ուսումնարանը, որ մի ընդարձակ ու լուսաւոր շինութիւն է: Յետոյ հիւրընկալներէս մնաս բարով ասելով ճանապարհորդեցինք դէպի Տաթևի վանքը:

Լղար ձիս կրկին սկսեց ծոյլ-ծոյլ քայլել և կրկին Սանխօ-Պանչօս իր ջորիի վրայ ոտները լայն տարածած հետևում էր ինձ: Սկզբում ճանապարհը տանելի էր, բայց երբ հասանք լեռների զագաթներին, ուր հսկայական ժայռերը, ահռելի անդունդներն ու կուսական անտառները խառնուում էին իրար, արդէն նախընթաց օրւայ տեսածներս բոլորովին մոռացայ: Պատահում էր այնպիսի տեղեր, ուր ժայռոտ շաւիղն այնպէս էր խցուած ապառաժների ու անդունդների մէջ, որ ձիս մի հրաշքով կարողանում էր քայլերը փոխել: Եթէ պատահմամբ դիմացի կողմից որևէ ձիաւորի հանդիպէի՝ մեզանից մէկը անպատճառ պէտք է անդունդն ընկնէր: Այդպիսի դէպքե-

րում նախազգուշացնում էի Սաքուլին և նա իջնում էր շորիկից, հակառակ պարագայում կորուստի պէտք է մասնակցէր: Նրանք ձիւս իր նիսար բեռի հետ մի կերպ ժայռերին քսուելով անցնում գնում էր, բայց հաստ փալանով շորիկ համար, որի բեռը աւելի հաստացնում էր իրան՝ շաւիղը, խիստ նեղ էր:

Դարձեալ մեր առջև բացուեց երկու ճանապարհ և մենք կանգ առանք: Ո՞վ դիտէ նրանցից ո՞րն է Տաթևինը: Մեր բաղձից երևացին երկու շորի, որոնց հետևում էին երկու գեղջուկ: Նրանք մեզ անչափ ուրախացրին: Նրանք նոյն պէս գնում էին Տաթևի կողմը: Մոռացել եմ նրանց գիւղի անունը, վանքից հեռու չէ: Այդ գեղջուկներից մէկը կենսուրախ ու խօսել սիրող մարդ էր: Նա ինձ համարեա իր ամբողջ կենսագրութիւնը պատմեց: Նրա անունը Միմէօն Ջհանգիրեան էր: Ունէր երկու եղբայր Բագու, որոնք լաւ սողերք են և միշտ փող են զրկում իրան. ուրախութեամբ լսում էի իրան, որովհետև ձայնը անկեղծ էր և խօսքը շիտակ: Ո՞րքան նա խնդրեց ինձ, աղաչեց, համոզեց, որպէսզի հիւր գնամ իրան. երգուեց, որ ինձ համար ոչ մի ծախս չէ անելու, որ ամեն բան տանը ունի՝ հաւ, ձու, իւղ, պանիր: Յաւեցի, որ անկարող եմ կատարել իրա այդ ցանկութիւնը:

Նա ինձ շատ բաներ պատմեց և շատ բան էլ իմացաւ ինձանից: Այսպէս խօսելով մօտե-

ցանք Տաթևին: Նրա ընկերը, որ շարունակ լուռ էր, յանկարծ խօսեց.

— Թիֆլիզում երկու անգամ եղել եմ, Խօկը ճանաչես, աղա, դուրգար Ստեփանին, կամուրջի կշտին:

Միտքը շահելու համար դրական պատասխան տուի:

— Դա իմ կնքահայրն է, ինքնաբաւականութեամբ արտասանեց նա և ոտի ուժգին հարուածով քար զլորեց անդունդը:

Տաթևի վանքը շրջապատուած պարսպով ահագին ժայռի գլխին բաղմած դիտում էր հեռուն: Հռչակաւոր շարժուող սիւնը պարզ երևում էր և ես իսկոյն ճանաչեցի, որովհետև տեսել էի նկարների մէջ: Այլևս երկիւղ չկար ճանապարհը խառնելու և մենք միմեանց մտաթելով ամեն տեսակ բարիք՝ բաժանուեցինք:

Միքանի տասնեակ քայլ հեռանալուց յետոյ կրկին լսեցի գեղջուկի սրտալի ձայնը. «Ինչ լաւ կը լինէր, եթէ գայիք մեզ մօտ»:

Շուքը և քրտինքը նեղում էր մեզ և մենք փափագում էինք հանգիստ առնել սենեակի մէջ:

Վանքում մարդ չկար: Միաբանները քարտուղարի հետ միասին կալ էին գնացել: Յաշորը բացակայ էր: Անշնորք ծառան, որ ծառայել չգիտէր, տուեց մեզ մի սենեակ: Բայց ո՞ր վանքում կայ շնորհալի ծառայ:

Շարժուող սիւնը ինձ հիասթափեցրեց: Հնար

չկար տեսնելու շարժուելու ձևը: Այն պատրշ-
գամբը, որտեղից մարդիկ ձեռքով հասնում էին
սիւնի կատարին, այլևս չկար: Ինչպէս տե-
ղեկացայ. ոչնչացրել էին, որպէսզի սիւնին փաս
չհասնէր յաճախակի շարժուելուց:

Ինչնցու է արդեօք այդ, եթէ հեռու տե-
ղից եկած այցելուներ ստիպուած պէտք է լի-
նին լոկ դիտելով բաւականանալ. չէ՞ որ ճարտա-
րապետական սչ մի արժանիք չունի արտաքինի
կողմից: Խոստովանում եմ, ես գնացել էի այդ-
տեղ գլխաւորապէս պատմական սիւնը տեսնե-
լու և համոզուելու, որ իսկապէս շարժուում է
այդ վիթխարի գանգուածը: Արդեօք դա չէ՞ նշա-
նակում «վառած մոմը թաքախի տակ թաղցնել»:

Բարկութիւնս եկաւ և որովհետև դիմացս
միմիայն ծառան էր, անտեղի հայհոյանքները
նրա գլխին թափեցի:

Մյն ապուշն էլ այնպէս ընդունեց, կարծես
մեղաւորը ինքը լինէր:

Վրայ հասաւ և քարտուղարը: Նրա հետ էլ
սկսեցի կոպիտ-կոպիտ խօսել: Քաղաքավարու-
թիւնը բոլորովին անհետացել էր իմ մէջ: Նա
երևի շատ փորձառու մարդ է: Այն ձևով պա-
տասխանեց և բացատրութիւն տուեց, որ ան-
միջապէս մեղմացայ: Նա ինձ հաւատացրեց, որ
բացի սիւնից վանքում կայ նաև ուրիշ հետա-
քըրքրական բաներ:

Եւ իրաւ միւս առաւօտ կանուխ ցոյց տուեց

ինձ ամեն բան, ինչ որ նշանաւոր էր: Վերջը
առաջնորդարանը դիտելուց յետոյ դուրս եկանք
փոքրիկ պատշգամբը, ուր ոտս կոխելուն պէս
շունչս դադարեց: Ինձ պատեց այնպիսի զգաց-
մունք, կարծես երկնքի մէջ կախուած լինէի:
Ինչ հրաշալի տեսարան էր: Բնութիւնը շատ
եմ տեսել և շատ հիացել, բայց տեսածներս
մէջ սա մի ապօթէօզ էր: Նայում էի յափշտա-
կուած և չէի կշտանում:

Պատշգամբի տակ բացուել էր մի մեծ ան-
դունդ, ուր փրփրադէզ գետակը սրընթաց վա-
զում էր: Մի տեղ թագնուում էր, միւս տեղ
դուրս ցայտում, մերթ գարնուում էր քարերին ու
դուրս ցայտում, մերթ գլխիվայր գլորում ու շփո-
թութիւն գցում: Այլ կողմից անգին ապառաժ-
ներ, ձախ կողմից անուրի լեռներ՝ ծածկուած
հարուստ բուսականութեամբ, ձգում էին ըն-
դարձակ տարածութեան վրայ: Աւելի հեռու կա-
պոյտին տուող լեռները տարբեր գազաթներով
յաջորդաբար շարուած էին իրար ետևից: Նրանց
քամակին դարձեալ նշմարում էին ինչ որ բար-
ձրութիւններ, փաթաթուած օդային շղարշով,
այնպէս, որ անկարելի էր գուշակել մերկ ապա-
ռաժներ են, թէ ստուերախիտ ծառաստաններ:
Եթէ զօռ տաս աչքերիդ և համբերութիւն ունե-
նաս, այս անհուն տարածութեան վերջին կորոշեն
կատարեալ թափանցիկ մի շերտ, որ իսկապէս
դարձեալ բարձրութիւններ են: Այս անեզր տա-
7

րածութիւնը, որ Տաթևի փէշերից սկսուած է և յայտնի չէ թէ որտեղ է վերջանում, այնպիսի տպաւորութիւն է անում մարդու վրայ, որ դիտողը կաշկանդուած է, սիրտը լցւում է թուշունի ազատութեան սիրով և բուռն ցանկութիւն է գալիս երգելու:

Արևի լոյսը և ամպերից ընկած ստուերներն իրար յաջորդելով սահում են ձորի ելևէջների վրայ: Մի գոյգ աղաւնի՝ լոյսի մէջ սևին տալով, իսկ շուաքի մէջ սպիտակին, անհաստատ ուղղութեամբ թողնում անցնում են: Եղանակը գով է և հանդիստ: Ոորին լուծիւն պէտք է տիրէր ամեն տեղ, եթէ ձորի խորքերից խուլ աղմուկներ չտարածէր փոքրիկ, բայց անհանգիստ գետակը:

Փառահեղ վանքը իր համաչափ կազմուածքով կանգնած է հաստատուն ժայռերի գլխին և իր շուրջն է դիտում:

Ինչ լաւ կըլինէր եթէ մարդ երբէք չզրկուէր կեանքից լոկ բնութեան հրաշալիքները դիտելու համար:

1904, Թիֆլիզ

ՍՈՒԼԷՅՄԱՆ-ԻԱՆ ՇԵՔԻՆԱԿԻ

Շուշի քաղաքում, մի հիւրանոցում, որի անունը չեմ յիշում, ամբողջ օրը սպասելուց յետոյ, վերջապէս երեկոյեան, արևը մայր մանելու միջոցին, սպասաւորը յայտնեց ինձ, որ կառքը պատրաստ է:

— Գնա, քո հէրն էլ անիծած, — փնթփնթաց Սաքուլը *), — քաղաքներ շատ եմ տեսել, բայց Շուշու պէս թարս քաղաք տեսած չեմ:

— Վեր կաց, կապիր պայուսակը, — ընդհատեցի նրա խօսքը:

— Սղնախեցիք խօ ղուրումնաղներ են, — դանդաղութեամբ վեր կենալով շարունակեց նա, — բայց շուշեցիք ղուրումնաղների ղուրումնաղներն են եղել:

— Շտապիր, ապա թէ ոչ կուշանանք:

— Ոտներս շարդեցի այս անտէր փողոցներում: Ափսոս չէ՞ Գանձակը:

— Պինդ կապիր փոքրիկ պայուսակը:

— Գժեբ են եղել այստեղացիք, — իրերը կար-

*) Անբաժան ուղեկիցս, որ այլևս գոյութիւն չունի:

գի բերելով շարունակում էր խօսել Սաքուլը. — Թէ Շուշի է, էլ Ղալա սրն է, Թէ Ղալա է, էլ Շուշի սրն է:

Նրա դժգոհ լինելու իսկական պատճառն այն էր, որ պօստի կայարանում ձի չկար, և մենք ստիպուած էինք առաւօտեան փոխարէն երեկոյեան ճանապարհուելու: Քաղաքն ու բնակիչներին պախարակելուց յետոյ, անցաւ նրանց կերակուրներին, հացին, պանրին:

— Ես սապոն կարծեցի, — շարունակեց քթի տակ խօսել Սաքուլը, ասացին պանիր է... Լսեցի՞ր, ինչպէս էր զանգահարում ժամկոչը, էն սարսաղը:

Այդ միջոցին դուռը բացուեց և ներս մտաւ թուխ ղէմքով հասալիկ մի տղամարդ, որ իրան անուանեց Սուլէյման-խան Շեքինսկի: Իրար հետ ծանօթանալուց յետոյ պարզուեց, որ նա էլ մեզ նման մտաղիւր է Գօրիս գնալ:

— Մենք պօստի կայարաններ ունենք լոկ այն բանի համար, որ երբ հարկաւոր լինի մի տեղ գնալ, ձի չձարուի, — ժպտալով խօսեց նա.

— Եկել եմ ձեզանից խնդրելու, որպէսզի ինձ էլ ձեզ հետ տանէք Գօրիս:

Յայտնեցի իրան, որ ուրախ եմ: Նա ինձ վրայ լաւ տպաւորութիւն գործեց: Պարզ երեւում էր, որ խելօք և համեստ մարդ էր:

— Բաւական վարժ էք խօսում ոռուսերէն, — նկատեցի ես:

— Գիմնագիտյի մինչև հինգերորդ դասարանը հասայ, ասաց նա և ցաւ յայտնեց չաւարտելուն համար:

Արդէն քիչ մուլթն էր, երբ մեր կառքը դժուարութեամբ բարձրանալով հասաւ քաղաքի ամենաբարձր կէտին, ուր շինութիւնները վերջանում են և ուր մի աղբիւրի մօտ բաղմաթիւ թուրք կանայք էին հաւաքուել: Սուլէյման-խանը իմ ուշադրութիւնը դարձրեց այդ աղբիւրի վրայ:

— Դա ինչ բան է, — հարցրի ես:

— Թամիրեանի աղբիւրն է:

— Որին անցեալ տարի սպանեցին:

— Այո:

— Ինչո՞ւ սպանեցին:

— Որովհետև աղբիւր անցկացրեց, — հեգնօրէն պատասխանեց նա:

Խաւարը փոքր առ փոքր թանձրանում էր, բայց մեր բաղդից երկինքը բոլորովին պարզ էր: Արդէն հեռացել էինք քաղաքից մի քանի վերստ, երբ մի տեղ Սուլէյման-խանը կառապանին բռնեց իմ հրամայեց կանգ առնել:

— Տեսնո՞ւմ էք այս մեծ քարը, — դիմեց նա ինձ, — դա առաջ շատ մեծ էր, վերջերումս կոտրեցին, ոչնչացրին, Թամիրեանին սպանելուց յետոյ: Չարագործը նրա քամակին էր եղել թագատոյ: Չարագործը նրա քամակին էր եղել թագատոյ և երբ հանգուցեալը իր ընկեր մի հայ նուած և երբ հանգուցեալը իր ընկեր մի հայ նուած և երբ հանգուցեալը իր ընկեր մի հայ ուսուցչի հետ միասին հասել էր այստեղ: Գնա-

լիս էին եղել հէնց այն գիւղը. տեսնում էք, ձորում երկու տեղ ճրագի լոյս է երևում... Երբ հասել էին այստեղ, նամարդը արձակել էր հրացանը, և խեղճ տղան վայրկենաբար գլորուել էր ձիուց: Գնդակը գիպել էր այստեղ և դուրս էր եկել այստեղից:

Չեռքը դրեց իր ձախ կողքի և աջ ուսի վրայ:

Մի ընդհանուր լուրջ յետոյ աւելացրեց.

— Եթէ ես այստեղ լինէի, հիմի նա կենդան կը լինէր: Այդ միջոցին գիւղումն էի: Հանգուցեալը անդադար գրում էր ինձ, որպէսզի գործերս թողնեմ ու գամ Շուշի...

— Ուրեմն մօտիկ յարաբերութիւն ունէիք իրար հետ:

— Մեծ մտերմութիւն կար մեր մէջ: Նա Բագուից եկել էր հանգստանալու համար, իսկ ես բացակայ էի... Գրում էր ինձ. «Ե՛կ շուտով, Սուլէյման, տխուր եմ առանց քեզ: Ի՞նչքան պէտք է գողանան ծառայողներդ, եթէ հեռանաս այդտեղից. երկու հարիւր ըւրլի. ինձնից ստացիր այդ գումարը»... Օ՛, ի՞նչ տղայ էր:

— Ծանօթ էի, պատասխանեցի ես:

— Եթէ ես երկու օր չուշանայի, անշուշտ ես էլ հետ կըլինէի այդ գիւղը գնալու միջոցին, և ես երաշխաւոր եմ, որ ոչ ոք չէր համարձակուի նրան սպանելու:

— Կողոպտելու նպատակով սպանեցին:

— Ո՛չ... է՛հ, չարժէ խօսել... Ուրիշ հաշիւներ կային...

Մի քանի մանրամասնութիւններ հաղորդելուց և սպանուածի մասին ամենանպաստաւոր կարծիք յայտնելուց յետոյ նկարագրեց նրա թաղման հանդէսը:

Խօսում էր գրաւիչ լեզուով: Յիշեցնում էր արևելցի աշուղներին:

— Արցունքներս չէի կարողանում գսպել, — շարունակեց նա, — սիրտս պատառում էր, տեսնելով նրան դագաղի մէջ առողջ, կայտառ դէմքով... Նրա կինը, եթէ տեսել էք իրան...

— Ճանաչում եմ:

— Ձահէյ, գեղեցիկ... Յանկարծ դիմեց ինձ. «Լալ և արցունք թափելն իմ բանն է, քո բանը չէ. քո բանը վրէժ լուծելն է»... Է՛, վերջապէս... Հասաւ վերջին ընդհանրացումը, դուրս բերէին տանից: Կինը կարգադրեց այնպէս, որ բազմութիւնը դուրս եկաւ սենեակից, մնացինք երեք հոգի, եթէ ներքի է այսպէս ասել ես, կինը և հանգուցեալը: «Երգուիր, — դիմեց ինձ այրին, — այս դագաղի վրայ, որ վրէժը կըլուծես»: Երգուեցի...

Ճանապարհից դուրս, ազօտ կերպով երևացին մարդկանց և անասունների սիւլուէտներ, որոնք հանգիստ քայլերով ընթանում էին նեղ շաւղով: Սուլէյման-խանը հրամայեց կառավարին կանգ առնել:

—Ի՞նչ մարդիկ էք,—խիստ ձայնով դիմեց նա ճանապարհորդներին:

Նրանք ինչ-որ գիւղի անուն տուեցին:

—Ուրեմն ինձ ճանաճում էք... Ասացէ՛ք՝ ո՞վ եմ ես:

—Սուլէյման-խանը, — միաձայն արտասանեցին նրանք:

Մեր կառքը շարժուեց տեղից: Ճանապարհակիրցս, որ շարունակեց խօսքը, մեծ հետաքրքրութիւն շարժեց իմ մէջ: Ի միջի այլոց հաղորդեց նա, որ մեզ շրջապատող ահագին տարածութեամբ սարերն ու ձորերը, անտառներն ու հովիտները իր սեփականութիւնն են կազմում:

—Ահա այնտեղ ձորի մէջ, — ի միջի այլոց, իմ ուշադրութիւնը դարձրեց նա, — գտնուում է հիանալի հանքային ջուր: Թուրքերէն անուանում են Թաուշ-սու, հայերէն՝ Թթու ջուր:

Վերջը խօսք բացուեց քաղաքական հարցերի մասին: Ինձ թուաց, որ նրա հայեացքը առողջ է, ուղղութիւնը մարդասիրական:

—Մենք իրար հետ հաշտ պէտք է լինենք, — աւարտեց նա իր խօսքը, երբ հասել էինք մի կայարան, — այդ են պահանջում մեր ընդհանուր շահերը:

1904 թւականի յուլիս ամիսն էր, ուրեմն ո՛չ նա, ո՛չ ես չէինք կարող գուշակել հայ-թուրքական այն վայրենի ու անմիտ ընդհարումը, որ շուտով տեղի պէտք է ունենար:

կայարանում մի փոքր հանգստացանք և ընթրեցինք: Սուլէյման-խանը, իմանալով որ մտադիր եմ Տաթև գնալու, սկսեց նկարագրել թէ՛ վաճառը և թէ՛ նրա շրջակայքը:

—Ո՞վ է այժմ այնտեղի վանահայրը, — հարցրեցի ես:

—Նիկալայը, — լսուեց դռան ետևից մի յիմար ձայն:

Իսկոյն ներս մտաւ մի ջահէլ տղայ, համարեա պատանի, որ ըստ երևոյթին կայարանի ծառայողներից էր:

—Ներսէս վարդապետ, — պատասխանեց Սուլէյման-խանը, — ներողամիտ հայեացք գցելով պատանու վրայ:

—Ի՞նչ ես դուրս տալիս, սա՛րսաղ, — դիմեց պատանուն Սաքուլը:

—Տաթևի վանահօր անունը Նիկալայ է, — վստահ կերպով պատասխանեց նա:

Սաքուլը երկու ձեռքով բամփեց նրա գըլխին դրած մեծ փափախին և վռնտեց սենեակից:

—Ղարաբաղցի ախմախ, հայ վարդապետի անունը Նիկալայ:

—Աստուած է վկայ, Նիկալայ է, — զրսից լսուեց ձայնը, — նա իմ ազգականն է:

Նրան հետևեց հայոյանք Սաքուլի կողմից: Մենք ականջնիս սրեցինք: Պատանին պատասխանեց այնպիսի մազալու հայոյանքով, որ ծի-

ծաղերուց թուլացանք: Վերջը լսուեց տուրու-
ղմբոց, կրկին հայհոյանք, յիշոցներ...

— Էլի չէ կոտորում լակոտը, — ներս մտնե-
լով արտասանեց Սաքուլը. — ասում է Նիկալայ:

Հասանք Գորիս. Սուլէյման-խանը ցաւ-
յայտնեց, որ անկարող է ինձ հետ միասին Տա-
թև գնալ, բայց խորհուրդ տուեց մի քանի հե-
տաքրքրական բաների վրայ առանձին ուշադրու-
թիւն դարձնել:

— Առաջնորդարանը, — ասաց նա, — ունի
փոքրիկ պատշգամբ. կանգնեցէք այնտեղ և դի-
տեցէք: Ինք կրտեսնէք այնպիսի պանօրամա,
որ կատարելապէս կըհիանաք: Կրտեսնէք այնտե-
ղից այնպիսի անդունդ, որ կըզարհուրէք:

Մնաս բարևի ժամանակ յայտնեց ինձ, որ
Թիֆլիզ է գալու, և խոստացաւ այցելել արհես-
տանոցս, այդ ճանապարհորդութեան արդիւնքը
տեսնելու համար:

Նրա այդ ցանկութիւնը չկատարուեց: Ես
իրան տեսայ առաջին և վերջին անգամ:

Ափսոս, լաւ մարդ էր *):

1906, Թիֆլիզ

ԻՇԽԱՆ ՎԱԶՆԱԶԷԻ ԱԳԱՐԱԿՈՒՄ

Մանկութեան ընկերիս հետ միասին որսի
էինք զնացել: Ամբողջ օրը, լուսադէմից մինչև
երեկոյեան աղջամուղջը թափառելուց յետոյ
ստիպուած էինք հանդստութեան մասին մտա-
ծել: Այլազանի դաշտավայրը, այդ ընդարձակ տա-
փարակը այն աստիճան յոգնեցրել էր մեզ, որ
հազիւ էինք քայլ փոխում: Առաւօտուայ մեր
ուրախ ըրպէները տխրութեան էին փոխուել,
որովհետև հրացաններից գատ բան չկար ձեռք-
ներիս: Ով չգիտէ, որ մեծ է սրսորդի զայրոյթը,
եթէ անաջող է անցկացրել օրը: Մեր «Շպիօնը»,
այդ աշխոյժ կենդանին նոյնպէս տրամել էր, ու
ականջները կախ տւած յամրաքայլ հետևում
էր մեզ: Որոշել էինք գիշերել կալուածատէր իշ-
խան Շաքրօ Վաչնաձէի ազարակում և հետևեալ
օրը կրկին մեր բաղդը փորձել: Ամօթ էինք հա-
մարում որսից գատարկաձեռն տուն վերադառ-
նալը: Շաքրօ Վաչնաձէի հետ մենք ծանօթու-
թիւն չունէինք, նոյնիսկ մեր գոյութեան մա-
սին նա տեղեկութիւն էլ չունէր, սակայն մենք
համարձակ գնում էինք նրա մօտ: Գնում էինք
համարձակ ոչ թէ այն պատճառով, որ կախե-

*) Խառնակութեան տարին սպանուեց:

Թուժ որսորդի համար ամեն տեղ դուռը բաց է, այլ որովհետև նրա ազգական Սօսիկօ Վաչնաձէն յանձնարարական էր տւել մեզ:

— Ի՞նչ ասե՞նք մեր հիւրընկալին, խօսեց ընկերս, — երբ նա հարց տայ թէ ո՞ւր է մեր որսը:

— Շատ միամիտ ես, Բնգրատ, — պատասխանեցի ես, — նա ինքը հարիւր անգամ ունեցած կըլինի այսպիսի դէպքեր:

Կիսախաւարը տարածուեց երկրի երեսին: Կովկասեան լեռնաշղթան հսկայական սիլուէտի կերպարանք ընդունեց գունատ երկնքի վրայ: Անթիւ ճահիճները այս ու այն տեղ իրանց մէջն էին անդրադարձնում երկնակամարը: Գորտերն ու ծղրիդները ուղղակի ձանձրոյթ էին պատճառում: Իսկ հեռուն ճրագները մէկը միւսի ետեւից կարմիր կէտերով դուրս էին ցայտում մութ ֆօնի միջից: Ագարակը, ուր մենք դիմում էինք, աստիճանաբար մեծանում, ընդարձակւում էր: Բարդինները շարուած էին ամբողջ պարսպի երկարութեամբ, որի միջից կարողանում էինք նշմարել մեծ դուռը: Երկու շինականի վէճն ու գամբոի կատաղի հաջոցը փոքր առ փոքր լսելի էր դառնում, իսկ շուտով սկսեցինք որոշել նաև բառերը:

Երբ մօտեցանք դռներին ու բարձրաձայն արտասանեցինք մեր «բարի երեկոն», երկուսն էլ միասին լռեցին ու անվրդով ձայնով պատասխանեցին մեր բարեկին: Շունը շարունակում էր

հաջալ, միայն փոխել էր եղանակը: Եւ գուցէ այդ էր պատճառը, որ դուրս վազեցին ուրիշ շներ ևս և կողք կողքի կանգնած այնպիսի ձեւով էին հաջում մեզ վրայ, կարծես ուզում էին ասել՝ «դուք ո՞վ էք որ եկել էք»: Երկայնահասակ դռնապանը մի-մի քացի հասցնելով նրանց, հասկացրեց, որ ցանկալի հիւրեր էինք մենք: Իսկ մեր հարցին թէ իշխանը տանն է, նա մեզ դրական պատասխան տալով առաջնորդեց դէպի բնակարանը: Կալի մօտով անցնելիս տեսանք մի խումբ մարդիկ, որոնք օրուայ աշխատանքից յետոյ նստել էին գետնի վրայ և լսում էին փանդուրա (նախնական ձևի սազ) ածող ընկերին: Նրանք վերկացան, գլխաբկները հանեցին ու կրկին նստեցին: Ոտաբորիկ մի կին մաղը ձեռին դուրս եկաւ գոմի միջից ու անէծք թափեց փոքրիկ աղջկայ գլխին, որ նրա փէշից բռնել էր ու բաց չէր թողնում: Մեր առաջնորդը թողեց մեզ ու վազ տուաւ իշխանի բնակարանի կողմը: Դա մի յարկանի բաւական երկայն մի հին տուն էր մաշուած պատշգամբով, ուր նստած էր իշխանը և նախատում էր մէկին: Նա մօտ երեսուն տարեկան, գեղեցիկ ու առողջ մարդ էր՝ թուխ դէմքով ու սև մազերով: Բարակ բեխերը կարճ մօրուքի հետ սազում էր նրա կլոր երեսին: Երբ մենք բոլորովին մօտեցանք, ընդհատեց խօսակցութիւնը, շտապով վառեց հանգած ծխախոտն ու պատշգամբից ցած գալով դիմաւոր

րեց մեզ: Շտապեցինք յայտնելու իրան, որ Սօսիկօսի յանձնարարականով էինք եկել:

— Սօսիկօն ո՞վ է — զայրացած բացականչեց նա. — նա ո՞ւմ շունն է, որ ինձ մօտ մարդիկ է զրկում... Անիծած խենթը... Սօսիկօ... նա ո՞վ է, նա ի՞նչ մարդ է, որ յանձնարարական է տալիս... Հէրն անիծած...

— Մենք մնացինք շուարուած: Եթէ հնար լինէր, գետնի տակ կանցնէինք, որպէսզի ազատուէինք այդ անտանելի զրութիւնից:

— Սօսիկօ... Անիծած խենթը... Յանձնարարական... Ո՞վ է նրան մարդու տեղ դնում...

Մենք լուռ ու արձանացած կանգնել էինք:

— Միխա, — հանգիստ ձայնով զիմեց մեր առաջնորդողին, — զնա սամօվար գցիր: Սօսիկօ... Փուշ կենդանին, նորից փոխեց ձայնը. — լաւ մարդիկ, ինչո՞ւ չէք նստում, զիմեց մեզ այնպիսի ձևով, որ կարծես հաճելի հիւրեր լինէինք. — յոգնած չէք, ինչ է... Սօսիկօ... յիմարը:

Ուրիշ ճանապարհ չկար, պէտք է նստէինք, բայց պապանձուել էինք:

— Երևի որսի էք եղել. երբ իջաք Սղնախից, այսօր:

— Այո, այսօր առաւօտեան:

— Լաւ շուն է, շատ եմ հաւանում այսպիսի գոյնը... Սօսիկօ... Տխմարը, քուռակը... Միխա, արա սամօվարը շտապեցրո՞ւ: Լաւ ընթրիք պատրաստիր, չամաչացնես ինձ. անկիւնի կա-

րասը բաց արա... Սօսիկօ... Բնսոտ շունը...

Մենք մի փոքր ազատ շունչ քաշեցինք:

— Սուղեբնի պրիստաւի գրազիր... «շուաքի աշողլան»... Սօսիկօ... Գիտէ՞ք ինչ կարողութիւն վատնեց. այգիներ, վարելահողեր, անտառներ: Հայ չկայ Սղնախում, որին պարտք չլինի... Սօսիկօ... հացկատակը... Ձեզ պարտ չէ. անպատճառ պարտ կըլինի:

Իշխան Շաքրօն չէր սխալոււմ. Սօսիկօն մի տարի առաջ ինձանից 2 ուլբլի էր վերցրել ու դեռ չէր վերադարձրել:

— Սօսիկօ... մի վեղբանոց տիճորը... փո՛ւ:

Վերջի նկատողութիւնը որ մեզ ծիծաղեցրեց, բաւական սրամիտ էր: Սօսիկօն չափազանց կարճահասակ ու հաստիկ մի երիտասարդ էր:

Թէյ խմելուց յետոյ անմիջապէս սենեակում սեղանը պատրաստեցին: Այնքան հաց դարսեցին, որ տաս մարդու բաւական կըլինէր. կերակուր ու գինին նոյնպէս չափազանց առատ էր: Օղիի բաժակները իրար զարկելով իշխանը արտասանեց՝ «Ատոժուն փառք, խաղաղութիւն ձեզ» ընդունւած բառերը և սկսեցինք ընթրել: Պարզեց, որ մեր հիւրընկալը մի բարեսիրտ և զուարճախօս մարդ էր: Ստիպում էր մեզ, որ ուտենք ու խմենք, առարկելով, որ որսորդների ախորժակը զայլի ախորժակից պակաս չպէտք է լինի: Հանաքներ ու անեկդօտներ թափում էր իրար ետևից, սա-

կայն Սօսիկօյի հասցէին հայհոյանքներ ուղարկելուց իսկի չէր դադարում:

— Է՛յ, հարսւճաղէք, յանկարծ լսուեց մի խռպոտ ձայն, — դուք որ քէՖ էք անում, ես չեմ ուզում:

Ներս մտաւ մի բարձրահասակ կայտառ ծերունի՝ արծաթեայ քամարով ու խանչալով, մըտրակը ձեռքին, վզին մի մետաքսէ գոյնզգոյն թաշկինակ: Սև փափախը շատ սագում էր սպիտակ բեխերին ու կարմիր թշերին:

— Բարով, ջահէլներ. ա՛ շանտղէք, առանց Բիճիայի սեղան էք նստել, հա՛:

Բիճիան, ինչպէս յետոյ իմացանք, Շաքրօի հօրեղբայրն էր: Նստելուն պէս օղիի բաժակը դատարկեց, մի կտոր հաց կերաւ ու դարձաւ մեզ:

— Ջահէլներ, տեսնում եմ՝ սղնախեցի էք. ես էլ այնտեղից եմ գալիս, դատարանում գործ ունէի: Ո՛ւմ տղէքն էք, ես բոլորին ճանաչում եմ:

Մենք պատասխանեցինք:

— Օհօ, իմ լաւ «համփսօնների» տղէքն էք եղել. դէ, խմեցէք, ի՞նչ էք բերանաբաց նստել, անշնորքներ: Չէյզիզի, Ջաքար, դու էլ ունէիր լաւ ժամանակ: Երբ նա Թէհրանից վերադարձաւ, ասում էին, որ մի ֆուրգոն լիքը մարգարիտ ու փիրուզ է բերել. իսկ հիմա ի՞նչ ունի: Ճշմարիտն ասած՝ զինի խմելու մէջ շատ է խեղճ, բայց նրա պէս փլաւ ուտող մարդ չկայ ամբողջ

կախէթում: Ահա այսպէս՝ ամբողջ պնակը ափի մէջ է հաւաքում զզլբաշի հանգի:

Հօրս գովաբանելուց յետոյ միքանի բաժակ զինի խմեց, մեզ էլ ստիպեց նոյնը կրկնել և ապա շարունակեց.

— Բայց Գասպարը, ճօ՛, դաւի չունեմ, երբեւեռի խմող է. նրա հետ կարող է գալ միմիայն Գուլբասթը: Լաւ էլ կանչում է *):

— Բիճա, — խօսեց Շաքրօն հեգնօրէն, — մենք Սօսիկօին ենք պարտական, որ այս պատուական երիտասարդները մեզ հիւր են: Չէրն անիծեմ ես նրա:

— Ի՞նչ կայ, երբեմն աղբն էլ պէտքական է լինում:

Մեզ համար անախորժ այդ հարց ու պատասխանից յետոյ կրկին սկսուեց զուարճալի խօսակցութիւնը: Ես ու Բագրատը համարեա լուռ էինք, «այո՛» և «ո՛չ»-ից հեռու չէինք գնում:

— Սօսիկօի հայրը, Աստուած հոգին լուսաւորի, դու էլ լսած կըլինես, Շաքրօ, տարօրինակ մարդ էր. այսօր առատաձեռն էր, վաղը լուի կաշի քերթող: Մեռաւ, ի՞նչ տարաւ հետը: Նրա որդին հինգ-վեց տարւայ ընթացքում քամուն տուաւ անագին կարողութիւնը: Իսկի չեմ մոռանայ. մի անգամ հանգուցեալը Գոմարթօրի օրը խնջոյք սարքեց զուռնով: Խօ ճանաչում էք

*) Երգում է:

Սարգսին, հրաշալի ածող է. նրա «սահարին» ինչ ուզում ես արժէ: Սարգիսը դուզուկ էր փչում, իսկ Բեժանը (Սօսիկօի հայրը) կողքին նստած ոգևորում էր նրան ասելով՝ «մի մեծ տիկ կարմիր գինի քեզ փէշքաշ», «մի գլուխ պանիր քեզ հալալ», կայն, կայն: Խեղճ զուռնաչին այնպէս էշխի էր գալիս, որ ուզում էր դուզուկը ծամել-ուտել:

— Գիտեմ, — ընդամիջեց Շաքրօն, — լսել եմ, շատ մազալու է:

— Սպասիր վերջացնեմ: Հետևեալ օրը, երբ Սարգիսը մնաս բարով ասելու ժամանակ, յիշեցրեց փէշքաշների մասին, Բեժանը պատասխանեց.

«Աձեցիր, ինձ դուր եկաւ, էլ ի՞նչ ես ուզում»:

Մենք սրտանց ծիծաղեցինք:

— Լաւ է, չէ՞, տղէք, արտասանեց Շաքրօն:

Բիձիայի քէֆը աւելի բացուեց: Պատմում էր զուարճալի արկածներ իր երիտասարդական կեանքից, սրախօսում էր յաջող, երգում էր միմի կտոր «Ընձու մորթուց»: Ի միջի այլոց ծաղրում էր հոգևորականութեանը՝ ծիծաղաշարժ անեկզօտներով:

— Տղէք, դուք ուսման մէջ էք, ամեն բան ինձանից լաւ գիտէք. Շաքրօն էլ մի ժամանակ սովորում էր Թիֆլիզի գիմնազիօնում, սա էլ ձեզ նման ուսեալ է: Թէ ինչո՞ւ չաւարտեց, թո՞ղ ինքը պատմի:

Առաջ եկան Շաքրօի յիշողութիւնները գիմ-

նազիական կեանքից. բանից դուրս եկաւ, որ դերեկտօրի ծեծողների մէջ նա համարեա առաջնակարգ դեր էր խաղացել ու վռնդուել էր:

— Բիձիան կարծում է, որ ես երևելի գիտնական եմ, ծիծաղելով ասաց Շաքրօն, — նօմե-նատիուս, դատիուս... կիտարուգ. զիմիս... հա՛, հա՛, հա՛:

Միխան ներս բերեց շամփուրներով խորոված: Բիձիան ստիպեց նրան, որ ամբողջ շիշ գինին միանգամից դատարկի: Վերջացնելուն պէս շտապով վազ տուաւ դուրս, կարծես երկիւղից որ շտիպեն իրան նոյնը կրկնելու:

— Գուք էլ խօ այն ջահէլներից չէք, գիմեց մեզ Բիձիան, — որոնք սկսել են երկպառակութիւն գցել հայի և վրացու մէջ: Գժուէլ են ղուրումնաղներն, ինչ է: Սյդ է՞ ձեր ուսումը. այ, խոսով անիծածներ, ամբողջ դարեր միասին ապրել ենք, ինչպէս մէկ ընտանիքի գաւաղներ, մեր ուրախութիւնն ու տխրութիւնն ընդհանուր է եղել: Միմեանց ճանաչում ենք, ազգակիցներ եք, աղջիկ ենք առնում, աղջիկ ենք տալիս, ո՞ր ենք, աղջիկ ենք առնում, աղջիկ ենք, երկու մէկն ասեմ: Մենք հինգ եղբայր ենք, երկու քոյր, մեզ բոլորիս՝ բացի ինձանից, հայերն են կնքել: Հանգուցեալ մայրս միշտ ասում էր ինձ. «դու հայի ձեռքով չես կնքուել, նրա համար էլ «դու հայի ձեռքով չես կնքուել»: Աւելի լաւն ասեմ. երբ մեզանից մէկը փող էր համարում և մայրս նկա-

տում էր այդ, իսկոյն պատուիրում էր հայերէն համարել՝ մէկ, երկու, երեք, չորս: Ասում էր՝ հայերէն պէտք է համարէք, որ ըարաքաթ ունենայ»:

—Այդ երկպառակութիւնները ու թշնամութիւնները սերմանողների պարագլուխը քաղաքային ուսումնարանի տեսուչն է, նկատեց Շաքրօն:

—Մատաղ լինեմ քեզ, տղայ, բացականչեց Բիձիան համբուրելով իր եղբօրորդու ճակատը. —այդպէս է, մեր տուն քանդողները մեր միջից են դուրս գալիս: Մեծացնում ենք, կրթում ենք, ուղարկում ենք հեռու երկիրներ, բան չենք խնայում նրանց համար որ վերադառնան ու մեր տգէտ ամբօր փոքր ինչլուսաւորեն. իսկ նրանք փոխանակ սէր, միութիւն, համերաշխութիւն քարոզելու, հաւատացնում են միամիտ ժողովրդիս, որ իրանց աղքատ լինելու պատճառը հայերն են: Ես խօ բանից ընխաքար մի մարդ եմ, վրացերէն գրել կարդալուց զատ բան չգիտեմ, բայց միշտ ասել եմ և ասում եմ, որ մենք մի օրինաւոր ուշունց տուող մարդ չունենք մեր՝ աթաղան-ըարաղան ժառանգած արատների համար, որոնք քայքայում են մեր ազնուականութիւնը: Դէ, մի-մի բաժակ էլ կոնծենք:

Խմելուց յետոյ սկսեց երգել Ալ. Ճավճավաձէի մի հեղինակութիւնը:

—Ձեզ եմ հարցնում, — շարունակեց Բիձիան, — ո՞վ է մեղաւոր, որ իշխան Աբխազին իր ան-

համար ու անծայր հարստութիւնը թղթախաղի մէջ տանուլ տուաւ ու վերջը ցամաք հացի կարօտ մնաց:

—Ո՞վ է մեղաւոր, ընդմիջեց Շաքրօն, որ ընթխէր Սօսիկօն երեք տարի առաջ իր մնացորդները բոլոր միասին ծախեց չորս հազար մանէթով Թօփալ կարապետին...

—Ապրես, տղայ, ես պէտք է ասէի, — նկատեց Բիձիան:

—Եւ ինչո՞ւ համար: Խօ յիշում էք Թիֆլիզի տօնախմբութիւնը: Մեր ազնուականները իրանց ունեցած-չունեցածը կամ գրաւ դրին կամ չնչին վնով ծախծխեցին, ի հարկէ մեծ մասամբ հայերին, լոկ միքանի օր Թիֆլիզում փայլելու համար:

—Դու էլ, դու էլ, հարամգաղա, — գլուխը ժաժ տալով շեշտեց Բիձիան:

—Ես ի՞նչ: Ճշմարիտ է, ես էլ սարսաղութիւն արի, բայց սահմանից դուրս չեկայ, ինձ նստեց ընդամենը...

— Հազար հինգ հարիւր:

—Ձէ, մօրս չթաղեմ: Ընդամենը հազար հարիւր ուրբի: Գիտէ՞ք Սօսիկօն ինչ արաւ:

Մենք պատասխանեցինք որ լսել ենք:

—Ո՞չ, դուք բոլորը չգիտէք: Նրա սպիտակ կօշիկները նստեց հարիւր յիսուն մանէթ, այդքան էլ գլխարկը: Ամենաթանկազին թաւիշէ քուլաշան էլ չեմ յիշում սրբան էր նստել: «Լօն-

դօն» հիւրանոցում երկու սենեակ էր վարձել, օրական տասնուհինգ մանէթով. մէկի մէջ ինքն էր բազմել, միւսը յատկացրել էր ծառաներին: Երեք հոգի սպասաւոր տարաւ հետը, և ինչպէս զարգարել էր նրանց: Ամենաշքեղ Փաէտօնը գիշեր-ցերեկ կանգնած էր դռանը. «Որ մէկն ասեմ: Ի՞նչ էք կարծում. վերջը տուն վերադարձաւ պարտքերով:

— Աորդ է—ասաց Բիձիան,—անա այդպէս վատնեց ամեն ինչ և վերջը հարկադրուած էր ամիսը տաան և հինգ մանէթով գրազրուեթիւն անելու: Իշխան Վաչնաձէն՝ պրիստաւի գրագիր. փնւ, քու նամուսին: Է՛հ, ջհանամը նրա գլուխը լցրէք բաժակները, աղէք:

Կրկին խմելուց և «Մրավալ ժամիէր» երգելուց յետոյ Շաքրօն ծիծաղելով գիմեց հօրեղբօրը:

— Է՛հէյ, Բիձիա, մոռացել ես, հն, շահէլութիւնդ, նոյնիսկ մօտիկ անցեալդ:

— Չայնդ կտրի, շանտղայ, ինձ հետ ես համեմատում լաճիրակ Սօսիկօի՞ն: Էն փոխարքան որ եկաւ Սղնախ, իմ արած ծախսերը անխուսափելի էր: Իբրև ազնուականութեան պարագլուխ և իբրև տօլումբաշ՝ ես պէտք է փայլէի, իսկ փայլը թանգ է նստում:

— Լօթիանա դրո՛ւտ ասա:

— Կորիւր այստեղից, լսկոտ, թող բոլոր ազնուականները ինձ նման հաշուով ապրեն: Դեռ

այնքան մնացել է, որ որդիքս էլ ապահով կարող են լինել: Ասածս այն է, որ թշնամութիւն ու խորթութիւն գցել վրացիների և հայերի մէջ ոճրագործութիւն է: Հաւատացէք այս ճերմակ մազերիս, որ վատ հետևանք կ'ունենայ երկու ազգութիւնների համար էլ հաւասար: Ես ծերացել եմ, շուտով մեռնելու եմ. իսկ դուք, Աստուած երկար կեանք տայ, դեռ կապրէք: Ես էլ շատ սխալ եմ գործել, շահէլութիւն եմ արել, շատ բան եմ կորցրել, բայց և անգին փորձառութիւն եմ ձեռք բերել: Լսեցէք ինձ: Կար ժամանակ երբ ես էլ վրաստանի անցեալ փառքով էի ապրում ու հպարտանում, այն ինչ անողոք ներկան անտես էի անում: Մի օր որդուս վարժապետը... գերմանական ծագումից էր, մեռաւ, Աստուած հոգին լուսաւորէ...

Այդ ասելով, բաժակը լցրեց, նրանից մի կաթիլ կաթացրեց հացի վրայ ու խմեց: Մենք էլ կրկնեցինք նոյնը:

— Աստուած հոգին լուսաւորէ: Բաց էի արել յիշողութիւնների տուրակս ու դուրս էի թափում ինչ ասէք. Թամար թագուհին, Դիմիտրի-Թավազեբուլի, Դաւիթ-Սղմաշենբեկի: Ռուս-թաւելի, ձղօնդիդի, Օրբելի, Լայլն, Լայլն: Հանգուցեալը լսեց, լսեց ու վերջը արտասանեց. «Ձեր հաւերի միսը նրանից է անհամ, որ ջուր չեն խմում. ինչո՞ւ չէք հրամայում ծառաներին,

որ մի ամանով ջուր դնեն հաւանոցում և ամեն օր նորոգեն»։ Նա ինձ սարսափելի կոտորեց, բայց այդ նկատողութիւնը շատ բան սովորեցրեց ինձ։ Մեզ հարկաւոր է մտածել միմիայն ներկայի և ապագայի մասին, իսկ ինչ վերաբերում է անցեալին, դա հարկաւոր է զիտենալ իբրև պատմութիւն։

— Դու, Բիճիա, խօսքդ շատ երկարացրիր, — նկատեց Շաքրօն, — իսկ մեր պատուական հիւրերի քունը տանում է։ Սրանք քեզանից լաւ գիտեն ամեն բան։ Դու եթէ կարող ես, գինի խմել սովորեցրու սրանց։ Տեսնում ես, գանջեցի նորահարսների նման լուռ նստել են։

Մենք շարժուեցինք, աշխատելով ցոյց տալ, որ ծերունու խօսակցութիւնը հետաքրքրական է մեզ համար։

— Սրանք որ գիտեն, հա՛րամազաղա, սիրալիր բարկութեամբ գողաց Բիճիան, — դու էլ պէտք է սովորես, ես քեզ համար եմ խօսում։ Դէ, մի-մի բաժակ էլ կոնծենք։

Մենք բաժակները վերցրինք, իսկ ծերուկը մեծ գաւաթը կլկլացրեց ու կարմիր գինով ներկած բեխերը սրբելուց յետոյ երգեց։

— Ինչ լաւ կըլինէր, իշխան, ասացի, ես, — եթէ բոլոր վրացիք ձեզ նման առողջ դատէին։

— Ապա ի՞նչ, ոգևորւած արտասանեց Բիճիան. ես պնդում եմ, որ մեր գլխաւոր ցաւը

նրանումն է, որ մենք լաւ հայհոյողներ չունենք, մեր պակասութիւնները լաւ նախատողներ։ Անհոգութիւն, ծուլութիւն, շառլութիւն և սէր դէպի արտաքին փայլը՝ մեր անբաժան ընկերներն են։

— Մենք էլ մեղաւոր չենք — արտասանեց Շաքրօն, հանգամանքներն են մեղաւոր, որ մենք սովոր չենք լուրջ աշխատանքի։

— Բանն էլ այդ է, շանտոյայ, որ մեզանում չկայ ուշուց տուող։ Ով ձեռքին գրիչ ունի ու բերանում լեզու, մէկ գլուխ գովաբանում է մեզ։ Ես բոլորովին չեմ մեղադրում հայերին. — մի կողմ աշխատանք, միւս կողմ ծուլութիւն. մի կողմ խնայողութիւն, միւս կողմ շառլութիւն. մի կողմ հաշիւ, միւս կողմ անտարբերութիւն։ Բոլոր գաղտնիքն այս է, ուրիշ բան չկայ։

— Գրագիր Սօսիկօն, աւելացրեց Շաքրօն, — գիշեր-ցերեկ հայհոյում է թօփալ կարապետին, թէ ինչո՞ւ գնեց իրա կալուածները...

Գլուխս թմրել էր խմելուց ու բունս տանում էր, աչքերս ուժով էի աշխատում բաց պահել։ Ընկերս միևնոյն դրութեան մէջ էր, բայց ամաչում էինք բան ասելու։

Հիւրընկալը, որ առանձին հոգս էր տանում մեզ զուարճացնելու, վերջապէս զգաց որ ձանձրացել ենք։

— Իսկոյն, պարոններ, իսկոյն։

Ու բարձր ձայնով կանչեց Միխայիլն.

երբ քնաթաթախ ծառան ներս մտաւ, Շաք-

րօն հրամայեց արևը ծագելուն պէս գառը մորթել և ձիերը պատրաստել: Մենք հասկանալով նրա միտքը, բողոքեցինք, առարկելով, որ մեզ տանը սպասում են և անպատճառ պէտք է զնանք: Նա վճռական ձևով յայտնեց, որ վաղը մեր ճաշը Ալազանի ափին, կամուրջի մօտ, Սուսո-շվիլի դուքանում պէտք է լինի:

— Լօքօ և խորոված՝ ուրիշ բան չենք ունենալու. հէրը կ'անիծեմ, ով կրճառակի: Մարդ կրդրկեմ Սղնախ ձերոնց յայտնելու՝ որ դուք ինձ մօտ սաղսալամնթ հիւր էք և ձեզ բաց կրթողնեմ երբ քէֆս կրտայ:

— Ե՛կ ճակատիցդ համբուրեմ, լակոտ, ուրախ-ուրախ բացականչեց ծերուկը, — թէ իսկական իշխան Վաչնաձէ ես, այնպէս պէտք է շինես այս Սղնախեցի տղերանց որ տանըցիք չճանաչեն:

Այս ասելով «Սաղվելածմինդօ» խմեցրեց ամենքիս ու վերկացանք սեղանից: Մեզ տարան առանձին սենեակ, ուր պատրաստել էին մաքուր անկողին: Այնտեղից դեռ լսում էինք Բիձիայի մի սիրային երգի ձայնը:

— Այրուի քեզ այրողը, Բիձիա, — դրսից լսուեց Շաքրօի ձայնը:

— Աստուած է վկայ, հազար թուման կրտայի, եթէ վերագարձնէին ինձ երեսուն տարեկան հասակս:

1906, Թիֆլիզ

Ա Ր Օ

Ո՛րքան գուարճալի բան է ոտով ճանապարհորդել լուսնկայ գիշերներին ամառ ժամանակ: Սաքուլը, անբաժան ուղեկիցս, նոյնպէս սիրահար էր այս տեսակ բաների:

Սովորաբար միտք էի յղանում ես, այս կամ այն կողմ գնալու, յայտնում էի անմիջապէս իրան և իսկոյն լսում էր նրա բերանից՝ ի՛նք: Հագնում էինք հին շորներս, վերցնում էինք փոքրիկ պայուսակը լի անհրաժեշտ իրերով, մի հրացան և մի ատրճանակ: Ճանապարհուում էինք արևը մայր մտնելուց յետոյ և առանց հանգիստ առնելու համրաքայլ ընթանում էինք մինչև արշալոյսի երևալը:

Մեր վերջին ճանապարհորդութիւնից մէկն էր, որի մասին պէտք է խօսեմ: Ասում եմ վերջին, որովհետև այլևս կրկնուելու չէ, էլ երբէք, երբէք փորձելու չեմ այն հրաշալի, բանաստեղծական բապէները, որ դեռ հազիւ մի տարի առաջ սովորական էր ինձ համար: Ինչո՞ւ: Որովհետև առանց Սաքուլի անկարելի է: Մօտ երեսուն տարի իրար հետ էինք և վերջերս, ընդամենը երկու ամիս առաջ, ամեն բան վերջա-

ցաւ: Ո՛չ նա էր ցանկանում ինձանից հեռանալ
 ո՛չ ես էի մտադիր նրանից հրաժարուելու, սա-
 կայն... նա վախճանուեց:

Բոլորակ լուսինը նոր էր բարձրացել հորի-
 զոնից՝ իր շուրջը տարածելով կարմիր շողերը,
 երբ մենք բաւականաչափ հեռացել էինք քաղա-
 քից և զնում էինք դաշտի միջով դէպի Մարտ-
 ղօփի սարերը:

Եղանակը խաղաղ էր և ես ենթադրում էի,
 որ գիշերը կանցկենայ յաջող:

Սաքուլը, որ որսորդ էր և լաւ հրացանա-
 ձիգ, պատմում էր հետաքրքրական արկածներ
 իր պատանեկական կեանքից՝ մեծ հաճոյք պատ-
 ճառելով ինձ: Նա այդպիսի դէպքերում այնպէս
 ոգևորուել գիտէր, որ նրա պատմութիւնը հէ-
 քեաթի ձև էր ստանում: Երբ ի միջի այլոց հար-
 կաւորուեց իրան նկարագրել գայլերի սովորու-
 թիւնը, յանկարծ կանգ առաւ և իմ ուշադրու-
 թիւնը հրաւիրեց դէպի մի ամպ, որ փոքր առ-
 փոքր մեծանում, տարածւում էր երկնքի վրայ:
 Ես իրանից առաջ էի նկատել այդ բանը և շա-
 րունակ հետևում էի ո՛չ առանց երկիւղի: Մենք
 իրար խօսք չասելով, մեքենայաբար արագացրինք
 մեր քայլերը: Հեռաւորութեան մէջ երևում էին
 ճրագներ, որոնք մի տեսակ յոյս և ուրախութիւն
 էին մեզ ներշնչում: Ուղեկիցս ընդհատեց խօսքը,
 որովհետև շնչառութիւնն արագացաւ և քրտինք

սկսեց հոսել ճակատից. նոյն վիճակի մէջ էի և
 ես, սակայն լուում էինք այդ մասին:

Երկինքը խաւարեց, երկիրն էլ հետը, մի-
 քանի անգամ ամպը գոռաց և սկսեց անձրևել:
 Սիրտս տխրեց:

Ծանր զգացմունք է պատում մարդուն այդ-
 պիսի բոպէներին: Անյոյս և անօգնական է ի-
 րան զգում կայծակի առաջ: Անրձևը աստի-
 ճանարար շատանալով փոշոտ ճանապարհը ան-
 տանելի ցեխի փոխեց:

Վարած հողերը սև շերտերով տարածուած
 էին աջ ու ձախ: Ո՛չ մի ծառ, ո՛չ մի թուփ չէր
 նշմարւում շուրջը: Գիւղի ճրագները, որ ծած-
 կուել էին առժամանակ, նորից երևան եկան,
 մխիթարութիւն ուղարկելով մեզ: Մեր լու-
 շոցը, որը Սաքուլը ուղղեց մի անձանօթ տէր-
 տէրի հասցէին, որին մենք հանդիպել էինք քա-
 ղաքից դուրս գալու միջոցին: Թրջուած, յոգ-
 նած ու քրտնած վերջապէս մօտեցանք գիւղին
 և մտանք ճանապարհին մօտ գտնուող պանդոկը:

Լուսացաւ այնպիսի տխուր առաւօտ, որի
 նմանը չեմ յիշում կեանքումս:

Թանձր մառախուղը պատել էր շուրջներս և
 ամեն ինչ ծածկել մեր աչքից, մինչև անգամ
 տասը քայլի վրայ մարդ չէր ճանաչւում: Պան-
 դոկի դուռը փակ էր, որովհետև ցուրտ էր, իսկ

երբ բացուում էր, ներս էր հոսում գոլորշիի ձե-
 ւով սառ մշուշը: Մի հովիւ իր ոչխարներով՝ ամ-
 բողջովին ցեխոտուած ապաստանել էին պանդո-
 կի առջև ծածկոցի տակ: Ես մի պատառոտած
 ետփնջի գտայ, որի մէջ փաթաթուած կուշ ե-
 կայ մի անկիւնում ու թէյ խմելով աշխատում
 էի տաքանալ: Սաքուլը մտերմացել էր դուքան-
 չու հետ. նրանք ծալապատիկ նստել էին թախ-
 տի վրայ ու թուղթ խաղում: Երբեմն իրար աչ-
 քով էին անում իմ նկատմամբ ու ի սրտէ ծի-
 ծաղում: Ես այդ զգում էի, սակայն բարկու-
 թիւնս չէր գալիս, թէև չափից դուրս տրամել էր
 սիրտս: Չկար ոչ գիրք, ոչ լրագիր, որ գոնէ
 կարդալով մեռցնէի ժամանակը: Պատերի վրայ
 գտայ ածուխով գրած վրացերէն անգրագէտ
 կերպով միքանի այնպիսի խայտառակ բովան-
 դակութեամբ նախադասութիւններ, որից ոչ թէ
 միմիայն էս կարմրեցի, այլ կրկարմրէր ամեն մի
 մօցիբուլ անգամ: Վերջապէս յիշեցի միքանի
 ֆիզիքական օրէնքներ և դիմեցի խորամանկու-
 թեան: Դատարկ տակառներն ու արկղները դար-
 սելով միմեանց վրայ, բարձրացրի մինչև առաս-
 տաղը, ուր տեղաւորուեցի ինքս՝ հաւատացած
 լինելով, որ օդը այնտեղ անհամեմատ տաք կըլի-
 նի: Թէև հիասթափուեցի. ոչինչ գանազանու-
 թիւն չգգացի, բայց և այնպէս մնացի այնտեղ
 պարզած՝ գլուխս կպցրած առաստաղին:

Դուքանչին մի բոպէ դուրս վազեց, ուր

անմիջապէս բարձրացաւ սրտալի ծիծաղ: Կար-
 ծեմ, փուշ-կենդանիները ինձ վրայ էին ծիծա-
 դում, որովհետև Սաքուլն էլ ձայնակցեց նրանց՝
 առանց տեղից շարժուելու: Մեր հիւրընկալը վե-
 րադարձաւ բոլորովին լուրջ դէմքով, նստեց իր
 տեղն ու, նայելով իմ կողմը, արտասանեց՝ «ճ-
 դա, հիմա մի լաւ տաք-տաք հարիսա չէիր ուտի՞»:
 — Ի՞նչպէս չէ, ուրախանալով պատասխանե-
 ցի ես, արա հրտեղ է, բեր:

— չէ՛նց էնպէս, ասում եմ, էլի:

Եթէ այդ միջոցին ձեռքիս քար լինէր, ուղ-
 զակի գլխին կըտայի: Նա երևի չգիտէր, որ զայ-
 րացած մարդու հետ կատակ անելը երկիւղալի է:
 Յանկարծ ոտի մի ուժգին հարուածով դուռը
 բացուեց:

Ներս մտաւ մի առողջակազմ երիտասարդ
 և արտասանելով «բարի լոյս», հանեց իր վրա-
 յից թաց ետփնջին ու ձգելով թախտի վրայ ա-
 լելացրեց՝ «լցրու մի բաժակ օղի»: Յետոյ, նկա-
 տելով Սաքուլին բացականչեց՝ «տօ, անտէր-
 մունդրեկ Սլինդրիօ *), խօ չէ՞ս գժուել, ինչ ես
 շինում այստեղ: Ես նրա երևալուն պէս երեսս
 դարձրի հակառակ կողմը, որպէսզի չճանաչի ինձ:
 — Իսկ նա ո՞վ է, կրկին խօսեց նորեկը, —
 որ խեղճ մարդու հաւի պէս կուշ է եկել քեան-
 դարում:

*) Սաքուլի աւելորդ անունը:

Անշուշտ հարցը իմ մասին էր:

—Տօ, Գէօրգը՝ խօ չէ՛, այս անգամ ցածր ձայնով հարցրեց Սաքուլին:

Ստիպուած էի նայել նրա կողմը:

Նրա ուլ լինելը շատ լաւ գիտէի, սակայն ոչ մի դէպքում չէի ցանկանայ հանդիպել իրան: Նա յայտնի Արօն էր:

Եթէ Թիֆլիզում երբեկիցէ խոշոր գողութիւն կատարուել է և հետքը միանգամայն կորել, եթէ հարուստ խանութի առաստաղ է ծակուել ու թանկագին ապրանք յափշտակուել, կամ անմատչելի դրամարկղ կոտորուել, առանց Արօի գլխաւոր մասնակցութեան չի եղել: Այդ յայտնի էր ամենքին, մանաւանդ ոստիկանութեանը, բայց փաստ չկար, ոչ-ոք չէր կարող ապացուցանել:

—Ո՞նց ես, Գէօրգ ջան, — ծիծաղելով դիմեց ինձ, — երևում է քեֆդ շատ լաւ է... ինչո՞ւ ես կպել օճորքին ճանձի նման, մըսում ես, հա՛: Յած արի, ես քեզ տաքացնեմ... ինչի նման ես, այդ ի՞նչ բանի մէջ ես փաթաթուել:

Վերջի խօսքերը արտասանելիս բարձրաձայն ծիծաղեց: Ի հարկէ իջայ և բարեկեցի իրան: Նա՛՝ ձեռքիցս ամուր բռնելով, դիմեց պանդոկապանին:

—Գիտե՞ս, Գիժօ, հազար տարի որ այստեղ դուրան պահես, սրա նման դժնաղ չես ճարի:

—Բաս չգիտեմ, շտապով պատասխանեց Գիժօն, խիստ դարդիմանդ տղայ է:

Սաքուլը փոթկացրեց, իսկ Արօն մտրակի հարուած տալով պանդոկապանին արտասանեց՝ «ահա քեզ դարդիմանդ»:

—Արօ ջան, հոգուդ մեռնեմ, էլ չեմ ասի, աղաղակելով դուրս վազեց, Գիժօն:

Արօի հարցին թէ ի՞նչ եմ մտադիր անելու, պատասխանեցի, որ վճռել եմ վերադառնալ Թիֆլիզ, եթէ սայլ կամ նրա նման մի բան ճարուի:

—Ոչ, կտրական ձևով արտասանեց նա, — մենք միասին կերթանք Ղվթէէբա: Մի անգամ որ որոշել ես գնալ, պէտք է գնաս, եղանակը քեզ չպէտք է խանգարի:

Շատ խօսեցինք, շատ վիճեցինք, բայց անողորք էր Արօն: Նա ինձ ուժով նստեցրեց իր ձիու վրայ, ետինջով ծածկեց մէջքս ու հարուածելով ձիուն ասաց՝ «մտրակը հարկաւոր չէ քեզ»: Նժոյզը, մի որոշ տարածութիւն վազելուց յետոյ, աստիճանաբար քայլերը հանդարտացրեց: Նայեցի յետ և տեսայ ինչպէս Արօն ու Սաքուլը փէշները հաւաքած անտանելի նոսր ցեխի միջով քայլում էին: Մտախուզը կամաց-կամաց չքանում էր: Շուտով երևացին լեռների գագաթները, որոնց վրայ արեգակն ու ստուերը խաղում էին: Մեզմ քամին հալածելով քշում էր մշուշը: Հողագործները իրանց գութաններով ու անասուններով խումբ-խումբ ցրուած էին լեռնազառի մէջ ու իրանց գործը տեսնում: Պանաղաշաի մէջ ու իրանց գործը տեսնում: Պատանիների ու տղամարդկանց երգի ձայնը, ճի-

պտաների հարուածները հետ միախառնուելով, կենդանութիւն էին տարածում ընութեան մէջ: Մի տեղ, ճանապարհից ոչ-հեռու, մեծ խարոյկ էր վառած, որի շուրջը կանգնած էին մերկ մարդիկ ու իրանց շորերն էին ցամաքացնում: Նրանց միջից դուրս վազեց մի երեխայ, բոլորովին տկո՛ր ու զիմելով ինձ բարձրաձայն խօսեց՝ «գու որ ձիու վրայ ես բաղմել, բաս սրանք մեղքը չե՞ն, որ ոտով են հեռուում քեզ ցեխերի մէջ»:

—Ճշմարիտ ես ասում, պատասխանեցի ես, — ապրես:

—Որ այդպէս է, փող պէտք է բախշես:

Խօսք չունէի, ստիպուած էի կատարելու նրա պահանջը: Ինձ թուաց, որ ուղեկիցներս հետաքրքրական խօսակցութիւն ունեն և այս պատճառով ձիս կանգնեցրի մասնակից լինելու համար:

—Գողացածի նման քողցր բան չկայ աշխարհիս երեսին, — շարունակեց Արօն, — ամեն բանից կը հրաժարուեմ, բայց այս օրհնեալ արհեստից երբէք: Հալալ աշխատանքով ու շարձարանքով ձեռք բերած փողով անկարելի է «լօթիանա» քէֆ անել:

—Ո՞վ սովորեցրեց քեզ, ինչից սկսեցիր այդ արհեստը, — հարցրի ես: — Չարմանալի բան է, ձեր ահագին ընտանիքում, նոյնիսկ ձեր ազգականութեան մէջ այդպիսի բան չկայ:

—Չարմանալու բան չկայ այստեղ: Ինչո՞ւ քո արհեստից Աստուած ոչ մէկին՝ ձեր ազգականութիւնից չի տուել: Շնորհալի մարդիկ մի-մի հատ են ծնուում: Հարցնում ես, ինչից սկսեցի: Առաջին անգամ, մանկութեանս հասակում մի աման մուրաբա գողացայ մեր հարևանների նկուղից: — Սօլօն էլ ճարպիկ գող է, — նկատեց Սա-

քուլը:

—Ո՞վ, կանգ տանելով ու նրա ետևից բռնելով խստութեամբ խօսեց Արօն, — ո՞վ, Սօլօն. նա գող է, հրձ, նա ջիբգիր է. ի՞նչ նրա բանն է գողութիւնը: Նա ջիբգիր է... լայեալ կանեմ նրա հետ խօսելու:

—Ի՞նչ գրեմ, — կոտորուելով պատասխանեց Սաքուլը, — իր ասելով «համփսօններ» էք:

—էէ, — վրդովուած ձայն արձակեց Արօն, հինգ մատը միասին խօսակցի ճակատին բռնելով, — դու խելքի ես, ես նրա համփսօն... Երեսիս թքիք, եթէ այդ մորտարին արտաքնոցի մէջ չխեղդեմ, այդ խօսքի համար:

Տիրեց լուռութիւն: Արևի ճառագայթները ամպերի պատուածքի միջով տարածուեցին ամբողջ դաշտի վրայ՝ տաքութիւն ու լոյս սփռելով ամեն տեղ:

—Դուք կարծում էք, — շարունակեց Արօն, — որ ամեն մի սրիկայ գող է, կամ ամեն մի գող սրիկայ է: Իսկական գող երկու հօգի չի գտնուել թիֆլիզում: Խելք է հարկաւոր, ընդունակու-

թիւն է հարկաւոր, հանաք-մասխարութիւն հօ չէ:

— Ի հարկէ մարդ չես սպանել երբէք, նկատեցի ես:

— Աստուած մի արասցէ, մարդասպանութիւնը էշութիւն է, աւագակութիւն է: Դու դարձեալ չես հասկանում Մաքուլի նման, որ աւագակի և իսկական գողի մէջ սարեր ու ձորեր կան: Ուզում ես մի երկու ամիս մօտ կաց գիշեր-ցերեկ, ես քեզ սիրահարացնեմ արհեստիս վրայ:

Այս ասելով իր շուրջը նայեց ու առաջարկեց Մաքուլին կարճ շաւղով գնալ. ինձ պատուիրելուց յետոյ, որ ես մեծ ճանապարհով ընթանամ թողեցին ինձ ու ցեխերի միջով ծռեցին աջ կողմը ու շուտով անհետացան թփերի ետև: Մնալով միայնակ նախ և առաջ զգացի, որ քաղցած եմ, բայց ի՞նչ կարող էի անել, ստիպուած էի համբերել մինչև տեղ հասնելը: Չգիտէի քանի վերստ է մնացել մինչև Ավթէէբա և այս հանգամանքը նեղում էր ինձ: Բախտի բերմամբ գիւղացիների հանդիպեցի, որոնք մի-մի դազանակ ձեռքներին բարձրաձայն վիճելով գալիս էին դէպի ինձ: Երբ իրար մօտեցանք, նրանք լռեցին ու բարևելուց յետոյ սկսեցին ձիս տնօրել:

— Քանի վերստ է մնացել մինչև Ավթէէբա, — հարցրի ես:

— Երկու վերստ հազիւ կըլինի, — պատասխանեց մէկը:

— Մի վերստ ու կէսից աւելի չի լինի, — աւելացրեց միւրը:

— Ի՞նչ տեղ է գտնուում Ավթէէբա:

— Տեսնում ես այն սպիտակ ամպը, որ անպոչ հորթի է նման, հէնց նրա տակն է:

Ուրեմն քառորդ ժամից պէտք է հասնէի տեղ: Չարմանալի բան է, երբէք գիւղացին ձիշտ չի ասում, երբ հարցնում ես մնացած ճանապարհի տարածութեան մասին: Միշտ երկու, երեք անգամ պակաս է ասում: Ինչո՞ւ է այսպէս, չգիտեմ: Նոյնը կրկնուեց ներկայ դէպքում: Մի ժամ ու կիսից յետոյ հազիւ հասայ:

Ավթէէբա վանքի կողքին դուքանի առջև դրուած էր սեղան սպիտակ սփռոցով ծածկուած ու վրան ամաններ դարսած: Չիս քայլերը արագացնելով, ինքնակամ մօտեցաւ ռուքանին ու կանգ առնելով ականջները սրեց և աջ ու ձախ կողմ նայեց: Ահագին դամփուր, որ պառկած էր այնտեղ, ծուլութեամբ վերկացաւ ու միքանի քայլ հեռանալով կրկին պառկեց: ռուքանի միջից դուրս եկաւ Արօն փուռը ձեռքին, որ կազմած էր վայրի ծաղիկներից. օգնեց ինձ ձիուց իջնելու և առանց խօսք ասելու յանձնեց ինձ փուռը: Նա ոտաբոբիկ էր: Հագին ունէր չափից դուրս լայն վարտիկ, որը անկասկած ռուքանի տիրոջն էր, իսկ իրանը, նոր լուացած կախուած էր հունի ծառից: Նրա լայն ձիտերով կօշիկներն ու գուլպաները նոյնպէս լուացած

հազցրած էին պարսպի ցիցերի վրայ: Դուրս եկաւ և Սաքուլը, քայլերը հազիւ փոխելով, ոտից մինչև գլուխը ցեխի մէջ շաղախուած:

— Ստում եմ հանիր, — դիմելով ինձ խօսեց Արօն, — հանիր շորերդ, լուսն, բայց չի լսում ինձ:

— Մէկ միլիօն տաս, վարտիկս չեմ հանի, պատասխանեց Սաքուլը բարկացած:

Նստեցինք ճաշի: Արօն մեզ հիւրասիրեց այնպէս սրտալի, ինչպէս չէ հիւրասիրել ինձ երբէք ոչ մի բարեկամս, ոչ մի ազգականս: Ո՞ր տեղից էր ճարել այդ բոլորը, որ բերում էին ու դարսում սեղանի վրայ, այդտեսակ վայրենի տեղում:

Չգիտեմ ի՞նչը դրդեց Արօն այդպէս պատուելու ինձ, այդպէս անձնուիրաբար վարուելու հետս. չէ՞ որ ոչ մի լաւութիւն արած չէի իրան:

1906, Թիֆլիզ



ՄԻ ՀԱՐՍԱՆԻՔ ԹԵՂԱՒՈՒՄ

Յիւնուալեցի Միխակօն առաջնակարգ փեսացուն էր համարում իր հայրենական գիւղում:

Բաւականաչափ հարուստ, առողջ, գեղեցիկ և նոյնիսկ զբաղէա: Ուրեմն ունէր բոլոր յարմարութիւնները իր հասակակիցների նախանձը շարժելու համար: Նա համոզուած էր, որ երբ քէֆը տայ՝ կարող է ամուսնանալ, թէկուզ հէնց տէրտէրի աղջկայ հետ: Գլխաւոր և միակ պատճառն էլ այդ էր, որ ոչ մի օրիորդի չէր հաւանում: Մոցիքուները անդադար գալիս էին մօտը սովորական առաջարկութիւններով, գովաբանելով իրանց «ապրանքը», սակայն Միխակօն մնում էր անտարբեր: Նա հանաք անելով հասկացնում էր նրանց, որ իր սրտի ուզածը գիւղում չկայ: Դիտաւորութիւն ունէր անպատճառ Թիֆլիզից բերել հարսը և սպասում էր յաջող հանգամանքի որ իր բարեկամ վաճառականները աշակցութեամբ յաջողեցնի իր միտքը: Նա իր ծրագիրը վաղուց կազմել պատրաստել էր, որից դուրս, ոչ մի պայմանով, չպէտք է ամուսնանար: Ծրագիրը պահանջում էր, որ հարսնացուն լինի քսան տարեկան, գեղեցիկ, ուսեալ, հարուստ և

համեստ: Իսկ եթէ դաշնամուր էլ կը նուագի, այդ արդէն աւելորդ շքեղութիւն պէտք է լինէր, թէև դաշնամուրի ձայնից նրա ականջները տանջուում էին:

Մի անգամ բաղդի բերմամբ Միխակօն հրաւիրուեց Թելաւ, իբրև խաչեղբայր իր հին ծանօթի հարսանիքին: Յայտնի բան է ուրախութեամբ գնաց, փափագելով ցոյց տալ իր բոլոր փայլը նոր հասարակութեան մէջ, այն էլ կախէթի պէս գոված տեղում: Թելաւի կիսավրացի հայ ժողովուրդը շատ դուր եկաւ Միխակօյին, մանաւանդ նրանց միամիտ բնաւորութիւնը: Իսկոյն ըմբռնեց, որ նրանք հիմնովին գատուում են Յիսիսուալ-Պօրիի «մատրաբագներից»: Նրանց խնջոյքի պարզութիւնը, շուրի նուագելու և պարելու ընդունակութիւնը և միւս բոլոր յատկութիւնները՝ որոնք բաժին են ընկել միայն կախէթեցիներին, կատարելապէս հիացրին Միխակօյին:

Պսակը կատարուեց: Երբ եկեղեցուց վերադարձան փեսայի տունը, անմիջապէս թմբկահարն ու շուրի ածողը սկսեցին նուագել լեզգիներին: Յանկարծ դուրս պրծաւ ամբօխի միջից Աթլաւաշան ու յանդուգն կերպով պարելուց վերջը՝ դուրս քարշեց Ձիխմէյոանին: Վերջինն էլ հրաւիրեց Թիւէլոյին և այսպէս իրար ետևից Բօթմանան, Տոպրական *) և միւսները առանց նազ անելու ուրախութեամբ պարեցին:

*) Մականուններ:

Ձուռնաչի Տրաքախօն ոգևորուել էր: Նա իր կարմիր թաշկինակով քիթը լաւ սրբելուց յետոյ շուրի դրաւ գրպանն ու դուրուկը սարքեց՝ համոզուած լինելով, որ Յիսիսուալեցի խաչեղբայրը առատօրէն կը վարձատրի իրան:

Հասարակութեան սիրելի Տէր-Աբէլը ցանկանալով գուարճութիւն պատճառել օտարական հիւրին, պատուիրեց փեսայի մօր Մօկլէ Տասօյին պարեցնել բոլոր օրիորդներին ու ջահէլ հարմներին: Աղջկերանց թոււմ կար մի վայելչակազմ ու գեղեցկազմ օրիորդ, որ Յիսիսուալեցու ուշադրութիւնը գրաւեց. այդ նկատեցին ամենքը, նկատեց և ինքն օրիորդը:

Խնջոյքի կիսին Միխակօն արդէն գիտէր նրա ամբողջ կենսագրութիւնը, որը համապատասխան էր իր ծրագրին միմիայն երկու կէտում, այսինքն քսան տարեկան և գեղեցիկ, սակայն նա միանգամից վճռեց կամ նատօի (այսպէս էր օրիորդի անունը) հետ ամուսնանալ, կամ պսակուելու մտքից բոլորովին հրաժարուել: Բարեբաղդաբար Միխակօյի կենսագրութիւնն էլ իսկոյն յայտնի երկրերի համար և խնջոյքի վերադարձաւ բոլոր հիւրերի համար և խնջոյքի վերջին, լուսաղէմին, երբ Տրաքախօն պատշգամբի վրայ կանգնած «սահարի» էր փչում, Յիսիսուալեցի երիտասարդը թելաւեցի օրիորդին նշանը տուաւ:

Աշնան վերջերին Միխակօն իր ազգական-

ներով ու բարեկամներով՝ երեք ֆուրգոնի մէջ հազիւ տեղաւորուած հասել էին Թելաւ և իսկոյն սկսել հարսանիքի պատրաստութիւնը տեսնել: Խաչեղբայր Նիկոն, որ Յիսինուալի տանուտէր էր, փեսային առանձին պատուելու համար իր կապոյտ նոյզով էր եկել՝ Տէր-Ստեփանի նախանձը շարժելով: Խեղճ քահանան շատ էր տանջուել, ֆուրգոնի մէջ խցկուած լինելով երկու պառաւ կանանց արանքում: Այս նորեկները Թելաւեցոց համար ընդհանուր խօսակցութեան առարկայ էին դարձել:

Փեսայի կողմից ցանկութիւն յայտնուեց պսակի նախնիաց օրը այցելութեան գնալու հիւրերի հետ միասին հարսնացուի տուն, նպատակ ունենալով օր առաջ ցոյց տալ հիւրերին իր աննման ընտրութիւնը, սակայն չյաջողուեց այդ: Հարսի տունը խառն զրութեան մէջ լինելու պատճառով և էլի մի ինչ որ պատրուակով առաջարկուեց, որ հէնց ուղղակի միաժամանակ կատարուի ծանօթանալն ու պսակը: Միխակօն չհակառակուեց, նոյնիսկ խելացի համարեց խնամիների միաքը ամեն կողմից և այսպէս հանգէսը կատարելու համար նշանակուեց հետևեալ օրը:

Երեկոյեան ժամը ութը լրանալուն պէս, Յիսինուալեցիք զուգուած ու կոկուած գուրս եկան իրանց բնակարանից նորափեսայի առաջնորդութեամբ, որ ամբողջովին զարդարուած էր արծաթէ ու ոսկէ իրերով: Ջահէլ կանայք

առատութեամբ ներկել էին իրանց դէմքերը սպիտակ ու կարմիր գոյներով: Նրանց թուով կար մի պառաւ օրիորդ, որը բերուած էր Թելաւ յատկապէս «սաղացներու» համար:

Երկու կողմի խնամիները հանդիպեցին իրար շափազանց սիրալիր: Կանանց համբուրուելն ու գրկախառնութիւնը սրտաշարժ էր: Հիւրերը դեռ չէին տեղաւորուած սենեակում, երբ լսուեց դայրա-նաղարայի ձայնը:

— Նորահարսը ցոյց տուեցէք, աղաղակեց Միխակօյի մայրը, այդ անհամբեր պառաւ Մալօմէն,— դեռ ինչ պարելու ժամանակ է:

— Նստեցէք հանգստացէք, ցաւներդ տանեմ, լսուեց հարսնացուի մօր ձայնը,— եկել էք, իօ չէք գնում:

Նեղ ու շատ երկայն սենեակի խորքում տախտի վրայ նստած էր մի աղջիկ, շափից դուրս սպիտակագէմ, ինչպէս կաւիճ: Նրա յօնքերը ներկայացնում էին թանաքով ներկած երկու երկայն սև շերտեր: Նրա աջ և ձախ տեղաւորուել էին երկու շատ տգեղ կանայք: Դա էր ինքը հարսնացուն:

Երբ ամեն ինչ կարգի ընկաւ և հիւրերից իւրաքանչիւրը տեղ գտաւ նստելու, մայրը բռնելով Մալօմէի ձեռքից տարաւ իր աղջկայ մօտ ծանօթացնելու:

— Համեցէք, խնամի ջան, ահա ձեր հարսը:

— Խօ չէք գժուել, ինչ էք խօսում,— բար-

ձրածայն աղաղակեց Միխակօն, սրտեղ է նշանածս։
—Վհւյ քոռանամ, փեսայ ջան,— դժգոհու-
թեամբ արտասանեց աղջկայ մայրը,— նշանածդ
չէ ապա սով է։

Հիւրերի մէջ իրարանցում ընկաւ։ Հարսնա-
ցուն սկսեց թաշկինակով աչքերը տրորել։

—Յիմարի տեղ էք ընդունում ի՞նչ,— գայ-
րացած պատասխանեց փեսացուն,— նշանածս ու-
րիշ է, սա չէ։

—Սա է, սրդի ջան, տեսածդ ու հաւանածդ,
հէնց սա է, քո կատօն։

—Նշանածս Նատօ էր և ոչ թէ կատօ,—
գայրոյթից խեղդուելով գոռաց Միխակօն։

—Էս ի՞նչ կրակ է, ձեզ մատաղ,— արտասուե-
լով խօսեց մայրը։— կատօ, ոչ թէ Նատօ։

Յայտնի չէ թէ ի՞նչ կերպով այդ միջոցին
Յիսինուալեցոց ականջին հասաւ, որ հարսնացուին
փոխել են և որ սա այրի կին է...

—Գլուխս կըսպանեմ, գլուխս կըսպանեմ,
դառնազին լալով ու երեսը չանդրելով կրկնում
էր Սալօմէն,— ջահէլ որդուս այրի կնոջ հետ չեմ
ամուսնացնի։

Բարձրացաւ անտանելի գոռում-գոչում։

Կանայք ու տղամարդիկ իրար անցան։ Լաց
ու կոծ, սպառնալիք, աղերսանք, անէծք, հայ-
հոյանք միմեանց յաջորդելով կազմել էր սար-
սափելի ազմուկ։ Վերջապէս փոքր ինչ հանգըս-
տացան ու սկսեցին իրար ականջի փսփսալ, որի

հետևանքն այն եղաւ, որ բազմութիւնը բա-
ժանուեց երկու բանակի։ Դուռը բացուեց ու
Յիսինուալեցիք շտապեցին դուրս գալ տանից՝
Թելաւեցոց ձեռքից ազատուելու համար։ Նրանց
գիմաւորեցին տան բակում մի խումբ երիտա-
սարգէներ դազանակներով ու դաշոյներով։

—Ո՛ւր էք փախչում, նամարդներ,— խօսեց
նրանցից մէկը,— դուք խօ չէ՞ք բեզարել կեանքից։

—Մատրարազներ, — աղաղակեց միւսը, ես
ձեզ համար կէս կոպէկանոց գնդակ չեմ խնայե-
լու։ Աղջկայ գլուխը կտրեցիք ու ցանկանում էք
սաղսալամաթ գնալ։

—Մեզ Թելաւեցի կասեն, աւելացրեց եր-
րորդը։

—Ինչ Աթլաւաշա կասեն,— պարծեցաւ միւսը։

Յիսինուալեցիների դրութիւնը անելանելի էր։

Նրանք իրար զէմքին նայելով ու խորհրդակցե-
լով վճռեցին միտքները փոխել։ Միխակօյի թուքը
ցամաքել էր։ Սա փորձեց վազելով ազատուել
իր հոգեհաների ձեռքից, բայց չյաջողուեց։ Աթ-
լաւաշան ետևից հասնելով բռնեց նրան և մի ապ-
տակ տալով հասկացրեց, որ ի դուր է այդպիսի
խաղերը։

Երկայն սենեակը նորից բազմութիւնով
լցուեց։ Պօսակցութեան եղանակը փոխուեց։
Մկուսեց խաղաղ զրուցաբանութիւն, ուր ամեն
մէկը բազմաթիւ օրինակներով ապացուցանում
էր, որ ջահէլ այրի կնոջ և օրիորդի մէջ ոչ մի

զանազանութիւնն չկայ և որ նոյնիսկ առաջինը միջանի կէտերում առաւելութիւններ ունի: Ամբողջ բազմութիւնը շրջապատեց Միխակօյին ու նրա մօրը և ոչ մի միջոց չխնայեց հաւատացնելու, որ այդ կնոջ հետ ամուսնանալով երջանկութիւն կը վայելի: Գովաբանեցին նրա համեստ բնաւորութիւնը, տանտիրկնութեան շնորհքը, մաքրասիրութիւնը, խելքը, կայլն, կայլն: Միխակօն քիչ արտասուեց, քիչ վինփնթաց և վերջը... յօժարուեց ամուսնանալ:

Հնչեց նորից գայրա-նաղարայի ձայնը, պարեցին բոլոր ջահէլները, ծիծաղեցին, ուրախացան ու վերջը դուրս եկան տանից և դիմեցին դէպի եկեղեցի, ուր ամեն բան արդէն պատրաստ էր պսակի հանդէսը կատարելու համար:

Հետեւալ առաւօտը տխուր էր: Տխուր էր ոչ թէ միայն այն պատճառով, որ Միխակօյի սիրտը լալիս էր, այլ եղանակը փոխուել էր: Մոխրագոյն ամպերը իջել էին ցած ու անձրև էր մազում:

Նորապսակը անքուն գիշեր անցկացնելուց յետոյ կրկին վայ էր տալիս իր գլխին:

Ամբողջ տունը արթնացաւ, բոլորեքեան թթուած դէմքերով վերկացան, լուացուեցին ու սկսեցին պատրաստութիւն տեսնել Յիսիսուալ վերադառնալու համար:

Մեծից մինչև փոքր կոտորուած էին այդ տե-

սակ խայտառակ անյաջողութեան հանդիպելու համար: Իրանց գիւղի պատիւը շօշափուած էին համարում: Իրանք «ապրանք» էին բերել ախմախ Թելաւեցիների վրայ սաղացնելու համար և վերջը... խայտառակութիւն:

Յանկարծ բակը մտաւ ետփնջի մէջ փաթաթուած մի ձիաւոր, որը արագութեամբ իջնելով ձիուց, կապեց ձին թթան ծառից ու սկսեց հայհոյանք թափել Միխակօյի գլխին: Դանորապսակի հօրեղբայրն էր, որ հարսանիքին ուշացել էր:

— Փշանաս դու, ի՞նչ է արածդ, ինչո՞ւ գետինը չես մտնում, էլ ինչի՞դ է պէտք գլուխդ...

Միխակօն արդարանալու միջոց չունէր: Նստած էր լուռ, գլուխը քաշ գցած ու մոլորուած:

— Այժի շիլափլաւ ուտողները պէտք է քեզ խաբէին, շարունակեց հօրեղբայրը, — Թելաւեցի տխմարները պէտք է օյին խողային Յիսիսուալեցու գլխին... Ինչո՞ւ չես մեռնում, ի՞նչ երեսով պէտք է գնաս գիւղը... Թո՞ւ քո նամուսին...

— Մախլաս, — արտասանեց Միխակօն, — կեանքումս էսպէս ընտարնամաղուլ չեմ արել:

1906, Թիֆլիզ

ՏԻՐԱՅՈՒ ՍՐԱՓՈ

Ամառուայ շոք օրին, հսկայական ընկուզե-
նու տակ նստած էին ծխական ուսումնարանի
մի խումբ աշակերտներ ու վիճում էին: Նրանցից
ոմանք փոխել էին դասատունը, իսկ ոմանք մնա-
ցել պատրաստականում: Փոխողները, համարե-
լով իրանց գիտուններ, հպարտ-հպարտ խրատ-
ներ էին կարդում «կտրուածների» գլխին ու
մխիթարում: Երեխաներից մէկը, որի մազերը
քննութիւնների նախնթաց օրը մայրը խուզելով
աստիճաններ էր շինել գլխի վրայ, մէջքի վրայ
պառկած մտածում էր:

—Սերօր,—յանկարծ խօսեց նա,—դու խօ
փոխեցիր ու ես մնացի. ասա տեսնեմ ի՞նչ է
նշանակում «պատանի»:

—Սպիտակ կտաւ,—պատասխանեց Սերօրը,
—որի մէջ փաթաթում են մեռելներին:

—Ա՜Ֆֆերիմ,—ուրախ-ուրախ վեր թռչելով
աղաղակեց հարց առաջարկողը,—«պատանի» նշա-
նակում է ո՛չ երեխայ, ո՛չ մարդ, այլ ես, դու,
մենք ամենքս:

—Աբա իմացիր,—զայրացած արտասանեց
Սերօրը,—ի՞նչ է նշանակում ուսերէն «պրաշկա»:

—Չատկի գառ,—եղաւ պատասխան:

—Յիմար, գատկի գառ ո՞ւսերէն «բարաշ-
կա» է, իսկ «պրաշկա» լուացարար է:

—Ի հարկէ լուացարար է, ո՞վ չգիտէ այդ,
—լսուեց այս ու այն կողմից:

—Տղերք, Սրափօն գալին է,—արտասանեց
վախկոտներից մէկը,—դուրս կանի մեզ այստեղից:

—Ոտներս էլ չի կարող ուտել,—պարծե-
ցաւ դասատուն փոխողներից ամենաաջողը:

Տիրացու Սրափօն գիւղում յայտնի անձ-
նաւորութիւն էր: Տգէտները համարում էին
նրան գիտուն, իսկ փոքրի շատէ բանիմաց մար-
դիկ ներողամիտ էին դէպի նա: Առաջինները
զարմանում էին, որ հոգևոր իշխանութիւնը Սրա-
փոյին քահանայ չի ձեռնադրում, մանաւանդ որ
նրա ճաղատ գլխի եղած-չեղած մազերը արդէն
սպիտակել էին. երկրորդները երկիւղի մէջ էին,
որ մի գեղեցիկ օր կարող է քահանայ ձեռնադրուել
ու իրանց վզից կապուել:

Տիրացուն յայտնի էր դառել մանաւանդ
այնպիսի հազուագիւտ յատկութեան շնորհիւ, որ
ոչ ոք չուներ: Նրա կօշիկների կրունկները միշտ
ծուռ էին: Ծուռ էին ոչ թէ մաշուելու միջոցին,
ինչպէս երբեմն լինում է, այլ միշտ, նոր կօ-
շիկներ հագնելու առաջին օրից իսկ:

—Ի՞նչ էք այստեղ խոզերի պէս թափուել,
—յանդիմանեց Սրափօն,—դուք հիմի տանը նըս-
տած գիրք կարդալիս պէտք է լինէիք: Ես ձեր

հասակում երբէք տանից դուրս չէի գնում:

Տիրեց լուռթիւն: Բոլորեքեան շարժուեցին իրանց տեղերից՝ գնալու դիտաւորութեամբ:

— Բան չկայ, կացէք, — աւելացրեց տիրացուն. — քննութիւնները խօ վերջացան:

— Վերջացան, — լսուեցին շատ ձայներ:

— Ուրեմն կարող էք մնալ: Չեզանից ո՞վ է կարդում Աւետարանը, — հարցրեց փոքր ընդմիջումից յետոյ:

— Ես, ես, — պատասխանեցին շատերը:

— Յետոյ բան-ման հասկանում էք:

— Քիչ ու միչ, — պատասխանեց Սերորը:

— Իէ որ այդպէս է, ի՞նչ է նշանակում

«փուրվառ»:

Ոչ ոք չհամարձակուեց ձայն-ծպտուն հանելու:

— Ձեր վարժապետի հէրն անիծեմ. էն շուն-շանորդին, որ տարեկան երեք հարիւր մանէթ փող է ստանում ու բեխերը բզած բօլթա է տալիս, բաս ի՞նչ է ձեզ սովորեցնում: Ի՞նչ պէտք է սովորեցնի, երբ ուսուցիչն «խլէբա» չգիտէ ինչ է: «Փուրվառ» նշանակում է փոր վառ, այսինքն փուրվառը Մարիամ Աստուածածնի փորն է, իսկ միջի կրակը ինքը Քրիստոսն է, այսինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս: Հասկանում էք:

Երեխաները գոհ մնացին այսպիսի մեկնութիւնից:

— Իսկ «խունկը» ի՞նչ է, — հարցրեց Սերորը:

— Խունկը՞, խունկն ածում ենք հոտի համար. առանց խունկի չի կարելի: Կերակուրի մէջ աղ ինչո՞ւ ենք զցում. որովհետեւ հարկաւոր է. հասկանում ես:

— Ի հարկէ հասկանում եմ:

— Երբ որ այդպէս է, — ասաց տիրացուն,

— ես էլ կընստեմ, կըհանգստանամ... Իէ ձեռաց սրբեցէք տեղը:

Ամբողջ տարածութիւնը, որ բռնում էր ծառից ընկած ստուերը, ծածկուած էր անասունների աղբով: Երեխաները անմիջապէս մաքրեցին մի կտոր տեղ, ուր Սրափօն նստելուն պէս ստները մեկնեց նրանց կողմը: Համարեա ամենքը վրայ թափուեցին ու աջ ու ձախ քաշքշելով հանեցին կօշիկները:

— Երեք անգամ իննը քանիս է, — լըջօրէն հարցրեց տիրացուն:

— Քսանուեօթը, — եղաւ ընդհանուր պատասխան:

— Աստուած քանի՞ օրում — ստեղծեց երկինքն ու երկիրը:

— Վեց օրում:

— Մայլաղէ՛ց... Աստուծու անունն ի՞նչ է:

Տիրեց լուռթիւն: Երեխաները իրար երեպի նայեցին ու շրթունքներն կրծելով արտասանեցին՝ «Աստուծու անունը»:

— Հը՛, նի գնաի՛շ... բաս էն հաստազուլիւր

չսովորացրեց... Դուրակ... Աստուծու անունը
էմմանուէլ է:

— Էմմանուէլ, — կրկնեցին ամենքը գոհ սրտով:

— Ազգանձնը, — հարցրեց ամենափոքրը, որի
զրպանը լիքն էր ծիրանի կորիզներով:

Ընկերները նախանձեցին, որ իրանք չեղան
այդպիսի հարց առաջարկողը:

— Ի՞նչ ես ասում, իշի գլուխ, եշակ, — յան-
դիմանեց Սրափօն, — Ի՞նչ ազգանուն պէտք է ու-
նենայ Աստուած:

Բոլորեքեան միաձայն ծիծաղեցին ու ծաղ-
րեցին ընկերոջ տգիտութիւնը:

Յանկարծ նրանց ուշադրութիւնը գրաւեց
մի ծերուկ, որ մերձակայ բլուրից համարեա վազ
տալով ու հեալով դիմում էր իրանց կողմը: Նա
կանգ առաւ ու շփոթուած ձայնով կանչեց.

— Տղերք, տիրացու Սրափոյին չէ՞ք տեսել:

— Այստեղ է, — աղաղակեցին աշակերտները:

— Ասացէք, որ այստեղ եմ, — պատուիրեց
տիրացուն:

— Այստեղ է, — աւելի թունդ կերպով գոռա-
ցին նրանք:

Ծերուկը շնչասպառ հասաւ նրանց ու ձեռ-
քին պինդ պահած մի կտոր թուղթը, որ քրտնքից
թրջուել էր, յանձնեց Սրափոյին:

— Սրափօ ջան, հոգուդ մեռնեմ, տես ի՞նչ
բան է:

Այդ մի հեռագիր էր, իսկ այդ բանը, ինչ-

պէս յայտնի է, անասելի երկիւղ է պատճառում
գիւղացի մարդուն:

— Այս հեռագիր է, — արտասանեց հեղինակաւոր
ձայնով տիրացուն ու իր ակնոցները իւրոտ մատնե-
րով տրորելով աւելի կեղտոտեց ու դրաւ քթին:

Ներկայ գտնուողները շունչները պահած
սպասում էին սարսափելի դատավճռին: Ծերուկի
սիրտը ուժգին բաբախում էր:

— Փուճ աշխարհ... չօրթ իվօ գնաիշ, —
— տխրութեամբ արտասանեց Սրափօն, — Ի՞նչ պ-
սեմ, Դաւիթ ջան, Կունդ քանդուել է:

— Վայ, քարկոծեցէք ինձ, — աղաղակեց ծե-
րուկն ու կուչ եկաւ, փոքրացաւ. — Ստեփանս
մեռել է. օգնեցէք, քրիստոնեաներ...

Տարօրինակ բան. այդ օրը գիւղում երկու
հատ հեռագիր ստացուեց: Երկրորդը Տէր-Մինա-
սի անունով էր: Տէրտէրը կնունքի պատճառով
հարևան գիւղն էր գնացել: Իրիցկիներ թէև գու-
շակում էր, թէ ինչ պէտք է լինի բովանդակու-
թիւնը, սակայն անմիջապէս վազ տուեց Սրա-
փոյի մօտ, որ իրանց հարևանն էր:

— Աչքդ լուս, — ակնոցները հանելով շնոր-
հաւորեց տիրացուն, — ահա Զաքարիայից ինչ է
գրում մայրդ. «Շուտով Մայիկոյի հարսանիքն է
լինելու, համեցէք»:

— Բերեցին թէ չէ, իսկոյն հասկացայ, որ
Մայիկոյի հարսանիքի մասին է, ծիծաղելով ասաց

տէրտէրակինն ու դուրս թուաւ գնաց, թողնելով հեռագիրը Սրափոյի մօտ:

Տարաբախտ Դաւիթի ու Տէր-Մինասի տնակները հեռու չէին միմեանցից, բայց որքան զանազանութիւն կար այդ միջոցին նրանց մէջ: Տէրտէրը վերադառնալով կնունքից շուտով կատարեց իր պարտաւորութիւնները սգաւոր Դաւիթի տան վերաբերեալ ու սայլերը լծել տալով ուրախ-ուրախ, ամբողջ ընտանիքով ճանապարհուեց դէպի Զաքարթալա, ուր սպասում էր նրանց քէֆ ու զուարճութիւն:

Դաւիթի տունը ընկղմուած էր ծայրացեղ վշտի մէջ: Նրա անմխիթար կինն ու երկու անշիկը գլուխնին մահու էին տալիս: Բոլոր ազգականները, բարեկամներն ու վերջապէս ամբողջ գիւղը մասնակից էր նրանց ցաւին: Խեղճ Ստեփանը, ծնողների միակ այդ արու զաւակը, նրանց յոյսն ու ապաւէնը, ուղիղ մի տարի առաջ գնացել էր Բագու բաղդ որոնելու համար:

Հոգեհանգիստն ու առհասարակ թաղման բոլոր արարողութիւնները կատարելուց յետոյ սգաւորները նստած թէյ էին խմում:

— Ո՞րտեղ է հեռագիրը, — հարցրեց մի մանրավաճառ, որ քիչ տեղեկութիւն ունէր ուսեբէն այբուբենից:

— Հէնց քամակդ է ընկած այդ սև ու մութը,

պատուհանի վրայ, պատասխանեց հանգուցեալի մայրը:

— Ախպէր, բան չեմ հասկանում, բայց ինչոր անցագրի մասին խօսք կայ այստեղ: Տեսէք, գրած է «պասպօրտ»:

Գիւղական գրագիրը, որ առանց օղիի թէյ չէր կարողանում խմել, մօտեցաւ մանրավաճառին ու երկու հոգի միասին ընդհանուր ոյժերով բաւական չարչարուելուց յետոյ՝ կարդացին հետեւալը. «Անցագիրս հնացել է, ոստիկանութիւնը նեղում է, ուղարկեցէք նորը»:

Հետեւեալ օրը անսովոր նորութիւն կար գիւղում: Թիֆլիզի թեմի առաջնորդը կառքի մէջ նստած իր սարկաւազի ուղեկցութեամբ հասել էր գիւղն ու կանգ առել փողոցում մի ստուերաշատ ծառի տակ: Համարեա բոլոր բնակիչները հաւաքուել էին նրա շուրջն ու գլխաբաց սպասում հրամանի:

— Ուրեմն ասում էք ձեր քահանան այստեղ չէ, — հարցրեց վրդովուած սարկաւազը:

— Կարգիդ մեռնեմ, գնաց Զաքարթալա, — պատասխանեց ալեղարդներից մէկը:

— Մայիօյի հարսանիքն է, — բացականչեց մի երեխայ ու ծածկուեց իր հօր փէշի տակ:

— Երէկ հեռագիր ստացաւ ու այսօր ճանապարհուեց ընտանիքով, — աւելացրեց տանուտէրը:

—Ապա մեր հեռագիրը:

Տէրտէրի ստացած հեռագիրը կոնսիստո-
րիայից էր եղել այսպիսի բովանդակութեամբ.
«Վաղը սրբազանը հասնելու է ձեր գիւղը, ուր
կըմնայ գիշերելու. պատրաստեցէք բնակարան»:

1908, Թիֆլիզ



ԽՈՍՏՈՎ ԱՆՈՒԹԻՒՆ

Սայլը կանգնեց փոքրիկ ու կուչ եկած ջրա-
դացի մօտ, հին կաղնու ստուերի տակ: Ծամ-
բորդները ցած իջան, թափ տուեցին իրանց չո-
խաների լայն փէշերն ու ցրուեցին զանազան
կողմեր: Սայլապանը գոմէշները լծից նոր էր
արձակել, երբ նրանք մէկ-մէկ վերադարձան
թաց-թաց երեսներն ու ձեռքները թաշկինակ-
ներով սրբելով:

—Լաւ ջուր է,—ասաց մէկն ու պառկեց
մէջքի վրայ՝ գլուխը յենելով ձեռքերի վրայ:

Դա արհեստով կօշկակար էր՝ ստորին տե-
սակի:

—Վահ, բաս չգիտէիր. սրտ պէս ջուր
չկայ ամբողջ կախէթում, — պատասխանեց
միւսը, մերկացնելով ու տրորելով իր գարշա-
հոտ ոտները:

Դա մի մրգավաճառ էր:

Նրանք երեք հոգի էին, չորրորդն էլ սայ-
լապանն էր:

—Աբա սուփրայ,—գոռաց խռպոտ ձայնով
Գօճօ մականունով հաստիկ երիտասարդը, հա-
նելով սայլից խուրջինը:

—Դուք նստեցէք, ես կըբերեմ ամեն բան,

— շտապով խօսեց սայլապանը, գետնին գցելով ճիպոտն ու բարձրանալով սայլի վրայ:

Երբ ամեն բան պատրաստեցին և բոլորեքեան ծալապատիկ նստեցին ճաշելու, մօտեցաւ նրանց մի ծերուկ գեղջուկ՝ պատառոտած շորերով, ալիւրի մէջ շաղախուած:

— Բարով էք եկել, տղերք, — արտասանեց նա խուլ ձայնով ու դրեց սուփրի մէջտեղը սառ. ջրով լի թաց կուժը:

— Նստիր, բիձա, — ասաց Գօճօն, ուժգին թափ տալով նրա փէշից:

— Կլսիրեմ հայու խուրջինը, — ժպտալով խօսեց ծերունին ու նստեց:

Նա ջրաղացպան էր:

Յարձակուեցին կերակուրի վրայ քաղցած գայլերի նրան և կարճ միջոցում միանգամայն անհետացրին ամբողջ պաշարը: Բայց գինին գեռ էլի կար տկի մէջ:

— Հաց չունե՞ս, բիձա, — հարցրեց Գօճօն, կրծելով ոչխարի բուղի սկորրը:

— Հաց չունեմ, — պատասխանեց ջրաղացպանը, — բայց եթէ լայեղ կանէք, լաւ սիւմինդրի ճաթ ունեմ... Ի՞նչ կասէք, բերե՞մ:

— Բեր, էլի, հէր օրհնած, — միջամտեց սայլապանը, — ճաթը հաց չէ:

Ջրաղացպանը ծուլութեամբ վերկացաւ ու կաղալով գնաց ճաթը բերելու: Երևում էր, որ նա ոսկրացաւից տառապում էր:

Գինին խմում էին անընդհատ, կախէթեցիների սովորութեան համեմատ:

Ջրաղացպանը վերադարձաւ և շարտեց սուփրի վրայ ճաթեր, կարծես ցոյց տալու ցանկութեամբ իր առատածեռնութիւնը:

— Բո տունը չքանդուի, — ծիծաղելով արտասանեց կօշկակարը, — քիչ էր մնում խեղդուէի. մնաց էք ուտում այս անտէրը:

Նա իր ճաթի կտորը սայլապանին տալով լցրեց գաւաթը կարմիր գինով ու խմեց:

Ամենքի գլուխները տաքացան: Սօսակցութիւն, ծիծաղ, հանաքներ իրար խառնուեցին: Չայները աստիճանաբար բարձրանալով փոխուեցին աղմուկի, գոռում-գոչումի:

— Էս էլ՝ Աստուած կեանք տայ էն մարդուն, ով իր օրում մեղք չի գործել, — հառաչեց Գօճօն զօռ տալով իր կոկորդին ու կարմրելով:

— Դու էլ բան ասացիր, — ծաղրելով նկատեց կօշկակարը. էդպէս մարդ չկայ երկնքի տակ:

Այս հարցը անմիջապէս վիճաբանութեան առարկայ դառաւ: Ամեն մէկը մի բան էր ասում՝ առանց լսելու ուրիշի խօսքը:

— Քիչ համբերութիւն, քիչ համբերութիւն, — գոռաց Գօճօն, — մի խօսք ունեմ, մի խօսք...

Նա այս բանը կրկնում էր անվերջ, պարտացնելով իր ցուցամատը մերթ մէկի, մերթ միւսի քթի առաջ:

Վերջապէս տիրեց լուռութիւն:

* *

—Արթնացայ, — շարունակեց Գօծօն ընդարձակ առաջաբանից յետոյ:— Աքաղաղը նոր էր կանչել: Աչքերս բաց արի, տեսնեմ կինս կողքիս չկայ. հայ դէս, հայ դէն, չկայ ու չկայ...

—Վայ ես նրա... — բացագանչեց ջրաղացպանը:

—Լուացուեցի, երեսս խաչակնքեցի ու տանից դուրս եկայ, գնացի գործի... Ի հարկէ հասկացայ, թէ. ում հետ է փախել: Կար մի շանորդի, գող աւազակ: Տնով-տեղով գողեր էին: Նրա հայրը բանտում մեռաւ: Կինս փախել էր... էհ, ջհաննամ նրա գլուխը. պոռնիկ դուրս եկաւ... Ես ինչ մեղաւոր եմ: Լաւ եղաւ որ փախաւ, ապա թէ ոչ՝ վաղ թէ ուշ ես նրան կըսպանէի:

—Երկուսին էլ միասին պէտք է սպանէիր,

—ոգևորուած բացագանչեց մանրավաճառը:

—Էէ... փախաւ, էլի, փախաւ... ճվ է նրա համար դարդ անում. նրա հէրն էլ անիծած: Բայց սիրտս դաղւում է կօշիկներիս համար... Մի ջուխտ նոր կօշիկներ ունէի, Լարաբաղի, է, երկայն ճիտերով... տարել էին հետները շանորդիքը:

—Անասառուած շանորդիք, — փնթփնթաց սայլապանը, վիզը քորելով:

—Ափսոս, — աւելացրեց կօշկակարը, — արժէ ութ մանէթ, ինչպէս ութ կոպէկ:

—Մանլաս, տարան, էլի, տարան... Ես էլ, տղերք, նոյն գիշերն ևեթ վճռեցի փախցնել էն շանորդու քրոջը. շատ սիրուն քոյր ունէր: Գնա-

ցի ու պարզեցի նրանց տան բակում, խոտի դէզի քամակին... Գիշերը այնպէս մութն էր, որ կեանքումս չեմ տեսել նրա նման մութ գիշեր: Վերջապէս դուռը բացուեց ու դուրս եկաւ մի կին: Ենթադրեցի, որ հէնց նա է... Վրայ ընկայ, խտտեցի, բարձրացրի ու դրի ուսիս... էն բռնոթի հոտը որ դիպաւ քթիս... էն շանորդու մայրն էր եղել... Ո՛չ դէս, ո՛չ դէն, դէմուդէմ գետնին գարկեցի ու՝ հայդէ... փախայ:

Լսողները մի քանի վայրկեան ապշած մնացին: Յետոյ արտասանեցին՝ «վայ-վայ... օհ-օհ-օհ»:

—Պեղճ պառաւը պառկեց անկողին ու էլ չվերկացաւ: Մեռաւ մի շաբաթից յետոյ: Իր մահով մեռաւ թէ չէ... Աստուծուն է յայտնի. բայց մինչև այսօր սրտիս վրայ մի տեսակ ծանր քար է դրած:

—Դժուար բան է, արևս վկայ, — ասաց սայլապանը՝ ճաթը ծամելով:

Կօշկակարը տխրել էր, ըստ երևոյթին մտատանջութեան մէջ էր:

—Հը, ինչ ես բայդուշի պէս քիթդ կախել, — կշտամբեց նրան Գօծօն, — իմ կնիկը փախաւ, քոնը խօ չէ:

—Հօրս ընդամաղ արեցի, — վշտացած արտասանեց կօշկակարը, — էն էր ու էն, մինչև օրս լալիս է սիրտս...

Վերջին խօսքը խեղդուեց կոկորդի մէջ:

—Լաւ մարդ,—ասաց ջրադացպանը,—ո՞վ չի ընդամառ արել իր ծնողներին:

—Դուք չգիտէք. շատ փիս ընդամառ արեցի:

—Էհ, ի՞նչ լինի, լինի,—գլուխը թափ տալով ու հառաչելով խօսեց մրգավաճառը.—մի մազալու բան կը պատմեմ ես էլ:

Այս ասելով լցրեց բաժակն ու «Աստուած հոգին լուսաւորի Կօրխմազի» ասելով խմեց:

—Մեղք որ ասում էք, չէք հասկանում ի՞նչ բան է մեղքը...

—Ո՞րտեղից յիշեցիր Կօրխմազին,—հարցրեց Գօձօն,—միտդ է՞ նրա երկար չօնգուրը:

—Ասում եմ, էլի... Շատ վատ բան արեցի... ինչքան ասէք՝ վատ. բայց էլ ի՞նչ կօզնեմ... Ջահէլ էի, գլուխս տաք... Էհ, մախլաս...

—Ադա, շանտալայ, --միջամտեց Գօձօն,—իմ արածից էլ խօ վատթար չի՞ լինի. ի՞նչ ես նազի-նուզով ձգձգում:

—Արևս վկայ՝ վատթար է,—լրջօրէն արտասանեց մրգավաճառը, աչքերը յառելով երկրնքին, արցունքները ծածկելու համար.—հին բան է, կըլինի քսան տարի:

Տիրեց լուռթիւն:

—Էէ... մախլաս... Դէ լսեցէք... Մէկ Տէր-Վարդանը գիտէ այս բանը ու մէկ էլ դուք կը գիտենաք: Աստուած էլ խօ գիտէ ու գիտէ:

—Փանք Բեզ, Աստուած,—փնթփնթաց ջրադացպանը:

—Էլ ճաթ չունես, բիճա,—կիսաձայն հարցրեց նրան սայլապանը, թեթև բոթելով ու վերջին կտորը ծամելով:

--Փանք Բեզ, Աստուած, փանք,—կրկնեց միևնոյն ձևով, կարծես նրան չէր վերաբերում սայլապանի խօսքը:

—Ալանվերդիից գալիս էինք, ողորմած լինի ձեզ, ես ու խեղճ Կօրխմազը՝ իր չօնգուրով: Մի քանի շահի հաւաքեց այնտեղ: Ես էլ չորացած ձուկ էի տարել, քիչ թէ շատ խէր տեսայ. Աստուած շէն պահի նրանց օջախը: Եկանք թելաւ. դուք էք իմ պարոն, մի-մի չուխա առանք, մի կտոր բան կերանք, Աստուծու անունը տուինք ու ճանապարհուեցինք այս կողմը: Կիսխ-խեղ որ հասանք, լաւ միջնեց: Լուսին չկար: Դէմ ու դէմը մտանք մի ջրադաց: Խօ գիտէք, ջրադացներ կան այնտեղ: Բարե՛ երեկոյ, Աստուծու բարի: «Հիւրեր չես ուզում, ախպէրացու», ասացի ես: Կօրխմազը վրացերէն չգիտէր, դարաբաղցի էր: «Աստուծու հիւրեր էք,—պատասխանեց ջրադացպանը,—գլխիս վրայ տեղ ունէք. համեցէք»: Շատ լաւ մարդ էր... կենդանի է թէ մեռած, չգիտեմ: Մի կնիկ ունէր, որ հէնց գիտենաս երկնքից իջած հրեշտակ լինէր:

—Ուխանյ,—մոնչաց Գօձօն:

—Շարունակիր, պրծիր, քունս տանում է,—կարծես ակամայ ասաց կօշկակարը:

—Նստեցինք ընթրիքի, դուք էք իմ պարոն:

Նա էլ ունէր, մենք էլ ունէինք. էհ, վերջապէս, կերանք-խմեցինք: Կնիկը մեզ հետ չնստեց: Դրուստ ասեմ, աչքս նրա վրայ էր, բերնիս շուրջ գնում էր: Լաւ կոնծեցինք ու պառկեցինք քնելու: Բան չուներս, կարո՞ղ էի քնել: Զրաղացպանը ամեն բան կարգի գցեց, ճրագը հանգցրեց ու պառկեց: Կօրխմագի քունը շուտով տարաւ: Նրա խռովոցը հիմա էլ ականջիս է: Մարդ ու կինն էլ քնեցին: «Բաս ես տղայ չեմ լինի, թէ հիւրընկալիս կնկայ ծոցը չմտնեմ», մտքուժս ասացի: Տեսէք իմ շան-որդութիւնը:

— Ես քո հէրդ անիծեմ, — արտասանեց կօշկակարը կիսախուփ աչքերով:

— Դրուստ ասեմ, ես էլ նոյնը կանէի, — ասաց Գօճօն:

— Երբ տեսայ որ լաւ քնեցին, ասացի՝ «եա՛լ լա, արձ, Բաղդօ, թէ իսկական տղամարդ ես, հունարդ ցոյց տուր»: Վեր կացայ, պատէ-պատ գնալով դուռը գտայ, կամաց-կամաց բաց արի ու դուրս գնացի: Ի՞նչ էք կարծում, ինչ բան ունէի դուրսը... Տեսէք իմ հարսմզաղութիւնը: Գնացի ու ջրաղացի ջրի ճանապարհը փոխեցի ու ձեռաց վերադարձայ. պառկեցի Կօրխմագի կողքին: Զրաղացը կանգնեց: Զրաղացպանը ի հարկէ արթնացաւ: Խեղճը ինչ-որ փեթփինթաց, յօրանջեց, վերցրեց թին ու զգուշութեամբ դուրս գնաց ջրի ճանապարհը դրստելու: Ես էլ այդ էի ուզում...

— Վայ, ես քո... — հայնոյեց Գօճօն, ուժգին խփելով ափը ափին:

— Տես թէ ինչ շանտղայ ես եղել, — մրթմըրթաց կօշկակարը:

— Եալլա՛, գող կատուի պէս չորեքթաթ գնալով՝ գտայ կնկայ անկողինն ու վերմակի տակ մտայ: Շատ մնացի թէ քիչ, այդ Աստծուն է յայտնի... Սիրտս գընգընգ էր անում, վախենում էի՝ մարդը վրայ չհասնի...

— Ես լինէի, շանսատակ կանէի, արևս վկայ, — մոնչաց Գօճօն:

— Քիչ մնաց՝ վրայ հասաւ, — շարունակեց մրգավաճառը: — Զաղացը, որ նորից սկսեց բանել, պո՛ւկ, Բաղդօ. ձեռաց գնացի պառկեցի դարձեալ Կօրխմագի կողքին: Զաղացպանը, դուք էք իմ պարոն, վերադարձաւ ու շունց տալով ու պառկեց քնելու: Ականջիս հասաւ ինչ որ քըչ-փչոցի ձայն... Ես լեղապատառ եղայ: «Վայ, քու տղիս տղայ», յանկարծ ազաղակեց ջաղացպանն ու նետուեց մեր կողմը:

— Ահա՛, օրհնուի նրա ծնողը, — արտասանեց կօշկակարը աչքերը արորելով:

— Նետուեց մեր կողմն ու շուտով գտաւ մեզ: Չեքը դրեց դեռ Կօրխմագի կրծքին, յետոյ իմ կրծքին: Շտապով գցեց իր գտակը ինձ վրայ ու վազեց, ճրագ վառեց: Ես անմիջապէս այն գտակը դրեցի խեղճ Կօրխմագի կրծքի վրայ:

— Վայ, քանդուի քո տունը, շանծիծ կե-

րած, — նստելով ու քրտինքը սրբելով, արտասանեց կօշկակարը:

— Վառեց ճրագը, վերցրեց դագանակն ու իջեցրեց կօրխմաղի գլխին...

— Վա՛, վա՛, վա՛, — բացագանչեցին լսողները:

— Լաւ է, չկարողացաւ գլխին դիպցնել, ապա թէ ոչ՝ տեղն ու տեղը կըստանէր: Դիպցրեց աջ ուսին: Խեղճ ողորմելին հարայ տալով վեր թռաւ տեղից ու կրկին գլորուեց գետնին:

Բոլորեքեան շունչները պահած լսում էին: Ամբողջ պատմութեան միջոցին շողացականի ձայնը ոչ ոք չլսեց, ոչ ոք էլ չնկատեց, թէ ինչ տպաւորութիւն է գործում նրա վրայ այդ բանը: Նա՛ ամենքի համար անսպասելի կերպով, գոռագոռաց, յարձակուեց պատմողի վրայ ու սկսեց թէ եղունգներով շանգրոտել նրա երեսը և թէ ատամներով կրծոտել մարմինը:

Մի անգամից իրարանցում ընկաւ. մարդիկ ապշեցին, իրար անցան: Երբ ուշքի եկան ու մի կերպ կարողացան ազատել մրգավաճառին դագան կտրուած մարդու ճանկերից, նրանք ալանատես եղան սարսափելի տեսարանի: Չոհի դէմքը արիւնաշաղախ, գլխուած, այլանդակուած էր և մի աչքը տեղից հանած: Չաղացականը կատաղաբար մռնչում էր և անդադար թքում, մերկացնելով արիւնոտ ատամները:

— Է՛յ, է՛յ աւանակ, — աղաղակեց սայլապանը, — քսան տարուայ ջիգրը հիմի հանեցի՞ր:

1911, Թիֆլիս

ՄԻ ԷՉ ԻՄ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ

(Իշխան Էրաստ Չելօկաեւի յիշատակին)

Ա.

Նոր էի տուն վերադարձել հաշտարար-դատաւորի գրասենեակից, որտեղ ունէի գրագրի պաշտօն: Պէտք է ասել, որ այն ժամանակ ինքս ինձ համարում էի մեծ մարդ, չնայած այն հանգամանքին, որ յիշեալ գրասենեակում՝ դատաւորից սկսած մինչև դոնապանը ինձ անուանում էին «МАЛЕНЬКІЙ» (փոքրիկ): Անուանում էին այդպէս երկու պատճառով. առաջին՝ որ 14 տարեկան էի, և երկրորդ՝ որ հասակս կարճ էր: Բայց այդ միևնոյն էր ինձ համար, հաւատացած էի, որ փոքր մարդ չեմ: Հաւատացած էի նոյնպէս, որ ես դատարանի գրասենեակում շատ գործ եմ կատարում, անուշադիր թողնելով այն իրողութիւնը, որ՝ ընդհանուրի կարծիքով, բացի թուղթ փշացնելուց ուրիշ ոչ մի գործ չէի կատարում: Յիշում եմ, շատ էի զարմանում, որ երկար ժամանակ ոռճիկ չէին նշանակում ինձ:

Ասացի որ նոր էի տուն վերադարձել. բայց աւելի ճիշտ կըլինի, եթէ ասեմ, որ նոր էի վաղ տալով ու թռչկոտալով տուն հասել: Եւ ինչպէս

չվագէի, երբ գիտէի, որ տանը չնաշխարհիկ մի բան կայ ինձ համար: Նախընթաց օրը Թիֆլիզից ստացել էի մի նուէր, որի մասին վաղուց երազում էի: Շատ էի լսել, բայց երբէք չէի տեսել, և յանկարծ այդ բանը ունէի, ես նրա տէրն էի: Այդ մի փոքրիկ տուփ էր ակվարէլ ներկերով, 12 գոյներից բաղկացած:

Ունէի մօտիկ ազգական՝ յանձին ինձ հասակակից և յատերիմ ընկեր Ալեքսանդր Դուլիշանեանի (վաղուց մեռած է): Նա ուսանում էր Թիֆլիզի գիմնազիայում: Մեր մէջ մշտական նամակագրութիւն կար, որի բովանդակութիւնը բացառապէս «օգային ամբողջներ» էին: Նա՛ ցանկանալով ինձ ուրախութիւն պատճառել, տնտեսել էր մի փոքրիկ գումար և ինձ համար ներկեր գնել:

Սրտատրոփ հասայ տուն և բաց արի իմ անգին ներկերի արկղը: Ոգևորութիւնս այնքան մեծ էր, որ ինձ թւում էր, թէ հրաշքներ պէտք է գործեմ: Ամոռանալի ընկերս ներկերն ուղարկել էր ինձ համար, բայց մոռացել էր վրէձինի մասին հոգալ: Վրձիններ առհասարակ ինքս էի շինում սեփական մագերիցս, բայց այս անգամ ցանկանալով ունենալ ներկերիս արժանի վրձին՝ կտրեցի 3 տարեկան ամենափոքր եղբօրս մագերից մի փունջ ու վրձին շինեցի:

Երեխան սկսեց դառնագին լալ և յետ պահանջել իր մագերը: Մայրս բարկացաւ ինձ վրայ՝

անողոք վարմունքիս համար, բայց անուշադիր մնացի դէպի այդ բողոքը:

Որոշել էի մի պատկեր ստեղծագործել, մի ժամում, մի ակնթարթում:

Կերակուրը պատրաստ դրած էր սեղանի վրայ ինձ համար: Մայրս անդադար յիշեցնում էր ճաշել, ինքս էլ քաղցած էի, բայց այդ վայրկեանին նկարելու ցանկութիւնս անյողթելի էր: Որոշել էի նկարել «սիրենոս»՝ կէսը աղջիկ, կէսը ձուկ: Այդ պատկերը տեսել էի դերձակ Մովսէս Ազարեանի տան դրսի պատի վրայ կըպցրած:

Մինչև այդ օրը ներկերի տեղ գործ էի ածում լեղակ, տորոն և թանաք. ուրեմն հասկանալի էր իմ հիացմունքը, ունենալով ձեռքիս տակ 12 կտոր իսկական ներկեր: Վերջապէս նկարեցի «սիրենոս» ցանկացածս գոյներով և հրճուեցի, տեսնելով թղթի վրայ գոյների այդքան հարստութիւնը: Մէջտեղը ներկայացրած էր ձուկ-աղջիկ, որ աջ ձեռքին ունէր ծաղիկների փունջ, իսկ ձախ ձեռքով բռնել էր առագաստաւոր նաւ: Տակի աջ անկիւնում նկարուած էր եկեղեցի:

Մոռացայ ասել, որ նկարելուս ժամանակ ուշադրութեամբ հետևում էր մօտ ութ տարեկան Միտիան (Դիմիտրի): Նա առհասարակ միշտ ներկայ էր լինում իմ «գեղարուեստական» աշխատանքների միջոցին: Այդ երեխան միակ արու-

զաւակն էր գաւառապետ իշխան էրաստ Չելօկաեվի, որ բնակուում էր հարևան տան մէջ: Այդ տունը պատկանում էր քեռուս:

Ես նստեցի ճաշելու, իսկ Միտիան դեռ էլի նայում էր նկարին ու ըստ երևոյթին զարմանում: Շտապում էի շուտ վերջացնել ճաշս, որպէսզի մի ուրիշ բան էլ նկարեմ: Գլխիս մէջ պտրտուում էր «հարսանիք» պատկերը, որ նոյնպէս տեսել էի դերձակ Մովսէսի տան պատի վրայ: Յանկարծ դուրս թաւ սենեակից Միտիան, ձեռքին ունենալով իմ վերջին ու թանկագին գործս: Բնականաբար ընկայ նրա ետեւից, բայց դժբաղդաբար ոտս ձուռեց և փռուեցի գետնին: Յափշտակողը հասաւ իր նպատակին: Մինչդեռ ես արորում էի ջարդուած ծընկներս, նա արգէն թռչկոտում էր իրանց պատըշգամբի վրայ ու ի սրտէ հրհռում: Ես չէի կարող գնալ նրանց տուն, որովհետեւ սաստիկ ամառում էի նրա քոյրերից, որոնք նոր էին սկսել հասունանալ: Հրաժարուեցի նոյնիսկ տանից դուրս գնալու, կարծելով որ Չելօկաեվի ամբողջ ընտանիքը Միտիայի հետ միացած ինձ վրայ են ծիծաղում:

Զարմանում էի, թէ ինչո՞ւ Միտիան այդ աստիճան անաստուած վարուեց հետս. չէ՞ որ միշտ յօժար կամքովս նուիրում էի իրան, այդ ապերախտին, իմ նկարած պատկերները: Ճաշս էլ հարած եղաւ, սիրտս էլ կոտրուեց, այնպէս

որ «հարսանիք» նկարելու տրամադրութիւնս միանգամայն խորտակուեց:

Մի ժամից յետոյ, ամեն ինչ մոռացած, վէզ էի խաղում տղերանց հետ:

— Աւալչո՛ւ, — չորս հատ վէզ գցելով արտասանեց Բլուքունը (կակագ):

— Ո՛չ մէկը... — ուրախանալով բացագանչեցի և, գցելով վէզերս, ասացի՝ ալչո՛ւ:

Չորսից երկու հատ ալչու նստեցին. ուրեմն աջողութիւնը իմ կողմն էր. և այդ բանը մեծ ուրախութիւն պատճառեց ինձ: Նախընթաց օրը 60-ի չափ վէզերս տանուլ էի տուել:

Մեզ խաղացողներին շրջապատել էին բազմաթիւ տղաներ և ուշադրութեամբ հետևում մեր խաղին:

Նրանցից ամեն մէկը ցանկանում էր, որ ես տանէի, որովհետեւ Բլուքունին ոչ ոք չէր սիրում: Նա այս բանն զգում էր և ի հարկէ չարանում:

— Կո-կո-կո՛րիք այստեղից, — գոռաց նա ամենափոքրի վրայ և ուժգին բոթեց:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, Բլուքուն, — բողբոջեց երեխան և իսկոյն սպառնաց. — սպասիր, եղբօրս ասեմ... երեկուայ նման մի լաւ դնքսի քեզ:

— Ծը-ճը-ճը...

Խեղճը ուզեց ասել «ճպոտո», բայց բան դուրս չեկաւ, ուստի կրկնապատիկ գայրացաւ: Այս հանգամանքը առիթ տուեց տղերանց բար-

ձրաձայն ծիծաղելու: Ես աշխատեցի դապել ինձ. մեղքս եկաւ:

Հէնց այդ միջոցին երևաց Գրիշկա անուշով ուստիկանական ստորին պաշտօնեան: Նա միշտ դանդաղաշարժ, այս անգամ արագաքայլ մօտենում էր մեզ: Մենք այդ բանի մէջ գուշակեցինք չար դիտաւորութիւն և բոլորեքեան միասին լռեցինք: Նա յաղթական հայեացքով մօտեցաւ մեզ և ոտի մի հարուածով ցրիւ տուեց մեր վէզերը: Յետոյ, նայելով երեսիս, հրամայեց, որ հետևեմ իրան: Ես նախ վախեցայ, գունատուեցի, սակայն չկորցրի ինձ: Առանց երկար մտածելու վազ տուեցի առաջ, փողոցի հակառակ ուղղութեամբ, յետոյ ծռելով ճանապարհս մտայ դարբին Ղահրամանի տան բակը: Այնտեղից թռչելով՝ ցանկապատի վրայից անցայ Բաղդասարի պարտէզը և այսպէս բակից բակ, պարտէզից պարտէզ անցնելով՝ գրգռեցի շներին, որոնք հաջելով հալածում էին ինձ: Անիրաւ ուստիկանը հետևում էր շարունակ ինձ: Ինչպէս ասուած է, նրա աչքը դուրս եկաւ, մի քանի անգամ գլորուեց եղինջների մէջ: Աստիճանաբար զայրանալով՝ յիշոցներ էր, որ ուղղում էր իմ հասցէին: Նա իր դագանակը, որ զէնքի տեղ էր ծառայում, պտրտեցնում էր օդի մէջ, բայց թփերն ու ծառերը արգելում էին իմ կողմ նետել: Երբ հասայ խուլ-Գիգօյի բակը, այնտեղ փոքր ինչ անաջող բան դուրս եկաւ. սակայն ոչ

ինձ համար, այլ Գրիշկայի: Ես քաջ ծանօթ լինելով այդ տեղի «ծակուծուկ»-երին՝ բարձրացայ կուտակուած գերանների ու քարերի վրայ և կամաց-կամաց անցայ միւս կողմը: Այսպէս ճանապարհս թէև երկարացաւ, սակայն ձեռնտու էր ինձ համար: Գրիշկան, օգտուելով հանգամանքից, ուզեց կարճ կտրել ճանապարհն ու գնաց ուղիղ գծով: Անպատճառ պէտք է հասնէր ու բռնէր ինձ, եթէ բաղդը չգաւաճանէր իրան: Այդ ուղիղ գիծն ունէր այնպիսի անյարմարութիւններ, որոնց մասին տեղեկութիւն չունէր նա: Հազիւ հասել էր մէջտեղը, երբ յանկարծ կանգ առաւ և իր չուխայի փէշերը բարձրացնելով՝ սկսեց բարձրաձայն ուշուց տալ թէ տանտիրոջ և թէ ինձ: Երբ շուռ եկայ, տեսնելու թէ որքան հեռու է ինձանից Գրիշկան, ողորմելին կանգնած էր խուլ-Գիգօյի տնակի առջև ու ոտները քամսում էր գետնին ու անդադար թքում: Վերջապէս դուրս եկայ փողոց, բոլորովին քրտինքի մէջ կորած: Այնտեղ հանդիպեցի երեսաների անագին բազմութեան, ուր կային և մի քանի հոգի տղամարդիկ: Բոլորեքեան աղաղակելով՝ «մի վախենար, մի վախենար»՝ դիմաւորեցին ինձ և համոզեցին չփախչել: Շուտով Գրիշկան էլ հեալով ու կաղալով մօտեցաւ մեզ:

— Գլխիդ տամ այս դագանակը, խուստ ձայնով գոռալով դիմեց ինձ:

Ահա այստեղ իշխան էրաստ Չելօկաեվը և նրա կին իշխանուհի Աննան օգտուել էին բարե-
յաջող հանգամանքից և մանրամասն պատմել
իրանց գիտցածը իմ մասին: Մեր ընտանեկան
հանգամանքները քաջ յայտնի էին նրանց: Չէին
խնայել ոչ մի բան՝ պատկառելի ծերունու հե-
տաքրքրութիւնը շարժելու: Նրբամիտ իշխանու-
հին նկարագրել էր ամենավառ գոյներով իմ ան-
շուք կենսագրութիւնը, այնպէս որ դուրս էր
քաշել Օրլօվսկու բերանից. «Интересно взгля-
нуть на этого мальчика» (հետաքրքրական է
տեսնել այդ աղային):

Թիֆլիզի նահանգապետ Օրլօվսկին ինչ-որ
գործի համար եկել էր Սդնախ ու իջեանել Չե-
լօկաեվի տանը:

Իշխանուհին անմիջապէս պատուիրել էր
պրիստաւին կանչել ինձ, իսկ նա հրամայել էր
ոստիկանական ստորին պաշտօնեայ Գրիշկային
խկոյն և եթ գտնել ինձ ու բերել:

Մեզ ուղեկցող բազմութեան մէջ նկատեցի
Յովհաննէս եղբօրս՝ այլայլուած դէմքով: Նա
զինուած էր քարերով, անկասկած Գրիշկային
զարկելու նպատակով: Նկատեցի նոյնպէս նրա-
նից փոքր եղբօրս՝ Քրիստափորին: Նա էլ բա-
րեր ունէր ձեռքին: Բայց ինչի նման էր այդ
միջոցին խեղճ երեխան: Արտասուքն ու խլինքը
իրար հետ խառնելով, քսմսել էր ամբողջ դէմքը:

— Կորէք այստեղից, — գոռաց պրիստաւը և

մօտենալով Գրիշկային՝ ականջին ասաց, — էշ, էշ,
էշ... աւագակ ես բռնել ի՞նչ է:

— Կծում է, — պատասխանեց նա, սրորելով
իր մարմինը:

— Սուտ է ասում, — բողոքեցի ես, — կմշտե-
ցի, որովհետև շորերս պատուեց:

Պրիստաւը հազիւ զսպեց ծիծաղը, և ես
զարմացայ, թէ ինչ կար այստեղ ծիծաղելու:

Իշխանուհին զիմաւորեց ինձ սանդուխի
վրայ ուրախ ու յուզուած դէմքով և ձեռքիցս
բռնելով տարաւ սենեակը, կարգի բերեց մա-
զերս ու շորերս և երկու խօսքով պատուիրեց
քաղաքավարի պատասխանել նահանգապետի հար-
ցերին: Ես բան չէի հասկանում, կարծես երազի
մէջ էի: Ականջներս այլուում էին, գլուխս թըմ-
րած էր:

Իշխանն ու իշխանուհին տարան ներկայա-
ցրին ինձ նահանգապետին:

Ժպտադէմ ծերունին ձեռքը քսելով գլխիս
հարցրեց.

— Դ՞նու ես նկարում այս բաները:

Սեղանի վրայ դարսած էին բացի «սիրենո-
սից» նաև իմ միւս նկարները:

— Այո, ես եմ նկարում:

— Ո՞րտեղ ես սովորել:

— Ո՞չ մի տեղ... միայն տեսել եմ դերձակ
Մովսէսի տան պատի վրայ այսպիսի պատկեր-
ներ:

Ի սրտէ ծիծաղեցին ամենքը, իսկ ես ամօթից հալուեցի:

— Молодець! Молодець! — եղաւ նահանգապետի վերջին խօսքը. — կերթամ Թիֆլիզ ու մի բան կրմտածեմ:

Տարան ինձ սեղանատուն և հիւրասիրեցին քաղցրեղէններով: Մինչև այդ օրը ոչ ոք ինձ այդպէս չէր փաղաքշել: Միտիայի ուրախութեանը չափ չկար. նա իրան հերոս էր զգում:

— Էգուց էլ կըգամ, կըփախցնեմ նկարդ, — ասաց նա:

Երբ այնտեղից դուրս եկայ, փողոցը դատարկ էր: Այդ բանը հիասթափեցրեց ինձ: Ես երևակայում էի տեսնել ահագին բաղմութիւն, որ պէտք է սպասէր իմ դուրս գալուն: Սլլադոան մօտ յանկարծ վեր թռաւ նստած տեղից քնաթաթախ Գրիշկան: Արդէն մութն էր:

— Բարի գիշեր, — ձեռքս սեղմելով ասաց նա, — Էգուց ճաշին քեզ մօտ եմ... Ինչքան լաւութիւն արեցի քեզ, իսկ դու հօրս հոգին ուշունց տուեցիր... Աշխարհը փուչ է... Իսկի բազդ չունեմ... Ոտներս կոտրտեցի ետևիցդ վազ տալով...

— Ե՛րբ յիշեցի հօրդ հոգին, — հարցրի ես:

— Բաղդ որ ունենայի, աղջիկ կըծնուէի...

Գնահ, լաւ, բարի գիշեր. Էգուց սպասիր ճաշին: Քայլերս ուղղեցի մեր տան կողմը: Պատի տակ մթութեան մէջ երևաց ինչ-որ մարդ:

— Ահա քո-քո-քո-քո վէզերը, — արտասանեց նա:

Բարի տղայ էր Բլուքունը:

— Քեզ եմ նուիրում, Սօսօ, — պատասխանեցի. — այսուհետև էլ չեմ խաղալու, գնալու եմ Թիֆլիզ:

— Վահ, վահ, վահ, վահ...

Այդ միջոցին հեռուից լսուեց մի կնոջ զիւ ձայն. «Գետինը մտնես, Սօսօ. ո՞ր. ջհանամն ես գնացել. ինչո՞ւ չես գալիս շնթոքս»:

Միւս օրը չգնացի հաշտարար դատաւորի գրասենեակը ծառայելու: Տանն էլ չէի ուզում բան շինել. նկարելու սովորական աշխոյժս անյայտացել էր: Մրտիս մէջ մի տեսակ դատարկութիւն էի զգում:

— Բարի լուս, հը՛մ, պատրաստ է, — լսուեց նազըբար Միխակի ձայնը:

— Պատրաստ չէ, — պատասխանեցի, — երեկոյեան եկ տար... Այսուհետև էլ չեմ գրելու, գնում եմ Թիֆլիզ:

Իւրաքանչիւր առաւօտ, ծառայութեան գնալուց առաջ, գրում էի մի հասցուցանակ (ВЫВѢСКА) և ստանում էի Միխակից 20 կոպէկ վարձատրութիւն: Թիթեղն ու ներկերը նա էր հասցնում ինձ: Նա մի տեսակ կապալառու էր, իսկ ես բանուոր:

— Է՛յ, անխախտ, խօ չես գժուել, ինչե՛ր ես դուրս տալիս, — գոռաց նա. — մարդիկ սպասում են, խոստացել եմ... խօսքս հազար թուման արժէ, գիտե՛ս:

—Ասացի՛ երեկոյեան, պրծաւ գնաց:

Միխակը տեսաւ, որ հանաք չեմ անում:
Մի բոպէ՛ ապուշ-ապուշ՝ երեսիս նայելուց յետոյ ձեռքը տարաւ իր գրպանն ու արտասանեց.

—Ահա՛ մի շայի էլ քեզ փէշքաշ, հը՛մ, հիմա ի՛նչ կասես, գրի՛ր պրծիր:

—Չեմ ոգոլում:

Մայրս բարկացաւ վրաս, յանդիմանեց ինձ և պատուիրեց, որ անմիջապէս գրեմ:

—Բարի լնւս,— լսուեց Գրիշկայի հաստ ձայնը,—բւրով, Միխակ. իմացա՛ր երեկուայ մաղալու համբաւը. ախար էս անպիտանին թիֆլիզ ենք զրկում:

—Դիփ չաքուչի տղի*) շան-որդութիւնն է, —աղաղակեց վրդովուած Միխակը և առանց շունչ առնելու աւելացրեց.— ձեռքս որ ընկնի, հոտած ձուի պէս գետնով կըտամ:

—Ինչպէս տեսնում եմ, դու լաւ լազաթի «հազիր» ես, իսկ ինձ չես հարցնում, որ ըողազս ցամաքել է... Խուլ ես, որ ասում եմ՝ թիֆլիզ ենք զրկում:

—Ես էլ էն եմ ասում,— շարունակեց Միխակը աստիճանաբար ձայնը բարձրացնելով,— որ դիփ էն հարածգաղէն է մեղաւոր... Բաս մարդ չեմ լինի, եթէ նրա խաղէյին Ալեքսուն չասեմ...

*) Ալեքսանդր Ստեփանեան (Սե-Սանդրո):

—Հաչի, օգն,— ծաղրեց Գրիշկան:

—Թէ չասեմ, շուն լինեմ... կասեմ որ ջամբազութիւն է անում ու էս խեղճ ողորմելուն էլ իր խելքի շինում... Ինչո՞ւ չեմ ասի. ծանօթ չեմ, թէ ի՛նչ է... Ո՞վ ներկեց անցեալ տարի նրա տան կտուրը...

—Դէ հիմա գնա՛ քնի,— յորդորելով ընդհատեց նրա խօսքը Գրիշկան.— մենք հարկաւոր գործ ունենք:

—Ես խօ էդ չեմ ասում... Մարդուն խօսք եմ տուել, որ այսօր առաւօտեան կանուխ պատրաստ կըլինի... խօսքիս տէրն եմ... Աւելի լաւ է մեռնեմ, քան թէ դատարկաձեռն այստեղից դուրս գնամ... Դէ շուտ արա, պրծիր:

Այս ասելով Միխակը նստեց թախտի վրայ և այնպիսի շարժումներ գործեց, կարծես յաւիտեան այդ դրութեան մէջ պէտք է մնայ:

—Ասացի՛ երեկոյեան, պատասխանեցի ես, աշխատելով սառնասիրտ ձեանալ:

—Որ սպանես, դատարկաձեռն չեմ գնալու, ամօթ է... մարդ եմ, գլխիս գտակ ունեմ:

—Հիմա չեմ կարող գրել,— յամառեցի ես, —դատարան էլ չեմ գնալու:

—Որ էդպէս է, շատ լաւ. դիփ մէկ է, երեկոյեան գրի՛ր. բայց Աստուած սիրես՝ չխաբես:

—Հիմա հայդէ,— արտասանեց Գրիշկան,— մենք հարկաւոր գործ ունենք:

Միխակը դանդաղութեամբ բարձրացաւ նրատած տեղից ու գնաց փնթփնթալով:

— Դիփ դուրումսող Չաքուչի տղի մեղն է. ես նրա հէրը կանիծեմ. թո՛ղ սպասի:

— Շատ փիս հարբած է անտէրը, — նկատեց Գրիշկան. — արա ի՞նչ ես տալու ինձ, քոյրիկս, որ տղիդ թիֆլիզ ենք ուղարկում:

Մայրս ձեռաց նախաճաշիկ պատրաստեց նրա համար և հրաւիրեց սեղանի: Գրիշկան նկատելով օղու ու գինու շշերը՝ առանձին կերպով հազաց: Մի քանի բաժակ խմելուց յետոյ լեզուն բաց արաւ.

— Կերթայ թիֆլիզ ու Աստուծով մարդ կըղառնայ... էստեղ որ մնայ, էս էշերի մէջ ինքն էլ էշ կըմնայ:

— Դեռ ի՞նչ գիտենք, Գրիշկա, — նկատեց մայրս, — շատ կարելի է ոչինչ էլ դուրս չգայ:

— Ի՞նչ ես ասում, է է... ա՛յ քեզ կնիկարմատու խելքը... Վճռած բան է, էստեղ չէի... ինձանից լաւ գիտե՞ս...

— Տայ Աստուած, — արտասանեց մայրս:

— Ի՞նչ հարկաւոր է երկար խօսել, թէ էդ մարդը, նահանգապետը, էլի, չտարաւ սրան ուղղակի թիֆլիզ, ես տանեմ, ես ինքս տանեմ... Հը՛մ, հիմա ի՞նչ կասես:

Գ

Անցել էլ մի տարի: Բայց այդ մի տարին ինձ թուաց անծայր ու անվերջ:

Գարնան տխուր օրերից մինն էր: Անձրևը լուռ ու անձայն բարակ մաղում էր: Թանձր մառախուղը ամբողջովին ծածկել էր քաղաքը, այնպէս որ քսան քայլից դէնը բան չէր երևում: Փողոցում կանգնած էր պօստային մի սայլակ (перекладная)՝ երեք ձի լծած: Կառապանը իր անձոռնի վերարկուով ու կրկնապատիկ աւելի անձոռնի կօշիկներով յաղթական կերպով քայլում էր յետ ու առաջ: Չիբուխը ատամների մէջ պահած ու ձեռքերը մէջքի վրայ դարսած՝ նայում էր ցած ու ժամանակ առժամանակ թուք էր արձակում շրթունքների անկիւնի միջից: Մեծ մագոտ գդակը իջել էր մինչև յօնքերն ու ծալել ականջները: Չիբուխի մէկը յանկարծ անհանգիստ ձայներ արձակեց, առջևի ոտը մի քանի անգամ գետնին դոփելով:

— Էշակ, — յանդիմանեց կառապանը, խիստ հայեացք նետելով ձիու աչքերին:

Իշխան էրաստ Չելօկաեվի համար էր սայլակը: Նա գնում էր թիֆլիզ ու ինձ էլ էր տանում:

Նահանգապետ Օրլովսկու գնալուց յետոյ՝ ամեն օր յոյս ունէի ուրախալի լուր ստանալ, սակայն շաբաթներ, նոյնիսկ ամիսներ իրար ե-

տեղից գլորուելով անցան, բայց ոչ մի տեղեկութիւն չստացուեց:

Կամսար Տէր-Դաւթեանը, որ այն ժամանակ ուսուցչի պաշտօն էր վարում հայոց ծխական երկսեռ ուսումնարանում, շարունակ դրդում էր ինձ խնդիրք ուղարկել Օրլովսկուն ու յիշեցնել իր տուած խոստումը:

— Գնա, սովորիր, որ մարդ դառնաս, մատով ցոյց տալու մարդ դառնաս, — կրկնում էր ինձ ամեն անգամ հանդիպելիս:

Նա այդ նախադասութիւնը միշտ գործ էր արժում, անշուշտ իմ մէջ ուսման ցանկութիւնը վառ պահելու նպատակով:

Իմ այն ընդհանրական աշոգութիւնը շուտով մոռացուեց ամենքից: Միայն ես էի, որ չէի մոռանում ու զիշեր-ցերեկ ողբում, ինչպէս թանկագին կորուստ: Շարունակում էի սովորական հին աշխատանքս: Հաշտուել էի վիճակիս հետ: Բոլորից լաւ՝ ներկարար Միխակն էր ըմբռնել գործի հանգամանքը: Նա այժմ ամեն մի ցուցանակի գինը իջեցրել էր 15 կոպէկի, որ ինձ համար բացի նիւթական վնասից նաև վիրաւորական էր:

Վերջապէս լսեցի Տէր-Դաւթեանի խորհուրդն ու խնդիրք ուղարկեցի Օրլովսկուն: Պատասխանը թէ չուշացաւ և թէ դրական էր: Պարգուեց, որ ընդունուած եմ ձրի՝ Թիֆլիզի նկարչական ուսումնարանում, որ հիմնուել էր մօտ

երեք տարի առաջ մեծ իշխան Միխայիլ Նիկոլաեվիչի հովանաւորութեան տակ:

Նոր յոյսեր, նոր անուշ երագներ, փայլուն ապագայ... Բայց, աւանդ, երկար չտևեց այդ բանը: Մի քանի օրից յետոյ հեռագիր ստացուեց, որ նահանգապետ Օրլովսկին յանկարծամահ է եղել:

Միանգամայն խորտակուեցին իմ ֆանտաստիկ ամրոցները: Ո՞րտեղ գնայի, ո՞ւմ դիմէի, ո՞վ պէտք է հոգար իմ ապրուստի մասին անձանօթ քաղաքում, եթէ գնայի: Այդպիսի անաշոգ հանգամանքները վերջնականապէս ընկճեցին ինձ:

Մի օր՝ էլ լուր տարածուեց, որ իշխան Չելոկաեվին տեղափոխում են Թիֆլիզ՝ դարձեալ գաւառապետի պաշտօնով: Այդ լուրը մի քանի օրով հարուած էր ինձ համար, որովհետև նրա գնալով՝ ես պէտք է զրկուէի այն միակ հովանաւորութիւնից, որ այսպէս թէ այնպէս վայելում էի թէ խօսքով և թէ գործով:

— Բարի երեկոյ... Հը՛մ, որտեղ է էն փուշը, — լսուեց Գրիշկայի յանդուգն ձայնը, — որ ջնանամ է գնացել էս մութ գիշերին:

Այդ միջոցին նստած էի ընկերներեւ հետ Թոնրի վրայ ու հեքեաթներ էի լսում:

— Ի՞նչ կայ, Գրիշկա, հարցրեց վարկեցած մայրս, — ի՞նչ է պատահել:

— Ի՞նչ պէտք է պատահի, ժամանակ չէ:

— Ձեմ հատկանում... »

— Աստուծ եմ, էլի, հասկացիր: Պատրաստ է:

— Ո՞վ, ի՞նչ:

— Փիլիք... սնց թէ՛ սփ, ի՞նչ: դու խօս չե՞ս խլացել:

— Աստուծ է վկայ, չեմ հասկանում:

— Էէ, բաս խուլ ե՞ս, որ ասում եմ, — զայրանալով դիմեց Գրիշկան. — ա՛ կնիկ, պատրաստ է տղեդ, որ վաղը, առաւօտեան կանուխ ուղարկելու ենք Թիֆլիզ:

Լսելով այդ բանը իսկոյն ցած թռայ թոնրի վրայից ու վազեցի դէպի տուն: Թոնրի տախտակների հետ միասին ցած գլորուեցին նրստողները ճիչ ու աղաղակ բարձրացնելով:

Մայրս, չգիտեմ՝ ուրախութիւնից թէ զարմանքից, կարմրել էր ու ապշած մնացել: Բայց կրկնապատիկ ապշել էր ես, այնպէս որ ո՛չ կարողանում էի խօսել, ո՛չ մտածել:

Գ

— Է՛րբիհամ, — դրսից լսուեց Գրիշկայի ձայնը, — դեռ էլի քնած են... վէր կաց, էյ, մի՛ ննդռիկ. իշխանը քեզ է սպասում:

Ես ոչ թէ քնած էի, այլ ամբողջ գիշերը աչքս չէի խփել:

— Ո՞վ է քնած, — բացագանչեցի ես, դուրս վազելով սենեակից:

— Դէ շատ մի խօսիր, մի ստաքան արագ դո՛ւրս

բեր, փորս ցաւում է... Լաւ ճածի արագ ունէք:

Մյգ հոգսը մայրս քաշեց, իսկ ես վազեցի փողոց, ուր սայլակը կանգնած էր: Նրա շուրջը աստիճանաբար հաւաքւում էր թէ՛ երեխաների և թէ՛ անգործ մարդկանց բազմութիւն: Նրանք ամենքը նայում էին ինձ վրայ և անշուշտ նախանձում: Մեծերը խօսում էին հետս ու խրատում, գլխաւորապէս զգուշացնելով ինձ Քոի մէջ լողանալուց: Օրուայ հերոս էի:

Մեր հարեան պառաւ Մարիամը արագաքայլ մօտեցաւ ու մի գոյգ դեղին մեղրամոմ ձեռքիս դնելով, խօսք առաւ ինձանից, մինչև անգամ երգուեցրեց, որ Թէլէթի սուրբ Գէորգ եկեղեցու բեմի վրայ վառեմ: Իմ ազգական Չաքուչի տղան պարտաւորեցրեց ինձ Թիֆլիզ հասնելուս պէս գնամ ցիրկ ու տեղեկացնեմ իրան, թէ ալքօբատ Վասիլին այնտեղ է խողում թէ՛ ոչ: Բլուքունը խտտեց ինձ ու ահանջիս երկար ժամանակ կաշեւելով մի կերպ կարողացաւ հարցնել, թէ վէգերս թողնելու եմ այստեղ թէ՛ տանում եմ հետս: Թուլակազմ ու հիւանդոտ Միխօն, որին մի օր առաջ շատ փիս ջարդել էի, խնդրեց հաշտուել:

Վրայ հասաւ և ներկարար Միխակը: Նա իմանալով գործի հանգամանքը, յօնքերը կիտեց ու այն աստիճան կարմրեց ու կապտեց, որ կարծես իսկոյն շնչարգելութիւնից պէտք է խեղդուի:

— Գիտե՞ս, Միխակ, — խօսեցի ես, — վերջին

ցուցանակը չկարողացայ աւարտել... Մնաս բարեաւ, գնում եմ Թիֆլիզ:

—Ուզո՞ւմ ես, այսուհետեւ ես գրեմ, Միխակ,—դիմեց Չաքուչի տղէն հեգնական ժպիտով,—այնպիսի ցուցանակներ գրեմ, որ աշխարհքը քեզ վրայ ծիծաղի:

Միխակը զայրացաւ ու բարձրացրեց իր ձեռնափայտը:

—Արդի բողոժօ (բրդոց), չե՞ս կամենում, —հարցրեց կծու կերպով Չաքուչի տղէն, թաքնուելով սայլակի քամակին:

Ներկայ գտնուողները միաձայն քրքիջ բարձրացրին:

Միխակը ամենալիտի յիշոցներ արձակելով բոլորի հասցէին՝ արագաքայլ դիմեց դէպի մեր տուն: Այնտեղ մօրս հետ կողեւուց յետոյ, դուրս եկաւ չաւարտած ցուցանակը ձեռքին:

—Այդ ի՞նչ է գրած, տնայնաւոր,—ծիծաղելով հարցրեց գաւառապետի գրագիրը:

Նախընթաց օրը մօրս ստիպմամբ սկսեցի գրել ցուցանակը, բայց երկու ասու գնելուց յետոյ թողեցի: Գրեցի միմիայն Այ, այն ինչ պէտք է գրէի ԱՄՃԱՅ:

Յովհաննէս եզրայրս, որ միշտ փափագում էր սովորել ցուցանակ գրել, օգտուեց հանդամանքից: Մինչդեռ ես դրադուած էի Թիֆլիզ մեկնելու գործով, նա վերցնելով վրձինն ու ներ-

կերը՝ մտադրուեց լրացնել կիծատ բառը: Իրժեպողբարար անաչոզ եղաւ նրա առաջին փորձը: Նա գրել էր ԱՄՃԱՅ:

Գրիշկան իմ իրերը բերելով ուղղակի հրամայեց կառնականին իսկոյն ևեթ պինդ կապել սայլակի քամակին: Չելօկեվի պայտասակները նոյնպէս դուրս բերեցին ու տեղաւորեցին նստարանի տակ:

—Ամեն բան պատրաստ է, լսուեց պրիտաւի խիտ ձայնը:

—Պատրաստ է,—պատասխանեց կառնականը, մերկացնելով կեղտոտ գլուխը:

Բարձեալ մի քանի բոպէ և անա դուրս եկաւ իշխանը, ետինջին ուսերին:

—Հեռացէք,—արտասանեց Գրիշկան, թևերը տարածելով:

Երեսուները այս ու այն կողմ վազեցին, ինչ ես, ընդհակառակը՝ մօտեցայ սայլակին:

—Շտապիր, մնաս բարով ասա ամենքին ու բարձրացիր նստիր,—պատուիրեցին ձեռնակով:

Մայրս արտասուալից աչքերով մօտեցաւ իշխանին, անկասկած իմ մասին մի քանի բան խնդրելու:

—Աւելորդ է խնդրել, քոյրիկս,—խօսեց գաւառապետը. անհոգ կաց, ամեն բան կարգին կըլլինի:

Մայրս գրկեց ինձ ու սկսեց հեկեկալ:

Ինձ թուաց, որ նա այդ բոպէին յիշեց անբաղդ հօրս, որ այդ օրից մօտ երկու տարի ա-

ուսջ զնացել էր Պարսկաստան, որտեղից այլևս չվերադարձաւ: Խեղճը հիւանդացել էր Թէհրանում և ճանապարհուել էր դէպի տուն, իր ընտանիքը վերջին անգամ տեսնելու նպատակով, բայց քաղաքից քիչ հեռանալով՝ հոգին աւանդել էր պարսկական մի փոքրիկ գիւղում:

Բարակ փոշու նման անձրևը գալիս էր դարձեալ: Ձիերի մէջքի վրայից գոլորշի էր բարձրանում: Ձելօկաեվը լաւ փաթաթուեց իր ետփնջու մէջ ու նստեց սայլակում, խոտով ծածկուած նստարանի վրայ ու ինձ էլ կողքին նըստացրեց: Կառապանը սանձերը թափահարեց, մտրակը պտրտեցրեց օդի մէջ, ու սայլակը տեղից շարժուեց:

Եւ այսպէս, իշխան էրաստ Ձելօկաեվը տարաւ ինձ Թիֆլիզ, ուր մի ամիս առաջ ուղարկել էր իր ընտանիքը, և այնտեղ իր տան մէջ պահեց ինձ ամբողջ մի տարի, որպէս իր հարազատ որդուն:

1911, Թիֆլիզ

Վ Ե Ր Զ




Յ Ա Ն Կ

	Երես
Մանուկներ և ծաղիկներ	3
Ձեռնածու Արէլը	12
Ազնուականի յիշատակաբանից	26
Հիասթափումն	36
Ս. Ղազարի կղզին 1884 թուին	54
Մի համբոյր	61
Մի քանի օր Ղարաբաղում	76
Սուլէյման-խան Շեքինսկի	99
Իշխան Վաչնաձէի Ագարակում	107
Արօ	123
Մի հարսանիք Թելաւում	135
Տիրացու Սրափօ	144
Սոստովանութիւն	153
Մի էջ իմ յուշատետրից	163







Վաճառում է Թիֆլիսի բոլոր գրա-
խանութներում

Գինն է 50 Կ.

Հեղինակի հասցեն՝ Тифлисъ, Измайловская ул.,
с. д. Георг. Зах. Башинджагіану

ՀՀ Ազգային գրադարան



NL03322

23770

891.99

f-28